



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



148

91(075)  
U-13

1910



լր. 40к.

# ԱՅԻՆԱՐՅԱԳՐՈՒԹԵԱՆ

91(075)

## ԴԱՍԱԳԻՐՔ

Ա - 13

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻ

ԸՆԻՑ, ԸՓՐԻԿՑ, ԸՄԵՐԻԿՑ ԵՒ ԸԽՈՏԲԵԼԻՑ

(5-րդ տարրայ դասընթաց)

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց

ԱՐՑԵԼԻ ԱՐԵՎԵՆ

(ըստ Իվանովի, Կրուժերի եւ ուր.)



Բաժ. ՊՐՕԴՐԵՍՍ. տպար. Դվորց. փ. ա. Վ. Բաց Աղնուականների

1910



# ԱՍԻԱ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԵՐԸՆՔՐՈՒԹԻՒՆ

### 1. ԱՍԻԱՅԻ ԴԻԲՈՔԸ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Ասիան շատ մօտ է գտնուում մնացած աշխարհամասերին: Ասիան եւրոպային այնքան մօտ է, կպած, որ կարծէք եւրոպան Ասիայի թերակղզին լինի: Այդ երկու աշխարհամասերի մէջ եղած սահմաններն են համարւում՝ Ռւրալեան լեռները, Ռւրալ գետը և կովկասեան լեռնաշղթան:

Աֆրիկայի հետ Ասիան միացած է Սուէզի պարանոցով: Այդ պարանոցի միջով փորած է Սուէզի ջրանցքը: Աւարալիայի և Ասիայի միջև տարածւում է Մալայեան արշիպելագը: Հիւսիսային Ամերիկայից Ասիան բաժանւած է Բերինգեան նեղուցով, որի լայնութիւնն է մօտ 100 վերստ: Զմեռը, երբ այդ նեղուցը ծածկւում է սառոյցով, Ասիան միանում է Ամերիկայի հետ կարծէք սառցէ կամուրջով:

Ասիան ամենամեծ աշխարհամասն է: Նա  $4\frac{1}{2}$  անգամ մեծ է եւրոպայից: Ասիայի արևմտեան ծայրից մինչև արևելեան ծայրը, ամենաերկայն մասում, մօտ 11 հազար վերստ է. խակ հիւսիսային ծայրից մինչև հարաւային ծայրը՝  $8\frac{1}{2}$  հազար վերստ: Ասիայի մակերևոյթը բռնում է մօտաւորապէս 40 միլիոն քառակուսի վերստ տարածութիւն:

Ասիայի ամենահիւսիսային ծայրն է Չելլիալիին հրւանդանը՝ 78 աստիճան հիւսիսային լայնութեան տակ, ամենահարաւային ծայրն է Բուրու հրւանդանը՝ 1 աստիճան հիւսիսային լայնութեան տակ, ամենաարևմտեան ծայրն է Բարսա հրւանդանը՝ 43 աստիճան արևելեան երկայնութեան տակ, իսկ ամենաարևելեան ծայրը՝ Դեմնեւ հրւանդանը՝ 208 աստիճան արևելեան երկայնութեան տակ:

## 2. ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ասիայի ափերը շատ են կտրտւած ծովերով և ծոցերով:

Արևելեան կողմից Ասիայի ափերը Մեծ կամ Խաղահովիանոսն է ողողում, գոյացնելով մի շարք ծովեր. ինչպէս են՝ Բերինգեան, Ախոտեան, Եապոնական, Դեղին, Արեւելեան-Չինական եւ Հարաւային-Չինական ծովերը:

Հարաւում՝ Հնդկական ովկիանոսն է ողողում Ասիայի ափերը, զարձեալ գոյացնելով ծովեր և մեծ ծոցեր: Նշանաւոր են՝ Բենգալեան, Արաքական, Փարսից ծովերը և Կարմիր ծովը:

Արևմտեան կողմից Ասիայի ափերը ողողում են՝ Աշխանտեան ովկիանոսի մասեր կազմող Սեւ եւ Միջերկրական ծովերը:

Հիւսիսում Ասիայի ափերը ողողում են Հիասային Սառուցեալ ովկիանոսով, որ գոյացնում է միայն մի ծով՝ Կարայի ծովը:

Ասիայի ափերի շատ կտրտելուց է, որ առաջ են եկել բազմաթիւ կղզիներ և թերակղզիներ. սրանք միասին կազմում են Ասիայի մակերեսոյթի  $\frac{1}{4}$  մասը: Ամենամեծ թերակղզիները գտնուում են հարաւում. դրանք են՝ Արարիա, Հնդկաչին, Հնդկաստան: Դրանցից շատ աւելի փոքր են՝ Փոքր Ասիա, Կորեա, և Կամչատկա թերակղզիները:

Ասիայի կղզիների մեծ մասը ցամաքային ծագում ունի: Այդ կղզիները գտնուում են գլխաւորապէս հարաւում, մայր ցամաքից ոչ-հեռու: Նշանաւոր են՝ Մալայեան արժապելազը, Սախային, Եապոնական եւ Ճյուռն կղզիները:

Ասիայի կղզիները, բոլորը միասին վերցրած, ունեն մօտաւորապէս այնշափ տարածութիւն, որչափ միայն Արարիա թերակղզին:

## 3. ԱՄԻԱՅԻ ՀԵՏԱԶՕՏՈՒՄԸ

Եւրոպային Ասիան աւելի մօտ է գտնուում, քան մի ուրիշ աշխարհամաս: Փոքր Ասիան և Միջերկրական ծովի մօտերքը տարածւող

ասիական երկրները ամենահին ժամանակներից ծանօթ էին եւրոպացիներին: Հնուց ծանօթ էին սրանց նաև Արաբիան և Հնդկաստանը, որոնց հետ առևտրական յարարերութիւն ունէին: Սակայն Ասիայի մնացած տարածութեան մասին եւրոպացիները ոչ մի գաղափար չունէին նոյնիսկ 12-րդ դարում Քրիստոսից յետոյ:

13-րդ դարի վերջում Մ'արկօ Պօլօ անունով իտալացի (Վենետիկ քաղաքից) յայտնի վաճառական-ճանապարհորդը իր հօր և հօրեղոր հետ կատարեց մի ուղևորութիւն Միջին Ասիայով դէպի Զինաստան: Այդեղ ապրեց նա 17 տարի և յետոյ ծովով վերադարձաւ Եւրոպա՝ Հնդկաշինի և Հնդկաստանի ափերի մօտով: Բուն ճանապարհորդութիւնը, զնալ-գալու ժամանակամիջոցը, տեսեց 7 տարի:

Մարկօ Պօլօն իր ճանապարհորդութիւնը նկարագրեց այնպէս կենդանի և հետաքրքիր կերպով, որ շատ եւրոպացիների մէջ ցանկութիւն առաջ եկաւ աւելի մօտիկից և լաւ ճանաչելու այն հարուստ, փարթամ երկրները, որ տեսել էր Մարկօ Պօլօն: Սակայն ամենքին էլ վախեցնում էին թէ ցամաքային և թէ ծովային ճանապարհների դժւարութիւնները\*)։ Գտնել ծովային ճանապարհ դէպի Հնդկաստան, —ահա այն հարցը, որ սկսեց զբաղեցնել եւրոպացի ծովագնացներին:

15-րդ դարի վերջում Կոլումբոսը (գարձեալ իտալացի), համոզւած լինելով որ երկիրը գունդի ձեւ ունի, ճանապարհ ընկաւ եւրոպացից Հնդկաստան՝ Ալյանտեան ովկիանոսով միշտ դէպի արևմուտք զիմելով: Իր ճանապարհին Կոլումբոսը գտաւ Ամերիկան, բայց Հնդկաստան չհասաւ:

Համարեա Կոլումբոսի հետ միաժամանակ՝ Ալասկօ-դէ-Դիամա անունով պորտուգալացի ծովագնացը ճանապարհ ընկաւ դէպի Հնդկաստան՝ Աֆրիկայի շուրջը պտտելով: Այդ ճանապարհորդութիւնը անցաւ յաջող, —գտնեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան:

Շուտով իսպանացի Մագելլանը գտաւ մի երկրորդ ճանապարհ և դէպի Հնդկաստան: Աշխարհի շուրջը կատարելիք իր ճանապարհորդութեան միջոցին Մագելլանը անցաւ Ամերիկայի հարաւով և գտաւ դէպի Ասիա տանող ճանապարհը՝ արևելքից: Այս ճանապարհորդութեան միջոցին գտնւեցին Ֆիլիպպինեան կղզիները: Սրանից յետոյ արդէն եւրոպացիները սկսեցին աւելի շուտ-շուտ ծովով ճանապարհորդել դէպի Հարաւային և Արևելիան Ասիայի ափերը: Պորտուգալացիները և իսպանացիները բազմաթիւ գաղութիւններ սկսեցին հիմնել Հնդկաստանում և Հնդկական արշակելագիր կղզիներում: 17-րդ դարում աւելի զօրացան, գերիշխող դարձան անգլիացիները և հոլանդացիները, որոնք իսպա-

\*) Սուէզի ջրանցքը այն ժամանակ դեռ չկար, իսկ Աֆրիկայի շուրջը դեռ ոչ ոք ծովով չէր անցել.

Նացիների և պորտուգալացիների ձեռքից շատ դադթավայրեր խլեցին: Քանի աւելի էին շատամում եւրոպացիների կալւածները Ասիայում, քանի աւելի էր զարգանում առևտուրը, այնչափ էլ աւելի ու աւելի էին ծանօթանում եւրոպացիները Ասիայի զանազան, գլխաւորապէս ծովափնեայ մասերի հետ:

16-րդ դարում ոռւս կազակները կտրելով անցան Ուրալեան լեռները և գտան Սիբիրը, որի մասին մինչև այն ժամանակ եւրոպացիները ամենաին բան չգիտէին: Տիրելով սկզբում արևմտեան Սիբիրին՝ կազակները աւելի ու աւելի շարժւեցին դէպի արևելք և հասան Մեծ Ռիքանոսի ափերին: 1648 թւականին կազակ Սևմեծ Դիմենը գտաւ Ասիայի ամենաարևելեան հրանդանը, որն և այժմ նրա անունով է կոչւում:

Սակայն Դիմենի գիւտը երկար ժամանակ անծանօթ էր մնում Եւրոպային: Ռուսաց Պետրոս Մեծ կայսրը գեռ չղիտէր՝ Ասիան միացած է Ամերիկայի հետ, թէ բաժանում է նրանից նեղուցով: Ահա այս հարցի լուծումը Պետրոս Մեծը յանձնաբարեց ոռւսական նաւատորմի նաւապետ Բերինգին: Հարկաւոր պատրաստութիւնները տեսնելով Պետրուրուգում, Բերինգը ցամաքային ճանապարհով դէպի արևելք դիմեց: Մի քանի տարուց յետոյ նա հասաւ կամչատկա . այնտեղ նա մի նաւ շինց, որով և ծով դուրս եկաւ, ուսումնասիրեց այն ծովը և նեղուցը, որոնք այժմ նրա անունով (Բերինգեան) են կոչւում:

Այդ ժամանակներում նաև յաջողւեց Զելլիակին անունով մի ոռւս ճանապարհորդի՝ ցամաքային ճանապարհով հասնել մինչև Ասիայի ամենահիւսիսային հրանդանը, որն և այժմ նրա անունով է կոչւում:

Այսպէս ուրեմն՝ եւրոպացիներին ամենից առաջ յայտնի գարձաւ Արևմտեան Ասիան, ապա՝ Հարաւային, Արևելեան և Հիւսիսային Ասիան: Դեռ անծանօթ էր մնում կենարոնական Ասիան: Մարկօ Պօլօ-ից յետոյ երկար ժամանակ եւրոպացիներից ոչ ոք չէր ճանապարհորդել այն կողմերը: Միայն 19-րդ դարի կէսերում ոռւս ճանապարհորդները հիւսիսից, իսկ անգլիացի ճանապարհորդները հարաւեց սկսեցին մուտք գործել կենարոնական Ասիա և ուսումնասիրել այն: Մեծ ծառայութիւններ է մատուցել այդ քանում ոռւս ճանապարհորդ Պրժեւալսկին, որ չորս անգամ է ճանապարհորդել կենարոնական Ասիա: Նա ձեռնարկեց նաև 5-րդ ճանապարհորդութեան, սակայն նրա ոյժերը սպառւել էին արդէն, նա մեռաւ Տեան-Շան սարի սարուտում:

Ներկայումս էլ կան Ասիայում այնպիսի վայրեր, որտեղ դեռ ևս չեն եղել եւրոպացի ճանապարհորդներ,—Արարիայի և Իրանի բարձրաւանդակի խորքերը, Տիրեսի, Հնդկաշինի մի քանի մասերը, նաև մեծ կղզիների խորքերը:

#### 4. ԱՍԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ասիան իր մակերևոյթի կազմութեամբ ամենաբարձրն է հինգ աշխարհամասերի մէջ: Ասիայում են գտնւում երկրագնդի ամենաբարձր սարերը և բարձրաւանդակները: Այստեղ են գտնւում նաև ամենալարձակ հարթութիւնները: Հարթութիւնները կազմում են Ասիայի ամբողջ մակերևոյթի ընդամենը  $\frac{1}{4}$  մասը, իսկ բարձրութիւնները՝  $\frac{3}{4}$  մասը: Բարձրութիւնները տարածւում են մայր ցամաքի միջին մասում, որոնցից գլխաւորները բաղկացած են լեռնաշղթաներից: Լեռնաշղթաների մէջ նկատելի է որոշ կանոնաւորութիւն. այսինքն՝ ամեն մի շղթայ աղեղի նմանութիւն ունի, որի դուրս ցցւած մասը նայում է կամ դէպի Մեծ, կամ դէպի Հնդկական ովկիանոսը:

Դէպի Մեծ ովկիանոսն են նայում՝ Բայկալնան, Խարյոնվեան, Մտանովեան, Խինհան, Չինական լեռները և այլն:

Դուրս ցցւած մասով դէպի հարաւ (Հնդկական Ովկիանոս) են նայում՝ Սայանեան, Ալտայեան, Տեան-Շան, Կուչն-Լոն, Կարակորում, Հիմալայեան, Հինդուկուշ, Հարաային-Իրանի լեռները, և այլն: Ասիայի և Եւրոպայի մէջ է ընկնում Կովկասիան լեռնաշղթան:

Ամենից բարձր են (ոչ միայն Ասիայում, այլ նաև ամբողջ երկրագնդի վրայ) Հիմալայեան և Կարակորում սարերը: Հիմալայեան սարերի ամենաբարձր գագաթը՝ Էւերեստ, համարեա 8 $\frac{1}{2}$  վերստ բարձրութիւն ունի ովկիանոսի մակերևոյթից. իսկ Կարակորումի գագաթը՝ Գողվին-Օստէն, 8 վերստից բարձր է:

Հիմալայեան և Կարակորում սարերը ծածկւած են յաւիտենական ձիւնով և սառցագաշերով\*): Զեան սահմանը գըտնըւում է 4 $\frac{1}{2}$  վերստ բարձրութեան վրայ: Մնացած սարերից շատերի գագաթներն եւ 7 վերստ բարձրութեան են հասնում և մշտապէս ձիւնով են ծածկւած:

\*.) Դրանից է առաջ եկել և «Հիմալայ» անունը, որ նշանակում է «ձեան հայրենիք»:

Առնաշղթաների մեծ կուտակում ենք տեսնում մենք  
Պամիր կոչւած լեռնային երկրում, որտեղ իրար են կպչում  
Կարակորում, Կուէն-Լուն, Տեան-Շան և Հինդուկուշ սարերը:

Այսպէս է նաև Տիրեալ բարձրաւանդակը (սարահարթը): Նրա  
սահմաններն են—հարաւից՝ Հիմալայեան, հիւսիսից՝ Կուէն-Լուն  
սարերը: Այդ բարձրաւանդակի կենտրոնական մասը կտրտւած  
է բազմաթիւ լեռնաշղթաներով, որոնք Հիմալայեան սարերին  
գուղահեռական են ձգւած: Տիրեալ ամենաբարձր սարահարթն  
է երկրագնդի վրայ. Նրա միջի բարձրութիւնը 4 վերստից ա-  
ւելի է:

Արևմտեան Ասիայում հշանաւոր են՝ Հայաստանի, Փոքր  
Ասիայի և Իրանի բարձրաւանդակները: Մրանք իրենց կազմու-  
թեամբ նման են արևելեան Ասիայի սարահարթներին, միայն թէ  
նրանցից աւելի ցածր են:

Նշանաւոր են նաև Դեկանի (Հնդկաստանում) և Արա-  
բիայի բարձրաւանդակները. սրանք իրենց կազմութեամբ տար-  
բերում են վերոյիշեալ սարահարթներից. հողակոշտերից են  
բաղկացած և նման են Աֆրիկայի սարահարթներին:

Ասիայի դաշտավայրերը տարածւում են մայր ցամա-  
քի ծայրերում. ամենամեծ դաշտավայրը գտնւում է հիւսիս-  
արևմուտաքում: Նրա հիւսիսային մասը կոչւում է Սիրիոի դաշ-  
տավայր և ընկած է դէպի Հիւս. Սառուցեալ ովկիանոսը Հա-  
րաւային մասը կոչւում է Արայօ-Կասպիական կամ Թուրանի  
դաշտավայր և ընկած է դէպի Կասպից ծովը: Այդ դաշտավայրը  
ծովի մօտերքը տեղ-տեղ ովկիանոսի մակերեսոյթից էլ ցածր է:

Արայօ-Կասպիական դաշտավայրի տեղը առաջ ծով է եղել,  
տարածւած Ասիայի և Եւրոպայի մէջ: Այդ ծովի մնացորդներն  
են Կասպից և Արալեան լճերը: Կասպից լիճը կամ ծովը ժա-  
մանակի ընթացքում չափազանց նատել է. այսպէս որ նա այ-  
ժը ովկիանոսի մակերեսոյթից նոյն իսկ 10 սամէնով ցածր է:

Ասիայի մնացած դաշտավայրերը մեծ չեն: Նրանք առաջ  
ծովերի ծոցեր են եղել: Մեծ գետերը շրջակայ սարերից դա-  
րերի ընթացքում հող, աւազ, տիղմ են քշել-բերել և լցըել ծո-  
ցերը ու նրանցից այդպիսով դաշտավայրեր գոյացրել: Այսպէս

են օրինակ՝ Մըջագետքի գաշտավայրը, որ գոյացրել են Տիգրիս և Եփրատ գետերը, Հնդկաստանի գաշտավայրը, որ գոյացրել են Խոզոս, Գանդէս և Բրահմապուտրա գետերը, Չինական գաշտավայրը, որ գոյացրել է Դեղին գետը:

Ասիայի կղզիները մեծ մասով ցամաքային ծագում ունեն. ուստի նրանց մակերեսոյթի կազմութիւնը նոյնն է, ինչ որ մայր ցամաքի՝ նրանց մօտ գտնւող մասերինը. Այսպէս՝ Ցէյլոն կղզին նոյնպիսի հողակոշտ մակերեսոյթ ունի, ինչ որ նրա մօտ գտնւող Դեկանը. Ասիայի արևելեան ծայրերին մօտ գրանուող Եապոնական և այլ կղզիները ներկայացնում են լեռնաշղթաներ, ձգւած ովկիանոսի մէջ:

### 5. ԿԼԻՄԱՆ

Ասիան, չհաշւած նրա ամենահարաւային կղզիները, ամբողջապէս հիւսիսային կիսագնդում է գտնւում:

Նա շատ մեծ է, մակերեսոյթի կազմութիւնն էլ բազմազան է: Այս պատճառով Ասիայի կլիման ևս բազմազան է, տարբեր մասեր միանգամայն տարբեր կլիմայ ունեն: Ասիայի  $\frac{1}{5}$  մասը գտնւում է ցուրտ գօտում,  $\frac{1}{5}$ -ը՝ տաք գօտում, իսկ ամենամեծ մասը,  $\frac{3}{5}$ -ը, գտնւում է բարեխառն գօտում:

Նայելով կլիմային՝ Ասիան բաժանւում է 5 շրջանի. 1) Հիւսիսային Ասիա, 2) Կենտրոնական Ասիա, 3) Հարաւային Ասիա, 4) Արևելեան Ասիա և 5) Արևմտեան Ասիա,—Պամիրից արևմուտք ընկնող բոլոր երկիրները:

Հիահիսային Ասիայում՝ է գտնւում ամբողջ Սիրիոը: Այս շրջանի կլիման ցուրտ է: Արեգակը շատ թոյլ է տաքացնում այդ շրջանը: Բնեռային շրջանակից հիւսիս ձմեռ ժամանակ լինում է ընեռային դիշեր (կամ խաւար), որի միջոցին արեգակը երկար ժամանակ չէ երևում և երկիրը լուսաւորում է միայն լուսնով, աստղերով և հիւսիսափայլով: Զիլիւսկին հրանդանի վրայ բնեռային գիշերը տեսում է ամբողջ 4 ամիս շարունակ: Այս պատճառով էլ ձմեռը Հիւս Ասիայում խիստ ցուրտ է լինում: Աշնաել սառնամանիքները հասնում են

հրբեմն մինչև 60<sup>0</sup>, իսկ Կենայի գետաբերանում՝ նոյն իսկ 70<sup>0</sup>: Հողը սառչում է այնչափ խորը, որ ամառը միայն երեսից է հալչում. այսպէս է՝ ոչ միայն հեռաւոր հիւսիսում (տունդրաներում), այլ մինչև անգամ Բայկալեան լճի մօտ, որտեղ արդէն անտառներ կան: Թէպէտ ամառը Հիւսիսային Ասիայում տաք է լինում, բայց տարւայ տաքութեան միջին տատիճանը այնուամենայնիւ շատ ցածր է, այսինքն՝ Սիբիրի մեծագոյն մասում 0<sup>0</sup>-ից էլ ցածր: Հիւսիսային Ասիան խոնաւութիւն ստանում է Սառուցեալ ովկիանոսից. միայն այդտեղից ցուրտ ու չոր քամիները կարողանում են սակաւ քանակութեամբ գոլորշի բերել Հիւս. Ասիա. Մեծ և հնդկական ովկիանոսներից Հիւսիսային Ասիան կարւած է բարձր սարերով և բարձրաւանդակներով: Արևմուտքում Ատլանտեան ովկիանոսից նա բաժանւած է Ուրալեան սարերով և Եւրոպայի մայր ցամաքով. զրա համար էլ այդ ովկիանոսից քամիների բերած մթնութեալ տեղումները զգալի չափով պակասում, քչանում են: Այս է պատճառը որ Հիւսիսային Ասիայի կլիման ցինելով՝ նաև չոր է, ցամաքային:


Կենտրոնական Ասիան բարձր մակերեսով ունի. նա հեռու է գտնում ովկիանոսներից, շրջապատւած է բարձր սարերով. այդ սարերը չեն թողնում, որ ծովային քամիները փշեն դեպի երկրի ներսերը: Այդ պատճառով էլ Կենտրոնական Ասիայի կլիման շատ չոր է, աւելի չոր և ցամաքային, քան Հիւս. Ասիայի կլիման: Զափազանց սակաւ է պատճառում, որ երկնակամարի վրայ ամպեր երևան: Այդ պատճառով էլ ամսութամանակ սարահարթները անարգել կերպով տաքանում են բարձր երկնակամարում գտնուող արեգակով, բայց զիշերներն էլ նոյն արագութեամբ սառչում են: Ցերեկները յաճախ անտանելի շող է լինում, իսկ զիշերները՝ սառնամանիք: Զմեռն էլ, երբ արեգակը ցածր է թեքւած, լինում է զաժան ցուրտ: Այսպիսով Կենտրոնական Ասիայի կլիման իիստ ցամաքային է, — ձմեռները սաստիկ սառնամանիքներ են լինում, իսկ ամառները սաստիկ շոգեր:

Հարաւային Ասիան (այսինքն՝ Հնդկաստանը, Հնդկաչինը և Մալայեան արշիպելագը) ունի տաք կլիմայ: Ամառ ժամանակը արեգակը գտնվում է մարդու գլխավերելը և շատ սաստիկ է այրում: Նոյնիսկ ձմեռուայ ամիսներին արեգակը բաւական բարձրանում է:

Երկնակամարի վրայ: Այսպիսի ձմեռներ, ինչպէս մեր երկրում են, այստեղ ամենակին չեն լինում. Երկիրը երբէք չէ ծածկում ձիւնով: Ձմեռուայ և ամառուայ ամիսների մէջ համարեատարբերութիւն չըկայ. տարւայ տաքութեան

միջին աստիւնքները են տակիս այն քամիները, որոնք ամենաշատ տեղ 20° -ից բարձր է\*):

Հարաւային Ասիան մօտ է գտնվում Հնդկական տաք ովկիանոսին, որից շատ գոլորշի է բարձրանում: Այդ պատճառով էլ Ասիայի այդ մասի կլիման խոնաւ է: Մթնոլորտային տեղումներ են բերում գլխաւորապէս հարաւարեմտեան մուսսոնները, որոնք տարւայ ամառային ամիսներին, երբ մայր ցամաքը աւելի շատ է տաքացած լինում քան ովկիանոսը, փշում են ովկիանոսից դէպի մայր ցամաք: Ձմեռը մուս-



Մթնոլորտային տեղումների բաշխումը Ասիայում: Սլաքները ցոյց են տակիս այն քամիները, որոնք ամենաշատ տեղ 20° -ից մթնոլորտային տեղումներ են բերում:

\* ) Այսպէս Սումատրայի հարաւային մասում ամենաշոգ ամսւայ տաքութեան միջին աստիճանն է 27°, իսկ ամենացուրտ ամսւանը՝ 26°:

սոնները փչում են հակառակ ուղղութեամբ, — մայր ցամաքից դէպի ովկիանոս: Մթնոլորտային տեղումներ բերում են միայն ովկիանոսից փչող (ամառը) մուսսոները: Այդ պատճառով էլ Հարաւային Ասիայում ամառը շատ յաճախ և յորդ անձրեներ են գալիս:

Արեւելիան Ասիան լաւ է ոռոգւում. պատճառը Մեծ Ովկիանոսի մօտ լինելն է, մանաւանդ՝ այդ ովկիանոսի Կուլո-Սիլօ կոչւած տաք հոսանքը: Հարաւարելեան մուսսոնները փչում-անցնում են յիշած տաք հոսանքի վրայով և առատութեամբ մայր ցամաք են բերում մթնոլորտային տեղումներ: Զմեռը մուսսոնները փչում են հակառակ ուղղութեամբ, այսինքն մայր ցամաքից դէպի ովկիանոս, ուստի և բերում են չորութիւն ու ցրտութիւն:

Արևելեան Ասիայի հիւսիսային մասում ձմեռը բաւական լիստ է լինում և երկար տեսում. սառնամանիքը այնտեղ երբեմն 20° է հասնում: Հարաւային մասում ձմեռը շատ աւելի մեղմ է լինում: Ամառը ամեն տեղ շոգ է:

Արևմտեան Ասիայի և Արևելեան Ասիայի կլիմաների մէջ ևս տարբերութիւն կայ. բայց այդ տարբերութիւնը այնչափ աչքի ընկնող չէ, ինչպէս հիւսիսի և Հարաւակ մէջ: Արեգակը թէ Արևելքում և թէ Արևմուտքում հաւասարապէս բարձր է լինում հորիզոնի վրայ. միայն թէ՝ Արևելքը ողողւում է հսկայական ովկիանոսով, մինչ Արևմուտքը՝ միայն Արարական, Կարմիր և Միջերկրական ծովերով: Այն ևս կայ, որ Արևմուտքը հարեան է Աֆրիկայի չոր մասին: Այս պատճառով էլ Արեւմտեան Ասիայի (այսինքն Իրանի, Արարիայի և Փոքր Ասիայի) կլիման չոր է: Ամառը այնտեղ սաստիկ շոգեր և երաշտներ են լինում, յաճախ 50° տաք է անում: Զմեռը եղանակը ցուրտ է, յաճախ անձրեներ են գալիս և սարերի լանջերը ծածկում են ձիւնով:

Ասիայի կլիման էլ ցոյց է տալիս այնպիսի աչքի ընկնող հակառակ պատճեններ, ինչպէս որ նրա մակերեսոյթի կազմութիւնը, — դաժան ցուրտ՝ հիւսիսում, իսկ այրող շոգ՝ հարաւում. չափազանց չորութիւն կենարունական Ասիայում, իսկ առատ խոնաւութիւն՝ Հարաւային և Արևելեան Ասիայում:

## 6. ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Ասիայի բոլոր մեծ գետերը իրենց սկիզբն են առնում ովկիանոսներից հոսու, կենտրոնական Ասիայի բարձրութիւններից և հոսում են դէպի գանազան կողմեր։ Ասիայի գետերից մեծ մասը շատ երկայն է և ջրառատ։

Ասիայի հիւսիսային մասով դէպի Սառուցեալ ովկիանոս են հոսում հետեւեալ գետերը. — Օր (հրտիշ վտակով), Ենիսէյ և Լենա: Օր գետը իրտիշ վտակի հետ միասին ամենաերկայն գետն է Ասիայում<sup>1)</sup> (Նրա ջրաբաշխն էլ (այսինքն այն տարածութիւնը, որ ջուր է մատակարարում գետին) ամենաընդարձակն է:

Թէպէտ Հիւսիսային Ասիայում սակաւ մինոլորտային տեղումներ են թափւում, բայց և այնպէս այնտեղ հոսող գետերը ջրառատ են. պատճառը այն է, որ ջուրը սակաւ է գոլորշանում ցուրտ կլիմայի շնորհիւ: Այս գետերը իրենց ընթացքի մեծ մասում հոսում են հանգարտ (ինչու) և յարմար են նաւազնացութեան համար. Սառուցեալ ովկիանոսը, ուր թափւում են այդ գետերը, միշտ լիքն է լինում սառոյցով: Հենց իրենք գետերն էլ երկար ժամանակով սառչում են, իսկ գարնանը նրանք դուրս են գալիս ափերից

Մեծ են նմանապէս այն գետերը, որոնք հոսում են դէպի Մեծ կամ Խաղաղ ովկիանոս: Սրանք են՝ Ամուր, Դնյովին (կամ Հօանզօ), Կապոյտ (կամ Եանցէզձեան) գետերը:

Ամենից աւելի ջրառատ են լինում այս գետերը ամառ ժամանակ, երբ անձրևներ շատ են գալիս: Գարնանը գետերը ջրառատ չեն լինում, որովհետեւ նրանց ջրաբաշխներում քիչ է ձիւն գալիս: Այս գետերից նաւագութեան համար

1) Եթէ իրտիշը համարենք Օրի գլխաւոր վտակը, այդ դէպում նրա երկայնութիւնը կամի 5,000 վերստից աւելի: Նրանից աւելի երկայն են երկրագնդի վրայ միայն հետեւեալ գետերը—Միասիսիպի՝ Միասուրիի հետ (Հիւս, Ամերիկայում), Նեղոս (Աֆրիկայում) և Ամազոն (Հար. Ամերիկայում):

ամենայարմարն է Կապոյտ գետը։ Այս գետի հոսանքով նոյնիսկ ովկիանոսի նաւեր կարող են բարձրանալ գետաբերանից մինչև 1,000 վերտ վեր։ Դեղին գետը, ընդհակառակը, սակաւ նաւագնաց է։ Նրա պղտոր ջուրը շարունակ անազին քանակութեամբ գեղին տիղմ է բերում և նստեցնում հունի վրայ։ (Այդ տղմից գետի ստորին հոսանքում գոյանում են շարունակ նորանոր ծանծաղուաներ։ Ժամանակ առ ժամանակ այդ գետը նոյնիսկ բոլորովին փռխում է իր հունը. 50 տարի առաջ Դեղին գետը չեր թափւում Զժիլիի ծոցը, այլ Դեղին ծովը, — Կապոյտ գետի գետաբերանից ոչ հեռու\*):

Հնդկական ովկիանոս թափւող գետերից ամենանշանաւորներն են՝ Գանգս, Բրահմապուտրա, Հնդոս, Տիգրիս և Եփրատ գետերը։ Սրանք բոլորը սարերից անազին քանակութեամբ աւագ և տիղմ են բերում, որոնք և գետերի ստորին հոսանքում նստում են ու գոյացնում ծանծաղուաներ։ Այս պատճառով էլ յիշած գետերը համարեա թէ պէտք չեն նաւագնացութեան համար։ Ծովի մօտերքը նրանք գոյացնում են դելտաներ, բաժանւելով մանր ճիւղերի, որոնք և մատչելի չեն ծովային նաւերի համար։ Յատկապէս շատ ճիւղեր ունի Գանգսի և Բրահմապուտրայի գետան։ Այս գելտան  $\frac{21}{2}$  անգամ մեծ է Մուկուայի նահանգից։)

Կենաւը ոնական Ասիայում մամանապէս՝ Թուրանի հարթութեան վրայ, Իրանում և Արարիայում մթնոլորտային տեղումներ քիչ են թափւում, իսկ ջուրն էլ շատ է գոլորշիանում։ Այս պատճառով յիշած տեղերում քիչ գետեր կան. եղած գետերն էլ մեծ մասով անապատային են, այսինքն՝ չեն համար ովկիանոսին, այլ կորչում են աւագուաներում կամ թափւում են չհոսող լճեր։ Այս գետերից ամենանշանաւորներն են՝ Սիր-Դարեա և Ամու-Դարեա, որոնք թափւում են Արալեան լիճը։

\* ) Հունը փոխելով Դեղին գետը հեղեղում է դաշտեր, գիւղեր և նոյնիսկ ամբողջ քաղաքներ. այդ միջոցին ոչնչանում են հազարաւոր մարդիկ։

Լճեր Ասիայում շատ կան: Նրանցից ամենամեծերն են՝ Կասպից և Արալեան լճերը, որոնց ջուրը աղի է: Անուշ ջուր ունեցող լճերը (Ասիայում) իրենց մեծութեամբ յետ են մոռմ Ամերիկայի և Աֆրիկայի նոյնատեսակ լճերից: Դրանցից ամենածն է Ասիայում՝ Բայկալ լիճը ( $1\frac{1}{2}$  վերստից աւելի խորութեամբ. աշխարհի ամենախոր լիճը): Արալօնկասպիկական հարթութեան վրայ գտնւող լճերը, մեծ մասով, հնումը այդտեղ եղած ծովի մնացորդներն են. այդ պատճառով նրանց ջուրը աղի է:

### 7. ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ասիայի բուսականութիւնն էլ այնպէս բազմազան է, ինչպէս կլիման: Ասիայում կարելի է հանդիպել բոլոր գոտիների բուսականութեան, — սկսած տունդրաներից մինչև արևադարձային անտառները:

Ասիայի հիմնային ցուրտ մասը ծածկւած է տունդրաներով և փշատերեան տանտառներով: Տունդրաները տարածւում են Սառուցեալ ովկիանոսի ափերին, որտեղ ոչ միայն ձմեռը լինում է սաստիկ, այլ նաև ամառը ցուրտ է ու մասսալավատ: Այն վայրերում, որտեղ սաստիկ ձմեռւանից յետոյ գոնէ ամառը տաք է լինում, այնտեղ աճում են սիբիրական անտառներ, որոնք տայգ ան կոչւում: Այդ տայգաները մեծ տարածութիւն են բռնում—սկսած Ռւրալեան լեռնաշղթայից մինչև Մեծ ովկիանոսի ափերը: Մարդկային ձեռքը գեռքիչ է կպել այդ անտառներին. մի քիչ կտրւած են նրանք միայն Սիբիրի երկաթուղու երկայնութեամբ:

Ենտրոպնական Ասիան, Թուրքանի հարթութիւնը եւ Արեւմտեան Ասիան ծածկւած են միապաղապաղ ան ապատներով և տափաստաններով: Անապատներից նշանաւոր են՝ արեւելքում—Գորիի, իսկ արևմուտքում—Արարիս: Այս գոտում անտառներ կան միայն սարերի լանջերին, նաև գետերի ափերին գտնւող ովազիներում:

Ովազիսներում լաւ են աճում պաղատու ծառեր, ինչպէս օրինակ՝ խնձորենի, դեղձի, ծիրանի: Իսկ արևմտեան Ասիայում աճում են մշտագալար ծառեր. օրինակ՝ ձիթենի: Իրանի հարաւում և Արարիայում աճում է փենիկեան արմաւենին:

Հարաւային Ասիայում, որտեղ կլիման տաք է և սոսգումը լաւ, աճում են արեագարձային անտառներ: Մրանք ծածկում են Հնդկաստանի և Հնդկաչինի ամենախոնաւ տեղերը և Մալայեան արշիպելագը:

Հարաւային Ասիայի աւելի չոր մասերում տարածւում են արևադարձային տափաստաններ, որոնք սաւանն են կոչում. դրանք խիտ կերպով ծածկւած են վայրի խոտերով:



Նկ. 3. Բուսականութեան տարածումը Ասիայում:

Արեւելիան Ասիայում, այսինքն չինական հարթութեան և Եապոն ական կղզիների վրայ, տարածւում են կանաչ և արգաւանդ դաշտեր ու փարթամ այդ իներ. իսկ չինական և ետպնական սարերի լանջերին աճում են մերձարևադարձային անտառներ՝ մշտագալար ծառերով:

Օդակար բոյսերով Ասիան աւելի հարուստ է, քան մնացած բոյր աշխարհամասերը: Ասիայում առաջին անգամ մարդու ձեռքով են դանւել, վայրի դրութեան մէջ, բազմաթիւ

նշանաւոր բոյսեր, որոնք այժմ մշակւում են մեծ քանակութեամբ:

Այսպէս օրինակ՝ Արևմտեան Ասիայում առատօրէն աճում են ցորեն, վուշ, սոխ: Հարաւային Ասիան բընձի, շաքարեղիզնի, բանանի, վարունդի հայրենիքն է. իսկ Արևելեան Ասիան՝ թէյի հայրենիքն է:

### 8. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ասիայի կենդանական աշխարհը շատ հարուստ է: Կենդանիների բազմատեսակութեամբ Ասիան առաջին տեղն է բռնում բոլոր աշխարհամասերի մէջ: Այնտեղ պատահում են Եւրոպական-Ասիական, Հնդկական, Աֆրիկայի և նոյնիսկ Աւստրալիայի շրջանների կենդանիներ: Եւրոպական ափական կէնդան կէնդան երի կական շըրը-  
շանների կեն-  
դանիները ցըրը-  
ւած են ընդարձակ  
տարածութեան վրայ:  
Ամբողջ կենտրոնական  
և արևելեան Ասիայի,  
նաև հիւսիսային և ա-  
րևմտեան Ասիայի մեծ  
մասին յատուկ են Եւ-  
րոպական և ասիական  
շրջանի կենդանիներ:

Տունդրաներում  
ամառ ժամանակ լի-  
նում են շատ տեսակ  
կենդանիներ, յատկա-  
պէս թոշուններ,  
որոնք ահագիներամ-  
ներով հարաւային Ա-  
սիայից չւում են գէպի



Կարելի. 1—ցորեն, 2—զարի, 3—վարսակ, 4—կարելի, 5—կարելի, 6—հաձար:

Սառուցեալ Ովկիանոսի ափերը: Այստեղ նրանց դրաւողը սնունդի առատութիւնն է, ուր կան ամեն տեսակ ձկներ և բոյսեր: Աշնանը նրանք կրկին չւում են դէպի տաք երկիրներ: Զմեռը տունդրաներում սակաւաթիւ կենդանիներ են մնում—սպիտակ կաքաւներ, բնեռային աղէմներ, հիւսիսային եղջերուներ: Սըրանք էլ մեծ մասով ձմեռը դէպի տայգա են չւում:

Տայգան հարուստ է աղւամազ գազաններով: Այստեղ կան բազմաթիւ սկիւռներ, աղէմներ, գայլեր, արջեր և այլն: Արևելեան Սիրիում են լինում աղւամազ գազաններից ամենաթագինները—սամոյրներ և սպիտակ կղաքիններ: Տայգայում շատ են լինում նաև անտառային թռչուններ—մայրի հաւեր, փայտմորիկներ և այլն:

Տափաստաններում (ստէպ) ապրում են բազմաթիւ կրծող և սմբակաւոր կենդանիներ, որոնք սնուում են խոտավ: Զմեռ ժամանակ կրծողները թագնուում են որջերում և քուն մտնում, իսկ սմբակաւորները խոտ են ճարում ձեան տակից, որ միայն բարակ շերտերով է ծածկում ասիական տափաստանները:



Նկ. 5. Բրինձ.



Նկ. 6. Թամբակ:

Արեւմտեան  
Ասիայի տա-  
փաստաննե-  
րում ապրում  
են թէ սմբա-  
կաւոր և թէ  
կրծող կենդա-  
նիններ, միայն  
թէ աւելի պա-  
կաս քանակու-  
թեամբ, պատ-  
ճառն այն է,

որ այնտեղ աւելի շատ մարդ է ապրում  
և բաւականաչափ զիշատիչ զազաններ  
և կան: Մրանցից մի քանիսը Ա. Փրիկա-  
յի շրջանի ծագում ունեն, օրինակ՝

բրենին, շնագայլը: Արարիայում և տեղ-տեղ իրանում պատահում է նոյն խսկ առիւծ:

Հարաւային Ասիայի արևադարձային անտառներում և սաւաններում կան բազմաթիւ և բազմազան կենդանիներ: Նրանցից շատերը ապրում են միայն արևադարձային գօտում և անկարող են դիմանալ բարեխառն երկրների ցրտին: Այսպէս են, օրինակ, մարդանման կապիկները և հաստակաշի հնդկական փիղը, անգեղջիւրը և տապիրը\*):



Կա. 7. Բանան:

Արեւելիան Ասիան այնչափ խիտ է մարդկային բնակութեամբ և այնչափ շատ է մշակւած, որ վայրի կենդանիները այնտեղ համարեա թէ բնաջինջ են արւած:

Համարեա բոլոր ընտանիկեն գանիները Ասիաշայից են գուրսե կերպարկանց առաջնորդ և ներկայումս ծառայում են մարդկանց՝ բոլոր աշխարհամասերում: Մարդիկ նրանց առաջին անդամ Ասիայում գտան վայրի վիճակի մէջ և ընտանե-



Կա. 8. Տապիր:

\* ) Հար. Ասիայի գիշակեր կենդանիներից ամենասուժեղն է բենգալեան վագրը: Կան բազմաթիւ թունաւոր օձեր, կոկորդիլոսներ և այլն:

ցրին յօգուտ ամբողջ մարդկութեան: Այսպէս՝ ասխական տափաստաններից են ծագում ձին և ուղարք: Կենտրոնական Ասիայի տափաստաններում նրանք մինչեւ օրս ել մնում են վայրի վիճակի մէջ:

Ասիայից են ծագում եղջերաւոր խոշոր անտառները, ոչխարը, այժմը և խոզը: Տիբետում և մօտակայ երկրներում մարդուն ծառայում է նաև ընտանի կենդանիներից ամենաառժեղը—հնդկական փիղը:

### 9. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ասիայում ապրում են 800  
միլիոնից աւելի մարդիկ, այսինքն՝ ամբողջ մարդկութեան կէսից աւելին:  
Ասիայի մակերեսոյթի տարածութիւնը մօտաւորապէս 40  
միլիոն քառակուսի վերստ է.  
Կնշանակէ՝ 1 քառ. վերստի վրայ Ասիայում ապրում են  
միջին հաշւով մօտ 20 հոգի:

Ամենից աւելի պակաս քնակութիւն ունեն տունդրաները, որտեղ մարդ շատ գժւարութեամբ է կարողանում ապրուսի միջոցներ դանել: Երկրագործութեամբ պարագել այնտեղ անհնար է:

Բնտանի կենդանիներից ծառայում են մարդուն միայն հիւսիսային եղջերուները և լծկան չները: Սակաւքնակութիւն կայ նաև Սիբիրի տայգայում: Այդ անտաների խորքերում, սակաւ անդամ, միայն կարելի է տեսնել թափառաշընիկ որսորդներ (օրինակ տունդրուներ): Միայն մեծ գետերի հոսանքի վրայ և Սիբիրի



Նկ. 9. Օրոնգութանգ:

երկաթուղու երկայնութեամբ ձգւած են ոռւս դադթական-ների գիւղեր։ Մեծ աշխատանք թափելով նրանք հազիւ կարտում են խիտ անտառները, մաքրում հողը ծառերի տրմատներից և վարում այն։ Միքիրի հիւսիսային կեսում միանգամայն անկարելի բան է երկրագործութեամբ պարապելը։

Ասիայի տափաստանները շատ չոր են. Երկրագործութեան համար նրանք մեծ մասով անյարձար են։ Այդ պատճառով էլ այնտեղ աղբում են զլխաւորա-



Կա. 10. Թենգալեան վագր՝ եղեգնութեամ։

պէս քոչւորիս աշնարածներ, օրինակ՝ մոնղոլներ, կիրպիզներ, — որոնք արօտատեղեր վնարելով անդադար մի վայրից ուրիշ վայր են թափառում։ Իրենց հօտերն արածացնելու համար քոչւորներին անհրաժեշտ են ընդարձակ տարածութիւններ։ ուստի և նրանց տափաստանները շատ սակաւամարդ բնակութիւն ունեն։

Տափաստաններից էլ աւելի ոլակաս բնակութիւն կայ հաստատած անապատներում։ Այստեղ մարդ ապրել կարող է միմիայն ովագիսներում։

Բոլորովին այլ բան ենք տեսնում մենք Ասիայի հարաւային և արևելեան մասում, որտեղ ամբողջ մարդկութեան կէսն է ապրում և որտեղ ազգաբնակութիւնը վերին աստիճանի խիտ է: Հնդկաստանի և Չինաստանի հարթութիւններում ազգաբնակութեան խտութիւնը համար է մինչև 200 (և նոյնիսկ աւելի) մարդու 1 քառ. վերստի վրայ: Այսպիսի խիտ ազգաբնակութեան պատճառը երկրի տաք, խոնաւ և արգաւանդ լինելն է, որ առատօրէն վարձատրում է մարդու աշխատանքը: Անյիշատակ ժամանակներից սկսած այստեղ ապրում են հաստատաբնակ երկրագործ ժողովուրդներ—հնդիկներ, չինացիներ և ուրիշ ժողովուրդներ:

Ասիայի ժողովուրդների մեծ մասը պատկանում է գեղին ցեղին: Այդ ժողովուրդները կազմում են Ասիայի ամբողջ ազգաբնակութեան կէսից աւելին և բռնում են նրա տարածութեան Յաղ (տես նկ. 11): Դեղին ցեղին պատկանող զբլխաւոր ժողովուրդներն են—չինացիները, մոնղոլները և մալայցիները:

Մակարակ ցեղը բնակւում է Հնդկաստանում, Արեւմտեան եւ մասամբ Հիափային Ասիայում: Այդ ցեղին պատկանող զլխաւոր ժողովուրդներն են—հնդիկները, պարսիկները, հայերը, ոռուները և մնացած համարեա բոլոր եւրոպական ժողովուրդները: Սեմիտների թւին են պատկանում արաբները, հրեաները (և մի քանի աֆրիկացի ժողովուրդներ):

Սեղեղ Ասիայում շատ փոքր տարածութիւն է միայն բռնում—Հնդկաստանից հարաւ ընկնող Յելլոն կղզում: այդտեղ ապրում են դերաւիդները:

Վերյիշել այստեղ զեղին, սպիտակ և սև ցեղերի առանձնայատկութիւնները:


Զանազան ցեղերի պատկանող մի քանի ազգութիւններ Ասիայի որոշ մասերում սաստիկ խառնւել են իրար հետ: Այս-

պէս՝ Դեկանում և Ցէյլոնում գրաւիդները խառնւել են հնդիկների հետ, Փոքր Ասիայում թիւրքերը կամ տաճիկները (որոնք գեղին ցեղին են պատկանում) խառնւել են սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդների հետ:

Թէպէտ եւրոպացիները շատ վաղուց չեւ, որ ծանօթացել են ամբողջ Ասիային, բայց էլի կարողացել են տիրել նրա տարածութեան մեջ մասին: Ասիայի<sup>1/3</sup>-ից աւելին հենց Ռուսաստանին է պատկանում: Հնդկաստանն ու Հնդկաչինի մի մասը պատկանում է Անգլիային: Հնդկաչինի մի մասը պատկանում է Ֆրանսիային, և այն:

Եւրոպացիների կալածները Ասիայում (նաև Աֆրիկայում, Ամերիկայում և Աստրալիայում) կոչւում են եւրոպական գաղթավայր Ասիայում: Սիրին էլ կարելի է կոչել ռուսական գաղթավայր Ասիայում: բայց որովհետեւ նա սերտ միացած է բուն Ռուսաստանին, ուստի աւելի ճիշտ է համարել նրան իբրև ռուսական կայսրութեան մի մասը:

Ասիայի անկախիւթիւնները բռնում են այդ մայր ցամաքի տարածութեան կէսից պակասը: Նրանցից ամենամշանսաւորներն են՝ Չինաստանը, Եազնիան և Պարսկաստանը: Բացի այդ պետութիւններից՝ Ասիայում է գտնվում նաև Թիւրքիայի կամ Տաճկաստանի մեծակոյն մասը:



Կը. 11. Յեղերի տարածումը Ասիայում:

# ԵՐԵՒՄՏՏԵԸՆԵՍԻ ԱԿՆԱՐԿ

## 10. ԲՆԴՀԱՆՈՒԹԻՄ ԱԿՆԱՐԿ

Այն բոլոր երկրները, որոնք ընկած են Ասիայի արևմուտքում, շատ ընդհանուր կողմեր ունեն իրար հետ: Համարեա այդ բոլոր երկրներն էլ բարձրաւանդակներ են, ունեն տաք և չոր կլիմայ: (Երկնել «կլիմայ» դասի (յօդ. 5.) Արևմ. Ասիային վերաբերող կտորը): Բարձրաւանդակների խորքերը մեծ մասով ներկայացնում են առապատճեն՝ չորս կողմը տափաստանների: Ընդհակառակը ծովափինեայ երկրներում և սարերի լանջերում ձմեռ ժամանակ շատ անձրն է զալիս, ուստի և այդ շրջանները պաղաքար հող ունեն: Պըտպարեր են նաև այն երկրները, որոնցով հսում են գետեր. սրանք նըպաստում են հողը արւեստական կերպով ջրելուն: Այս բանը պահանջում է ի հարկէ շատ աշխատանք և հոգատարութիւն. զրա համար պէտք էր շինել մոծ ջրանցքներ: Հասկանալի է ուրեմն, որ երկրի մասին այսպէս հոգալ կարելի է միայն խաղաղ ժամանակ: Աւերիչ պատերազմները, որոնք յաճախ էին մղում հին ժամանակները Արևմտեան Ասիայում, կործանում-ոչնչացնում էին յիշած ջրանցքները և նման ձևանարկները: Այժմ էլ, շնորհիւ տիրող քաղաքական քայլայիշ պայմանների, այդ երկրները աւերտում են: Այս է պատճառը, որ Արևմը տեան Ասիայում մենք հանդիպում ենք այնպիսի երկրների, որոնք հնուռմ եղել են ծաղկած, կերակրել են միլիոնաւոր մարդկանց, — այն ինչ ներկայումս կարողանում են մնունդ տալ միայն սահմանափակ թուվ թափառաշրջիկ ցեղերի: Այսպէս է զրութիւնը մանաւանդ Միջազգեարքամ. իսկ աւելի պակաս չափով՝ նաև ամբողջ Արևմտեան Ասիայում—Փոքր Ասիայում, Հայաստանում, Ասորիքում (Սիրիա), Պաղեստինում և Պարսկաստանում:

## 11. ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Փոքր Ասիա թերակղզին յիշեցնում է ամբողջ Ասիա մայր ցամաքը՝ փոքրացրած չափով: Այդ երկիրը բարձրաւանդակ է, շրջապատած լեռնազդմաններով: Հիւսիսային սահմանում ընկնում են Պոնտոսի լեռները, իսկ հարաւում՝ Տարոսի լեռները:

*Վահական.* Փոքր Ասիայի արևելեան կողմում է տարածւում Հայաս-

տանը, որտեղ հանգած հրաբխային լեռներ շատ կան: Այդ լեռներից ամենաբարձրն է Արարատ կամ Մասիս սարը՝ ծովին մակերևոյթից 5 վերստ բարձրութեամբ: Մասիսի գագաթը ծածկւած է յաւիտենական ձիւնով:

Հայաստանում են իրենց սկիզբը առնում և որոշ տարածութեան վրայ այդ երկրով են հոսում՝ Տիգրիս, Եփրատ և Եղասիս գետերը: Լճերից նշանաւոր են Վանայ և Ուրմիայի աղի լճերը:

Փոքր Ասիայի և Հայաստանի կլիման համեմատաբար խոնաւ է: Այդ երկրներում բաւական շատ մթնոլորտային տեղումներ են թափւում, որովհետև այնտեղ համառ են Սալանտեան ովկիանոսից փչող քամիները: Միայն Փոքր Ասիայի ներսերում է կլիման չոր, բայց էլի յարմար է խաչնարածութեան համար:

Գարնանը, ձիւնը հալչելուց յետոյ, Փոքր Ասիայի և Հայաստանի հողը շատ խոնաւութիւն է ծծում: այդ պատճառով էլ սարերի ստորոտներից բազմաթիւ աղբերներ են բղխում, հովիաներով գետակներ են հոսում: Սարերի լանջերը գարնանը ծածկւում են կանաչ խոտով: սակայն ամառայ սկրզբում արդէն չորանում է խոտը: Անտառներ քիչ կան, միայն Պոնտոս լեռների հիւսիսային լանջերը ծածկւած են ստերախիտ կաղնու և հաճարի անտառներով: Աւելի հեռուն՝ հարաւում՝ տարածւում են տափառաններ և աղուտ հող ուժեցող անապատներ: Տաւրոսի լանջերում և թերակղզու արեմատեան ծայրերում միայն՝ պատահում են մշտականաչ մրտենիների և գափնիների ցածրիկ թփուտներ:

Հնումը Փոքր Ասիան և Հայաստանը աւելի մեծ ազգաբնակութիւն են ունեցել, քան այժմ: Մինչև այժմ էլ այդ երկրներում պահւել են հնութիւնից մնացած շատ յիշատակարաններ—տաճարների, ջրանցքների, թագաւորական գերեզմանների մնացորդներ և հին ամրոցների ու ամրող քաղաքների աւերակներ:

Ներկայումս էլ Փոքր Ասիան Թիւրքիայի ամենակարևոր և ամենալաւ բնակութիւն ունեցող մասն է կազմում: Ազգաբնա-

կութեան մեծ մասը կազմում են թիւրքերը կտմ ու աճի կ-ները, որոնց թիւրք այստեղ մօտ 9 միլիոնի է հասնում:

Թիւրքերը նւաճեցին Փոքր Ասիան դեռ 11-րդ դարում Ք. յ., իսկ 15-րդ դարում նրանք իրենց իշխանութիւնը տարածեցին նաև Արևմտեան Ասիայի հարետն երկրների, հիւսիսարևելեան Աֆրիկայի, և հարաւարեելեան Եւրոպայի վրայ: Այժմ Թիւրքիան ամենաթոյլ, յետ մնացած պետութիւններից մէկն է. չորրոնիւ թիւրքական տիրապետութեան էլ երկիրը հետզհետէ դատարկւել է: Ժամանակի ընթացքում Թիւրքիան կորցրել է իր տիրապետած երկիրների մի մասը, իսկ Ասիայում այժմ բաւական երկիրների վրայ դեռ իշխում է նա: Թիւրքիային են պատկանում հետեւեալ երկիրները—Փոքր Ասիա, Հայաստան, Միջազգեաք, Ասորիք՝ Պաղեստինի հետ' եւ Արարիայի մի մասը:

Թիւրքերը հետեւում են մահմեդական կրօնի սիւննի դաւանութեան: Նրանք թէկ մօնղողական ծագում ունեն, բայց դարերի ընթացքում խառնւել են սպիտակ ցեղին պատկանող զանազան ժողովուրդների հետ, և ներկայումս մօնղութական գծեր շատ քիչ կան նրանց մէջ: Թիւրքերը պարապում են զիշտորապէս երկրագործութեամբ և այդեգործութեամբ: Արտերում ցանում են ամենից շատ՝ ցորեն և գարի: բացի հացահատիկներից նրանք մշակում են նաև ծըխախոտ ու խոշխաշ: (ափիոն. դրա գործածութիւնը աւելի ու աւելի է տարածում թիւրքերի մէջ): Այդեղործութեան մէջ յատկապէս խաղողի մշակութիւնը կարևոր տեղ է բռնում: Արևմտեան մասում զարգացած է նաև թթենիների մշակութիւնը, որի հետ և կապւած է որոշ չափով տարածւած մետաքսագործութիւնը: Թերակղզու ներսերում, աւելի չոր տեղեր, թիւրքերը զբաղւում են նաև անասնաբուժութեամբ: Յայտնի են մանաւանդ Անգորայի այծերը\*): որոնք տալիս են թանգարժէք, մետաքսանման բուրդ:

\*) Այդ այծերը ամենից շատ պահեում են Անգորա քաղաքի շըրջակայքում, ուստի և կոչւում են Անգորայի այծեր:

Արդիւնագործութիւնը շատ քիչ է զարգացած։ Երկրում ծախւում են զլխաւորապէս եւրոպական գործարանային ապրանքներ։ Եւրոպացիները, զլխաւորապէս գերմանացիները, երկաթուղային գծերը են անցկացրել այնտեղ—ծովափնեայ Զմիւռնիա և Սկիւտարի (վերջինս կոստանդնուպոլսի մի արւարձանն է ասիական ափում) քաղաքներից դէպի Անգորա։ Այստեղից էլ այժմ մի երկայն երկաթուղային դիմ է անց կացւում դէպի Բաղրադի Միջազեաքում։

Փոքր Ասիայի նաւահանգիստներից նշանաւոր են՝ Զմիւռնիան, Տրավիզոնը և Սկիւտարին։ Զմիւռնիան գտնւում է Միջերկրական ծովի ափին. բնակիչների մեծ մասը յոյներ են. կան նաև շատ հայեր։ Տրավիզոնը գտնւում է Սև ծովի ափին։ Սկիւտարին Բոսֆորի ափին է գտնւում, Թիւրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի դիմացը՝ փոքրասիական հողի վրայ։

Ներկայումս էլ Թիւրքիայում ապրանքների տեղափոխութիւնը աեղի է ունենում ուղաքերի կարաւաններով։ Ար տահանւում են զլխաւորապէս ցորեն, մրգեր, ծխախոտ և բուրդ. իսկ ներմուծւում են եւրոպական գործարանային ապրանքներ։

Փոքր Ասիայի ծովափնեայ վայրերում և եզէյեան ծովի կղզիներում ապրում են լոյներ։ Յոյները շատ ընդունակ են առևտրական գործերում։ Նրանց ձեռքին է գտնւում Փոքր Ասիայի առևտրի մեծ մասը։ Յոյները պարապում են նաև այգեգործութեամբ և սպունգներ որսալով եզէյեան ծովում։

Հայաստանում բացի Թիւրքերից ապրում են նաև շատ հայեր։ Հայերի թիւը այնտեղ համառում է մօտ  $2\frac{1}{2}$  միլիոնի։ Մեծ մասը հայ-լուսաւորչական գաւանութեան է հետեւում. կան նաև կաթոլիկ և բողոքական հայեր։ Հայերի մեծ մասը պարապում է երկրագործութեամբ և անամսապահութեամբ, թէպէտ նրանց այդ զբաղմունքները շատ խանգարում են կլիմայի խրատութիւնից և քրդական յարձակումներից։

Քըդերը ապրում են Հայաստանի հարաւարեկելեան կողմը ընկած լեռնային երկրում, որ Քըդաստան է կոչւում։ Քըդերը մեծ մասով թափառաշրջիկ կեանք են վարում ու պա-

քապապում են անասնապահութեամբ. քրդերից շատ շատերը զբաղմունք են դարձրել իրենց համար աւագակութիւնը: Թիւրքի-այի հին կառավարութիւնը հովանաւորում էր նրանց, որոնք յաճախ յարձակում էին խաղաղ ժողովուրդների, զլիսաւորապէս հայերի վրայ, թալանում նրանց ու սպանում բոլորովին անպատիժ կերպով:

Հայաստանում, ուռւսական սահմանի մօտերը, կան մի քանի ամրոցներ. նրանց մէջ ամենաամուր բերդը Էրզրումն է, որն և ամենամեծ քաղաքն է Հայաստանում: Նշանաւոր է Հայաստանում նաև Վան քաղաքը, Վանայ լճի հարաւարենելեան ավին:

Փոքր Ասիայից հարաւ գտնուում է Կիլլուս կղզին, որի բնակիչները յոյներ են: Այդ կղզին առաջ թիւրքերին էր պատկանուում, իսկ այժմ անզիւցիների ձեռքին է գտնուում, որոնք կարճ ժամանակւայ ընթացքում կարողացան բարձրացնել ազգաբնակութեան վիճակը:

## ~~12.~~ ՄԻՋԱԳԵՏՔ

Տիգրիս և Եփրատ գետերը դուրս գալով հայկական բարձրաւանդակից՝ հոսում են դէպի հարաւ մի գաշտավայրի միջով, որ կոչւում է Միջագետք: Այս գաշտավայրը գոյացել է յիշած գետերի բերած հողից և տիղմից:

Հնումը Միջագետքը, մանաւանդ նրա հարաւային մասը, խիստ ազգաբնակութիւն է ունեցել: Քրիստոսից համարեա 2000 տարի առաջ այնտեղ գտնուում էին հին աշխարհի ամենազօրեղ պետութիւններից երկուսը—Ասորեստանը (Ասսիրիա) և Բարելոնիան: Վերջինիս մայրաքաղաքը, Բարելոնը, մօտ մէկ միլիոն բնակիչ է ունեցել:

Միջագետքը ծաղկած ժամանակ կտրտւած է եղել բազմաթիւ ջրանցքներով, որոնցով արեւատական կերպով ջրւել են արտերը. հողը եղել է արգաւանդ, բարերեր և կերպալրել է մեծաթիւ ազգաբնակութիւն:

Սակայն հնումը ծաղկած և բարերեր այդ երկիրը այժմ անապատ է ներկայացնուում: Այնտեղ առաջ ջրանցքներով ոսոգւող հողի վրայ մըշակուում էին փարթամ այգիներ և արտեր. այժմ ոչնչացած են ջրանցքները, հողը աւազու է և ճահճու, վատասող և անյարմար՝ բը-

Նակութեան համար: Առաջւայ մեծ և ծաղկած քաղաքներից այժմ աւելակներ են միայն մեացել: Ծանապարհորդներին և գիտնականներին զրաւում են մասաւանդ Բարելոնի աւերակները:

Միջազետքը այժմ շատ սակաւ բնակութիւն ունի: Բնակիչները նստակեաց արարներն, որոնք ապրում են գետերի ափերին և ովազիւներում: Նրանք պարապումեն փիւնիկեան արմաւենիների մշակութեամբ, նաև անսանապահութեամբ: Կան նաև ըեղուիններ, որոնք աւազակութեամբ են պարապում:

Միջազետքը ամենակարճ ճանապարհն է Հնդկաստանից և հարաւային Պարսկաստանից դէպի Եւրոպա. այդ պատճառով էլ մեծ է Միջազետքի առևարական նշանակութիւնը, որն աւելի ևս կմեծանայ, երբ կառուցւի արգէն նախազծւած Երկաթուղին (գլխաւորապէս գերմանացիների նախաձեռնութեամբ) դէպի երկրի մայրաքաղաքը՝ Բաղդադ: Նշանաւոր է Միջազետքում նաև Մոսուլ քաղաքը: Երկուսն էլ գտնւում են Տիգրիսի վրայ:

### 13. ԱՐԱԲԻԱ

Արարիան երկրագնդի տմեն ամեծ թերակղին է (միայն 2 անգամ փոքր Եւրոպական Ռուսիայից): Արարիան ներկայացնում է մի ընդարձակ բարձրաւանդակ, բաղկացած հողակոշտերից: Իր բնութեամբ և կազմութեամբ Արարիան աւելի նման է Հիւս. Աֆրիկայի, քան Ասիայի բարձրաւանդակներին: Արարիայի մեծագոյն մասը գտնւում է տաք գօտում և ներկայացնում է աւազոտ անապատ, մանաւանդ հարաւային մասում: Գետեր համարեա թէ չկան այնտեղ: Անձրեներ գալիս են սակաւ, այն էլ միայն ամենաբարձր վայրերում: Եղած ովազիւներն էլ շատ քիչ են:

Միայն ծովագնեայ մասերումն են անձրեներ գալիս. և միայն այդ տեղերում էլ կարելի է մշակել հողը, ինարկէ արևեստական կերպով ջրելուց յետոյ: Արարիայի ամենալաւ մասն են կազմում չեղասր և Եմէնը (կամ Երջանիկ Արարիան), Կարմիր ծովի ափին:

Այնտեղ, սարերի լանջերին, տարածւում են լաւ արօ-

տատեհ զիներ, մշակւում են նաև փիւնիկեան արժաւենիներ, ակացիաներ (որոնք տալիս են խէժ—գռւմմի արարիկ) և սուրճի թփեր։ Սարերից հոսող փոքրիկ զետակների հովիաներում ծաղկում են նաև այդիներ և արտեր։

Արարիայի բնակիչները արարներ են (մօտ  $3^{1/2}$  միլ.), որոնց մի մասը նստակեաց է, իսկ միւս մասը՝ թափառաշրջիկ։ Վերջինները կոչւում են բեդուիններ, որոնք պարապում են անասնապահութեամբ։ Նրանք պահում են ձիերի, ուղտերի և ոչխարների ամենաընտիր տեսակները։ Յայտնի է ամենաեղանակ արար ական ձին։ Բեղուինները յաճախ յարձակում են անապատով անցնող կարաւանների և նստակեաց ա-




Կա. 12. Թեգուիններ, եռանց բնակարանը և զգեստը:

բարների գիւղերի վրայ։ Նստակեաց արարները ապրում են զետակների ափերին կամ՝ անտապատում եղած ովար զիսներում։ Նրանք պարապում են փիւնիկեան արժաւենիներ։

նին եր, սուրճի թուփ տնկելով։ մշակում են ըրինձ և ուրիշ հացահատիկներ, —ի հարկէ արւեստական կերպով հողը ջրելով։ Արարիայում այնչափ շատ սուրճ է պատրաստում, որ արտահանում է նոյն իսկ Եւրոպա։

Արարն երը պատերազմասէր և քաջ ժողովուրդ են։ Դրդ գարում, Ք. յ., նրանց մէջ գուրս եկաւ Մահմէդ մարզարէն և հիմք զրեց մահմեդական կրօնին։ Այդ կրօնը արարները գէնքի ոյժով տարածեցին Արևմտեան Ասիայում և Հիւս։ Աֆրիկայում։ Սակայն արարների զօրութիւնը տեսական չեղաւ։ Նրանք ընկան թիւրք եր իշխանութեան տակ, որոնք տիրեցին նոյնիսկ Արարիայի ամենալաւ մասերին՝ Հեջասին և Եմէնին։ Թիւրքերի ձեռքում են այժմ նաև մահմեդականութեան



Նկ. 13. Մեկկա. բառանկիւնի սեւ օկինի և Քատարա։

հետեւալ երկու սրբագան քաղաքները — Մեկկա՝ Մահմեդի ծննդավայրը, և Մեղրինա, որտեղ գտնւում է Մահմեդի գերեզմանը։

Արարները ընդունակ ժողովուրդ են։ Նրանք միջին դարերում հիմնեցին խոշոր պետութիւններ Արևմտեան Ասիայում և Հիւսխային Աֆրիկայում և ամենաառաջադէմ ժողովուրդներից մէկն էին. ունէին հարուստ զրականութիւն, ընտիր բանաստեղծութիւն և նշանաւոր հաստատութիւններ։

Մահմեդական կրօնը, որ Արարիայից դուրս եկաւ, ներկայումս մօտ 200 միլիոն հետեւզներ ունի: Նրանք բաժանում են երկու դաւանութեան—սիւննի և շիա: Առաջին դաւանութեան հետեւզները բացի դուրանից ընդունում են նաև զանազան կանոններ և աւանդութիւններ, որոնք հաւաքւել և պահել են Մահմեդի մահւանից յետոյ: Շիա դաւանութեան հետեւզները ընդունում են միմիայն Ղուրանը: Արևմտեան Ասիայի մահմեդականներից շիային են հետեւմ պարսիկները և Աստրապատականի թուրքերի (թաթարների) մեծ մասը: Մնացած մահմեդականները սիւննի են:

Աշխարհի բոլոր կողմերում ապրող մահմեդականները ամեն օր աղօթելիս իրենց երեսը դարձնում են գէպի Մեկլա, Մահմեդի ծննդավայրը: Տարեկան 100 հազար հոգուց աւելի մարզիկ (հաջիներ) ուխտ են գնում Մեկլա, աղօթելու Քաարա սրբավայրում և ծունը դնելու «ու քարին»: Վերջինս մահմեդականների գլխաւոր սրբութիւնն է համարւում, որը, նրանց հաւատով, երկնքից է բերւած Գարդիէլ հրեշտակապետի ձեռքով: Քրիստոնեաններին արգելում է, մահւան երկիւղով, Մեկլա մահել: Մինչև այժմ այնտեղ եղել են միայն սակաւթիւ եւրոպացի ճանապարհորդներ: Մեկլայի նաւահանգիստն է՝ Ջիլդա:

~~Արարիայի խորքերը շատ քիչ են ուսումնասիրւած: Նրա հարաւարկամտեան անկիւնը զրաւել են անգլիացիները: Արանք այդ մասում շինել են և լաւ ամբացրել Աղէնը, որ նըշշանաւոր նաւահանգիստ է Եւրոպայից դէպի Հնդկաստան և յետ գնացող նաւերի համար:~~

Արարիայի հարաւարկամտեան ծայրում ընկնում է մի արաբական պետութիւն, որ Օմանն է կոչւում. սրա նաւահանգիստն է Մասլատ: Այդ պետութիւնը գտնում է տնգլիական հովանաւորութեան տակ:

Արարիայի մնացած մասերում ապրում են արաբական մանր ցեղեր, որոնք կառավարւում են իրենց ցէյխերի ձեռքով: Այդ ցեղերը յաճախ կոխւներ են մղում իրար գէմ:

#### 14. ԱՍՈՐԻՔ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆ

Ասորիք (Սիրիա) և Պաղեստինը ներկայացնում են մի տեսակ շարունակութիւն Արարիայի բարձրաւանդակի և բաղկացած են հողակոշտերից: Միջերկրական ծովի ափով հիւ-

սիսից գէպի հարաւ ընկած է Ախանանի լեռնաշղթան (3 վեր.), սա բաժանւած է մի ընդարձակ հովտով՝ արևելքան կողմն ընկած Անտիլիքանան լեռնաշղթայից:

Հին ժամանակներում Ասորիքը (Սորիա, ՀՀփթել Ասորեստանի (Ասորիա) հետ, որ գտնուում էր Միջազգետքում), ինչպէս օր. Փոքր Ասիան, ամենահարուստ և ամենաարերի երկիրներից մէկն էր: Ասորիքը ունէր շատ առետրական քաղաքներ: Այժմ էլ այնտեղ ամեն մի քայլափոխի վրայ կարելի է հանդիպել հին քաղաքակրթութեան մնացորդների, — հոսուէական, արարական և քրիստոնէական հնութիւնների աւերակների: Ներկայումս նաւահանգիստները խանգարւած են, երկրի մեծ մասն էլ ներկայացնում է անսպաս, որտեղ թափառաշրջիկ կեսնք են վարում արար-քեդուինները: Միայն Միջերկրականի ծովափը և Անտիլիքանանի արևելքան լանջերը, որտեղ կան շատ ովազիսներ, յարմար են նստակեաց բնակութեան համար:

Ախանանի և Անտիլիքանանի մէջ ընկած ընդարձակ հովիտով է հոսում Յորդանան գետը, որը հոսում է գէպի Մեռեալ ծովը\*): (190 սաժէն ցածր է սվեխանոսի մակերեսովից):

Ասորիքի և Պաղեստինի բնակիչների մեծ մասը արարներ և ցեղակից ասուրիներ են, (հը եաները իրենց հայրենիք Պաղեստինից ցրւել են աշխարհի բոլոր կողմերը և այժմ քիչ հրեաներ են ապրում Պաղեստինում): Արարների և ասորիների գլխաւոր ըգբաղմունքը այսեւ-



Գլ. 14. Յորդանան:

\* ) Մեռեալ ծովը մի լիճ է, որի ջուրը շատ աւելի հարուստ է աղով, քան սովորական ծովային ջուրը. այնպէս որ այդ ջրում չեն կարող ապրել ոչ կենցանիներ, ոչ էլ բոյսեր, դրա համար էլ կռչւում է Մեռեալ ծով:

գործութիւնն է: Այդիներում շատ լաւ աճում են՝ խաղողի որթ, արմաւենի, ձիթենի, նարինջ: Ասորիքում, Անտիլիքանանի ստորոտներում, ծաղկում է և մետաքսակործութիւնը: Արաբները պարապում են նաև երկրագործութիւնը: Բայց որովհետեւ ամառը Ասորիքում և Պաղեստինում անձրեներ չեն գալիս, ուստի և ցանքսը անում են աշնանը, որ արտերը ջրւեն աշնանային և ձմեռային անձրեներով: Հունձը լինում է դարնան սկզբին:

Արհեստները և առևտուրը կենտրոնացած են քաղաքներում: Ասորիքի ամենանշանառ քաղաքն է Թամակոս: Սա երկաթուղով միացած է Բէյրութ նաւահանգստի հետ: Պաղեստինի գլխաւոր քաղաքն է Երուսաղեմ, որ ունի մօտ 50 հազար բնակիչ և երկաթուղով միացած է Եաֆֆա (Յուպիէ) նաւահանգստի հետ:



Նկ. 15. Երուսաղեմ:

Հնումը Պաղեստինը ունեցել է մինչև 4 միլիոն բնակիչ, իսկ ներկայումս՝ 400 հազարից էլ պակաս: Յորդանանի արևելեան կողմը ընկած մասը կատարեալ անապատ է, որտեղ թափառում են սակաւթիւ բեղուիններ:

Երուսաղեմը քրիստոնեաների և հրեաների համար սրբազն քաղաք է: Ամենատափառ տասնեակ հազարաւոր քրիստո-



Նեաներ ուխտ են գնում Երուսաղէմ: Երուսաղէմի գլխաւոր սրբութիւնը Յիսուսի գերեզմանն է, որի վրայ կառուցած է մի եկեղեցի և պատկանում է բոլոր քրիստոնէական դաւանութիւններին. այդաեղ անդադար ժամապաշտութիւն է լինում զանազան լեզուներով: Երուսաղէմում է գտնուում նաև հայկական Ս. Յակոբայ վանքը, որ ունի միաբանութիւն:

Պաղեստինից հարաւ է ընկնում Սինայի թերակղին, որ քարքարոտ մի անապատ է: Այստեղ թափառում են բեղուիններ, չկայ մշտական ընակութիւն Այստեղ է գտնուում Մովսիսի սարք, որի ստորագում կայ մի քրիստոնէական վանք, իսկ սարի կատարի վրայ՝ եկեղեցի և մզկիթ: Մովսիսի սարի գագաթից հրաշալի տեսարան է բացւում գէպի Կարմիր ծովը և Աֆրիկայի ափերը:

### 15. Ի Բ Ա Ն

Հայաստանից գէպի հարաւարեկլը գտնուում է Իրանի քարձրաւանդակը: Իրանը շատ աւելի մեծ է Փոքր Ասիայից և շրջապատւած է աւելի բարձր սարերով: Ամենաբարձրը ները գտնուում են հիւսիսում—Հինդումուշ եւ Ելրուս: Էլրուս լեռների ամենաբարձր գագաթն է Դմինանդ, որ մօտ  $5\frac{1}{2}$  վերսա բարձրութիւն ունի. նա հանգած հրաբուխ է:

Իրանի կիմման չոր է. ամառը այնտեղ սաստիկ շոգեր են անում, լինում են երկարատև երաշաներ.՝ հագւագէպ են երեւում երկնքում ամպեր, և օդը լցւած է լինում փոշով: Զմենը եղանակը խոնաւ ու ցուրտ է լինում, սարերի լանջերը ծածկւում են ձիւնով: Գարնանը ձիւնը հալչում է, և ձիւնի տակից բանում է խոտ, որ սակայն չուտ է չորանում:

Անտառներ Իրանում աճում են միայն էլրուսի հիւսային լանջերում, որտեղ մթնոլորտային տեղումներ շատ են թափւում, անտառներ կան նաև Հինդուկուշի հովիտներում: Իսկ Իրանի ամենաբնդարձակ մասը անապատ է, ծածկւած գեղին աւազով կամ աղի շերտով, որ արեի տակ փայլում է՝ ինչպէս ձիւն:

Մարդկային ընակութեան համար Իրանում ամենից յարմար են գետակների և գետերի ափերը: Սակայն այդ գետերը ջրառատ չեն, և համարեա բոլորն էլ կորչում են աւագուտների


և աղի ճահճուտների մէջ, ինչպէս օրինակ Հիլմենդ գետը. բայց և այնպէս այդ գետերի ափերին կարելի է պարապել երկը առ գործութեամբ և այս գետը ծութեամբ գետերից բերւումէ, ջրանցքների միջոցով, ջուր, և արտերը արևեստական կերպով ջրւում են: Որպէսզի ջուրը զուր տեղը չգոլորշիանայ, իրանի ժողովուրդները՝ ոլ արսի կները և ափ դանն երը այդ

ջրանցքները յաճախ գետնի տակ են շինում, երբեմն շատ խորը, մինչև 50 սաժէն և աւելի: Այդպիսի ստորերկրեայ ջրանցքները իրանում կոչւում են «կանատներ» և յաճախ ընկած են մի քանի տասնեակ վերստ երկայնութեան վրայ:

Իրանի դաշտերում ցանում են ը ը ի ն ձ, ցորեն և գ ա ր ի լ: Վերջին ժամանակներս սկսել են մշակել նաև ը ա մ բ ա կ և խ ա շ 2 (ավելոն): Այդին երում աճում են

դեղձի, ծիրանի ծառեր, փիւնիկեան արմաւենիներ, նշենի, խաղողի որթ, և այլն: Միրդ շատ է ստացւում իրանի այդիներից. յայտնի են իրանի չորացրած մրգերը:

Սարերի լանջերին, որտեղ խոտ է բանում, ապրում են թափառաշրջիկ խաշնակ արագ ամառն ապահով անասունների համար իրանի արօտատեղիները յարմար չեն:



Կը. 16. Տաճար Յիսուսի գերեզմանի վրայ:

Իրանի բարձրաւանդակի վրայ գտնուում են երեք պետութիւններ — Պարսկաստան, Աֆղանիստան և Բելուջիստան:

### 16. Պ Ա Ր Ա Կ Ա Ս Ա Տ Ա Ն

Իրանի բարձրաւանդակի արհմտեան, ամենամեծ, մասը բանում է Պարսկաստանը (որը 3 անգամ փոքր է Եւրոպական Ռուսաստանից), ունի մօտ 9 միլիոն բնակիչ։ Ազգաբնակութեան մեծ մասը պարսիկներ են. սրանք սպիտակ ցեղին են պատկանում, ցեղակից են հնդիկներին և հայերին։ Պարսկիները բոլորն էլ մահմեղական են (շխա դաւանութեան)։ Նրանց կառավարում է շահը, որ համարւում է Մահմեդի փոխանորդ։

Հնում Պարսկաստանը ամենազօրեղ թագաւորութիւններից մէկն է եղել իսկ այժմ ամենայետամեացներից է։ Ժողովուրդը ծանրաբեռնւած է մեծամեծ հարկերով։ Շահի նշանակած պաշտօննեանները հաւաքում են ժողովրդից տուրքիք և դատում նրանց իրենց քմահաճոյքի համաձայն։ Ճիշտ է, Պարսկաստանը մեր օրերում ձեռք բերեց սահմանազրութիւն, և այժմ թէ հրանում կայ պարլամենտ (մէջլիս), բայց նոր սահմանազրութիւնը դեռ ևս ամուր հիմքերի վրայ չէ դրւած։ Ժողովուրդը շատ աղքատ է, թշւառ վիճակի մէջ։ Մըշակելող հոգը համարւում է սեփականութիւն շահի կամ դանազան կալածատէրերի. սրանք իրենց են վերցնում հնձի մեծ մասը։ Ժողովրդական կը թութիւն ասած բանը չկայ. եղած ուսումնարաններում էլ սովորեցնում են միայն Դորան կարդար։



Կայ 17. Պարսկի կին։

Երկաթուղիներ չկան Պարսկաստանում։ Ապրանքների տեղափոխութիւնը կատարւում է ուղարքի և ձիերի կարաւաններով։ Արտաքին առևտուրը գտնւում է օտարերկրացիների ձեռ-

Քում: Սրանցից գերիշխում են՝ հիւսիսում ոռուսները, իսկ հաւրաւում՝ անգլիացիները: Ոռուսները Պարսկաստանից



ՀԱ. Նկ. 18. Պարսկական կառք:

արտահանում են՝ բամբակ, բրինձ, չորացրած միրզ, գորգ. ներմուծում են՝ ձոթեղին, շաքար և ոռուսական ուրիշ ապրանքներ:

Պարսկաստանի մայրաքաղաքը և ամենանշանաւոր առևտրական կենտրոնն է՝ Թիվրան: Սա գտնվում է Ելբուրս սարի հարաւային ըստորոտում. սարի լանջերից քաղաքը ստորերկրեալ

281

Ջրանցքների  
միջոցով ջուր է  
ստանում:

Միւս քաղաք-  
ներից նշանա-  
ւոր են՝ Ռաշտը,  
Բուշիրը, Թաւ-  
րիզը և Մեշե-  
դը: Ռաշտի վը-  
րայով է կա-  
տարւում ա-  
ռևտուր Ռու-  
սաստանի հետ,

Բուշիրի վրա-  
յով Ասդը հետ, իսկ Թաւրիզի վրայով Թիւրքիայի հետ:  
Թաւրիզում նստում է պարսից թագաժառանգը: Այնտեղ կան



ՀԱ. Նկ. 19. Փողոց Թիւրքանում:

մօտ 800 տուն հայեր. ունեն իրենց դպրոցները, բարեգործական ընկերութիւնները: Այստեղ է նստում Ատրպատականի հայոց առաջնորդը: Մեշտով պարսիկների սրբազն քաղաքն է, ուր ամեն տարի բազմաթիւ ուխտաւորներ են գնում Պարսկաստանի բոլոր ծայրերից և հարեան երկիրներից: Մնացած քաղաքներից յիշատակութեան արժանի է Սպահանը, երկրի հին մայրաքաղաքը: Այդ քաղաքի մօտ է գտնւում հայաբնակ նոր-ջուղա քաղաքը, որի բնակիչները գաղթել են Շահ Աբասի օրով: Նոր Ջուղայում հայերը ունեն դպրոցներ, բարեգործական ընկերութիւններ: Այստեղ է նստում Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդը:

### 17. ԱՅՂԱՆԻՍԱՆ ԵՒ ԲԵԼՈՒԶԻՍԱՆ

Իրանի հիւխս-արևելեան մասը, Հինդուկուշ լեռները և Պամիրի արևմտեան մասը բռնում է Աֆղանիստան աէրութիւնը: Բնակիչները կազմում են պարսիկներին ցեղակից ափդանները և տաճիկները: Ա. Փ. Ղանն երը սպիտակ ցեղին են պատկանում, բայց խառնած են ուրիշ ժողովուրդների հետ: Նրանք մահմեղական են, պատերազմասէր: Ապրում են գիւղերում և պարապում են երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Քաղաքներում ապրում են տաճիկն երը: Արքանք պարսիկների և մոնղոլական ցեղի ուրիշ ժողովուրդների խառնուրդ ժողովուրդ են: Տաճիկները պարապում են արհեստներով և առևտրով:

Աֆղանիստանը  $1\frac{1}{2}$  անգամ մեծ է Գերմանիայից, բայց բնակիչների թիւը շատ չէ (4 միլիոն): Երկիրը կառավարողը է միքն է, որ ապրում է Կառուկ մայրաքաղաքում, անգլիական սահմանին մօտ: Միւս նշանաւոր քաղաքն է Հերատ, որ գտնվում է ուստական սահմանին մօտ:

Իրանի բարձրաւանդակի հարաւ-արևելեան մասը կոչւում է Բելուջիստան, որ պատկանում է անգլիացիներին: Բելուջիստանը Իրանի բարձրաւանդակի ամենաամայի, ստկաւաբնակ մասն է: Բնակիչները մահմեղական են, կիսավայրենի, թափա-

փառական կեանք են վարում։ Նրանց կառավարում են իրենց խաները, որոնք այժմ ոռածիկ են սուանում Անդլիայից։ Անդլիացիները երկաթուղային գծեր են անցկացրել երկրով և շինել են Կվետտու ամրոցը։

### 18. ԽԻՎԸ ԵՒ ԲՈՒԽԱՐԻ.

Ամուշ-Դարեա գետի երկայնութեամբ ընկնում են Ռուսաստանի գերիշխանութեան տակ գտնուղ երկու երկիրներ— Խիվա և Բուխարա։ Իրենց ընութեամբ նրանք յիշեցնում են

Հիւսիսային իրանը և Արևելեան Թուրքեանը։ Այդ երկիրների կյաման չորէ, ամառը շոգ է լինում, իսկ ձմեռը՝ բաւական ցուրտ։ Անտառներ քիչ կան։ Դաշտերն ու այգիները արւեստական կերպով են ջրում։ Ջրանցքներով ջուրը բերում է Ամուշ-Դարեայից կամ ուրիշ գետերից, որոնք հոսում են Պամիրի և Տեան-Շանի սարերից։ Դաշտերում ցանում են բրինձ, ցորեն, բամբակ։ Այդինքներում աճում են՝ գեղձի, ծիրանի ծառեր։ Տեան-Շանի լանջերում կան լաւ արօտատեղիներ, որոնք կերակրում են թափառաշրջիկների հօտերը։

Այդ տէրութիւններում ապրում են թիւրք - թաթարական ժողովուրդներ, ինչպէս օրինակ՝ ուղրէ կներ, սարթեր, նաև սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներ, օրինակ՝ պարսիկներին ցեղակից տաճիկներ։

Նկ. 20. Թելուզիստանի խան։

Խիվայի գլխաւոր քաղաքն է՝ Խիվա, իսկ Բուխարայի գըլ-

խաւոր քաղաքը՝ Բուխարա։



# ՎԵՆՏՐՈՆԵԿԵՆ ՍՄԻԾ

## 19. ԲՆԴՀԱՆՈՒԹԻՌ ԱԿՆԱՐԿ

Կենտրոնական Ասիան տարածւում Հիմալայեան լեռներից մինչեւ Սայեանեան լեռները և Պամիրից մինչև Խինհան: Կենտրոնական Ասիան չորս կողմից սարերով է շրջապատւած, ուստի չոր կլիմայուն իւնի: Մակերեսոյի կազմութիւնն էլ անապատաց իւնէ: մանաւանդ միջին մասում, որտեղ տարածւում է Խանիսայ ցածրութիւնը, որ չինարեն է և նշանակում է «չորացած ծով»: Հին ժամանակներում, յիրաւի, այդ ցածրութիւնը ծածկւած է եղել ջրով, իսկ այժմ անապատ է: Արարական մասը աւագոտ է, իսկ արենելեան մասը քարքարոտ անապատ է և կոչում է Գորի կամ Շամձ: Գորի անապատից դէպի հիւսիս ընկնում է Մոնղոլական տափաստանը, որ ծածկւած է ցածրիկ խոտով: Գարնանը այդ տափաստանը կանաչում է և ծածկւում գոյնզգոյն ծաղիկներով: բայց այդ երկար չէ տևում. ամառը սկսւելուն պէս տափաստանը չօրանում է և ծածկւում փոշով: Հողագործութեան համար Մոնղոլական տափաստանը անյարմար է, որովհետեւ չափազանց չոր է:

Մարդկային բնակութեան համար անյարմար է նմանապէս Տիբետի բարձրասանդղակը, որ ամենաբարձր լեռնոտ երկիրն է երկրագնդի վրայ: Տիբետի լեռների գագաթները ծածկւած են մշտական ձիւնով: Սարերի լանջերը միայն ծածկւած են լինում աննշան խոտով: Անտառ համարեա թէ ոչ մի տեղ չկայ: հովիտներում կան աղի լճեր: Կլիման էլ խիստ ցամաքացին է: Զմեռները սաստիկ սառնամանիքներ են լինում, մինչև  $40^{\circ}$  ցրտութիւն, ամառներն էլ սաստիկ շողեր են անում: [Կրկնել «կլիմայ» դասի (յօդ, 5) Կենտր. Ասիային վերաբերող կառը]: Կենտրոնական Ասիան բռնում է ամբողջ Ասիայի  $\frac{1}{6}$  մասը, սակայն շատ նօսր բնակութիւն ունի, ընդամենը մօտ 6 միլիոն բնակիչ: Կենտրոնական Ասիայի մասերն են կազմում—Տիբետ, Արենելեան Թուրքիստան և Մոնղոլիա:


## 20. Տ Ի Բ Ե Տ

Տիբետի բնակիչներն են՝ մոնղոլական ծագում ունեցող տանգուտները և տիբետցիները: Տանգուտները թափառացրիկ խանաբածներ են: Բացի ոչսարից և ձիուց նրանք պահում են նուև եակ (լեռնային ցուլ) Այս կենդանին գործ է ածւում նստելու կամ բեռնակրութեան համար: Նա նեշտութեամբ կարող է սար բարձրանալ նոյնիսկ այն ժամանակ, եթէ

շատ ծանր բեռ ունի վրան։ Տանգուտները ապրում են սկ վրաններում, պատրաստած եակ կենդանու բրդից։

Տիբետցիները մեծ մասով նստակեաց կեանք են անցկացնում։ Լեռնային հովիաններում նրանք մշակում են դարի և ցոր են. ապրում են քարաշէն տներում։ Տիբետցիները խառնուրդ ժողովուրդ են. մասամբ նման են մոնղոլներին, մասամբ էլ չինացիներին։ Չինացիներից են փոխ առել նրանք իրենց քաղաքաց ակրթութիւնը—տներ շինելու եղանակը, հող մշակելու ձևը, նոյնիսկ զգեստները։ Իրենց միւս հարևաններից, հնդիկներից, փոխ են առել իրենց կրօնը՝ բուդդի հակառակութիւնը։

Բուդդայական  
կան կրօնը ծառ  
գել է 6-րդ դար  
բում Թիբետուցից  
առաջ։ Այդ կրօնի  
հիմնադիրն էր  
հնդկական մի իշխանի սրգի՝ Սակա-  
կիա-Մունի կամ  
Բուդդանունով։  
Բուդդայի հետեւ  
լոգիները հալած-  
ւեցին Հնդկաս-  
տանից և տա-  
րածւեցին Կեն-  
տրոնական և Ա-  
րևելեան Ասիայի  
ամբողջ տարա-  
ծութեամբ։ Այժմ  
այս կրօնին հետեւում են երկրա-  
գնդի վրայ աւե-



Նկ. 21. Լամա։ Վաճի Լիաստայում, որտեղ ապրում է Գուլայ-Լաման։

Այս թւով մարդիկ, քան որևէ ուրիշ կրօնի։

Բուդդայականութիւնը առանձին և աւելի ազդեցութեան է ունեցել Տիբետի ազգաբնակութեան վրայ։ Համարեա ամեն մի ընտանիքի միջից դուրս է գալիս մի հոգեորական։ Հողերականները Տիբետում կոչւում են լամաներ։ Տիբետում կան բազմաթիւ վանքեր, այդ վան-

քերում ապրում է երկրի ամբողջ ազգաբնակութեան համարեա <sup>1/8:</sup>  
մասը:

Տիրեալի և ընդհանրապէս բոլոր բուդիայականների կրօ-  
նապետը կոչում է Դալայ-Լամա, որ համարում է Բուդդ-  
հայի մարմնացումը և փոխանորդը այս աշխարհի վրայ: Դալայ-  
Լաման և նրան շրջապատողներն են կառավարում Տիրեալը, որը  
սակայն գտնուում է Զինաստանի գերիշմանութեան տակ:   
Դալայ-Լաման ապրում է երկրի մայրաքաղաք Լհասսայում  
(25,000 բնակիչ):

Դալայ-Լամային երկրագելու համար ամեն տարի հազարաւոր  
ուխտաւորներ են գնում Լհասսա՝ ոչ միայն Կենտրոնական Ասիայից,  
այլ նաև Արևելեան և հարաւային Ասիայից: Բայց եւրոպացիների մուտ-  
քը Լհասսա արգելած է: Այդ քաղաքի մշտական բնակիչների մեծ մա-  
սը կրօնաւորներից է բաղկացած:

## 21. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆ

Արելեան Թուրքեստանը իր մեծութեամբ հաւասար է Եւ-  
րոպական Ռուսաստանի <sup>1/3</sup>-ին, սակայն ունի հազիւ մէկ մի-  
լիոնից աւելի բնակիչ: Բնակիչների մեծ մասը նստակեաց-  
կեանք է վարում, ապրում է ովագիսներում, սարերի ստո-  
րոտներում, Թարիմ <sup>1</sup> և ուրիշ գետերի ափերին: Բնակիչների  
մեծ մասը թուրք-թաթարներ են: Սրանք փորել են ան-  
համար ջրանցքներ, որոնցով և գետերից ջուր են բերում իրենց  
դաշտերը և այգիները ջրելու համար: Այնտեղ ստացւում են  
լաւ ցորեն, ձմերուկ, սեխ և ուրիշ տեսակ մրգեր—ծիրան,  
դեղձ և այլն: Բայց որտեղ ջուր չէ հասնում, այնտեղ երկիրը  
աւազոտ անապատի է փոխւում:

Արելեան Թուրքեստանի ամենանշանաւոր քաղաքներն են՝  
Եարկենդ և Կաշգար:

Արելեան Թուրքեստանն ևս պատկանում է չինացիներին  
և կառավարում է նրանց պաշտօնեաներով:

## 22 ՄՈՆղՈԼԻԱ

Մոնղոլիան Արևելքան Թուրքեստանից երկու անդամ առելի մեծ է, բայց նրանից էլ առելի նոսր բնակութիւն ունի. բնակիչների թիւը 2 միլիոնից պակաս է: Աւագուտ անապատներ գանւում են Մոնղոլիայի արևելքան մասում միայն, իսկ երկրի մեծ մասը կամ տափաստան է, շատ սակաւ բուսականութեամբ, կամ թէ չէ՝ քարքարոս անապատներ: Մոնղոլիայի բնակիչները բոլորն էլ թափառաշըջիկ են:



Նկ. 22. Մոնղոլներ:


Թափառաշըջիկ մոնղոլները պարապում են անտառն ապահով եամբ—պահում են ոչխար, ձի և երկսապատ ուղարերը նրանց անասունները ուտում վերջացնում են մի տեղի խոտը, նրանք քոչում են մի ուրիշ խոտաւէտ տեղ: Ամառը, երբ գաշտերում չորանում է խոտը, նրանք բարձրանում են Սայեանեան, Ալտայեան և Տեալ-Շան սարերի լանջերը, որտեղ ամբողջ ամառը արօտատեղիները մնում են կանաչ: Մշտական, հաստատուն բնակավայրեր Մոնղոլիա-

յատմ շատ քիչ կան: Դրանք կամ վանքեր են, որտեղ ապրում են լամաներ (բազդհայական կրօնաւորներ) կամ փոքրիկ քաղաքներ: Ամենանշանաւոր քաղաքն է Մոնղոլիայում՝ Ուլգաս: Այստեղ կան բազդհայական շատ վանքեր և տաճարներ, որտեղ ապրում են հազարաւոր լամաներ և նրանց ամենաբարձր կրօնաւորը, որ կոչւում է թօղդո: Ուլգայով են անցնում թէ յ փոխազբող կարաւանները. մօնղոլները թէյ են փոխազբում Զինաստանից մուսաստան՝ սահմանակից Կեախտա քաղաքի վրայով:

Մոնղոլները, որ այժմ սակաւաթիւն, հնում եղել են մեծ և շատ պատեր աղման է ը աղգով կամ կենարոնական Ասիայից նրանք մեծ հորդաներով (խմբերով) դուրս են կան, խուժեցին հարաւարեներան Եւրոպա և հարաւարեներան Ասիա ու աւերցին շատ երկրներ, նրանք տիրեցին Հայաստանին և նոյնիսկ Ռուսաստանին:

Մոնղոլները յաճախակի տրշաւանքներ էին գործում չինացիների վրայ, որոնցից և պաշտպանուելու համար նրանք շինեցին չինական մեծ պարիսպ պը, որ 2,000 վերստից աւելի երկայնութիւն ունի: Բայց մոնղոլները յետոյ ըռուգդ հայ ականութիւն ընդգունեցին, որ խաղաղութիւն և անզործութիւն է քարոզում: Այսպէս թուլացան մոնղոլները և նւաճեցին չինացիներից: Այժմ մոնղոլները ենթարկում են Զինաստանին և նրանց իշխանները չինական կառավարութեանը հարկ են վճարում:

Մոնղոլները ցածրահասակ են,—սկ, բիզ և կոշտ մազերով: Նրանց զլուխը մեծ է, երեսը՝ լայն, աչքերը՝ թեք: Մոնղոլների գէմքի գծազրութեան մէջ այնչափ աչքի են ընկնում զեղին ցեղի բոլոր առանձնայատկութիւնները, որ յաճախ դեղին ցեղ ասելու փոխարէն ասում են մոնղոլական ցեղ:



Կապ. 23. Չինական մեծ պատրիսապը:

# Հ Ա Ր Ե Ւ Ը Ց Ի Ն Ե Ս Ի Ւ Ը

## 23. ԷՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հարաւային Ասիայի մասերն են կազմում—Հնդկաստան, Հնդկաշխն և Մալայինան արշիպելագի կղզիները: Այս բոլոր երկիրներն եւ համարեա ամբողջովին տաք գ օ տ ո ւ մ են գտնուում: Այն մասերն եւ, որոնք արևադարձից հիւսիս են ընկած, նմանապէս ունեն արևադարձին, տաք և մեծ մասով խոնաւ կլիմայ: Զմեռ, ինչպէս մեղնուում էր այնտեղ չի լինուում: Տարւայ ամենազով եղանակն էլ աւելի շոգ է, քան մեղնուում ամառը. իսկ տարւայ եղանակները որոշուում են այն բանով՝ ձիւն գալի՞ս է, թէ ոչ:

(Կ ը կնել «կլիմայ» դասի (յօդ. 5) Հարաւային Ասիային վերաբերութեամբ ամբողջ մայր ցամաքի ամենահարուստ մասն է. ունի հարուստ, արևադարձային բուսականութիւն») և շատ խիտ բնակութիւն: Այստեղ շատ հին ժամանակներուում արդէն ազգաբնակութիւնը նստակեաց կեանք էր վարուում, հասել էր բարձր զարգացման և հիմնել մեծ պետութիւններ, որոնք յետոյ եւրոպացիների իշխանութեան տակ ընկան:

## 24. ՀՆԴԿԱՆՍԱՆ

Հնդկաստան կոչուում է այն ընդարձակ (մեծութեամբ համարեա հաւասար Եւրոպական Ռուսաստանին) երկիրը, որ արևելեան կողմից ողողուում է Բենգալեան ծոցով, արևմուտքից Արաբական ծովով, իսկ հիւսիսային կողմից նրա սահմանն են կազմուում Հիմալայեան, Սոլիմանեան և Հնդկաչինի լեռները:

Հնդկաստանը շատ հարուստ բնութիւն ունի: Ամառը հարաւար և մատեան մուսսոնները յորդ անձրեներ են քերուում այնտեղ: Մանաւանդ շատ անձրեներ են գալիս Դեկան բարձրաւանդակի արևմտեան ծայրերուում, որոնք աւելի բարձր են, սարերի նման, (1 վերստ) ու կոչուում են Արևմտեան Հաղէս (Արևելեան Հաղէսը<sup>1/2</sup> վերստ բարձր): Անձրեներ շատ են գալիս նաև Հիմալայեան սարերի ստորոտներուում Բենգալիայում: Այդ արգաւանդ հարթութիւնը գոյացել է Գանգէսի,

Բրահմապուտրայի և նրանց վտակների լիցքից—բերած հողից և տիղմից: Այդ հարթութեան հիւսիս-արևեմտեան մասում՝ ինչըսի և նրա վտակ Սետիկիցի-մէջ ընկած վայրերում շատ աւելի պակաս անձրև է գալիս, բայց դարձեալ բաւարար չափով: Աւելի արևելք ընկած է Թար, անապատը, որտեղ արդէն հազւագէպ անդամ են անձրևներ գալիս:

Իր լաւ ոռոգման և տաք կլիմայի շնորհիւ հնդկաստանը երկրագնդի ամեն ապագաւէ տերկիրներից մէկն է: Նրա աւելի խոնաւ տեղերում, մանաւանդ Բենգալիայում, առատօքէն աճում է բրինձ, համեմատաբար պակաս խոնաւ տեղերում աճում են ցորեն, բամբակ, կորեկ, բանան և ուրիշ շատ մշակովի բոյսեր:



Նկ. 24. Հիմալայեան լեռներ:

Շատ հնուց այստեղ ընդարձակ տարածութիւններ, մանաւանդ խոնաւ տեղերում, ծածկւած են եղել արևադարձային անտառներով: Այդպիսի անտառներ այժմ էլ կան Հիմալայեան լեռների լանջերում և Արևմտեան հատէսի վրայ: Դեկանի վրայ եղած սաւաններն էլ համարեա բոլորը մշակւած դաշտեր են այժմ:

Հարուստ է Հնդկաստանի նաև կենդանական ականաշխարհութեանը:  
Հնդկաստանի արօտատեղիները կերակրում են միլիոնաւոր  
անասուններ, մանաւանդ սապատաւոր եղներ (*զերու*) և գո-  
մեշներ: Դեռ հին ժամանակներում էլ Հնդկաստանը յայտնի  
էր աւմաստ և մարդարիտ թանգաղին քարերով. այժմ էլ  
ալմաստ գտնում է Դեկանում, իսկ մարդարիտ՝ ծովում,  
Ցէյլոնի եղերքում:

Թէպէտ իր տարածութեամբ Հնդկաստանը Եւրոպական  
Ռուսաստանից փոքր է, բայց այնտեղ ապրում են 300 միլի-  
ոն բնակիչներ, այսինքն՝ երկու անգամից էլ աւելի շատ,  
քան ամբողջ Ռուսաստանում:

Շատ հին ժամանակները Հնդկաստանում ապրում էին դրա-  
ւի դներ, —սև ցեղին պատկանող մի ժողովուրդ: 2,000 տարի Քրիս-  
տոսի ծննդից առաջ Իրանի բարձրաւանդակից այստեղ եկան սպիտակ  
ցեղին պատկանող հնդիկները: Մերաւիդներին նրանք դէպի հա-  
րաւ քշեցին—Դեկանի բարձրաւանդակը և Ցէյլոն կղզին: Խճրզ դարի  
վերջում Ք. ծ. յետոյ այդ երկիրը արշաւեցին թափառաշրջիկ մոն-  
ղուները, որոնք նկեր էին կենտրոնական Ասիայից: Նրանք հպատակե-  
ցրին հնդիկներին, հիմնեցին մեծ պետութիւններ և իրենք էլ նստակ-  
եաց դարձան: Սակայն ժամանակի ընթացքում նրանք խաւնւեցին  
Հնդիկների հետ և մոռացան նոյն իսկ իրենց լեզուն: Վերջապէս, երբ  
գտնեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան, այն ժամանակից  
դէպի այդ երկիրը դիմեցին շատ Եւրոպացիներ—սկզբում պորտուգա-  
լացիներ, յետոյ ֆրանսիացիներ և անգլիացիներ:

Ներկայումս Հնդկաստանը պատկանում է Անգլիային:  
Սրան են պատկանում նաև Հնդկաչին թերակղզու հիւսիս-արե-  
մտեան և Բելու ջրատանի արեւելեան մասը: Անգլիական այս  
բոլոր կալւածները միասին կոչւում են Բըխտանական Հնդկաս-  
տան: Բըխտանական Հնդկաստանը մակերեսոյթի տարածու-  
թեամբ համարեա հաւասար է Եւրոպայի կէսին և 14 անգամ  
մեծ է Անգլիայից:

Բըխտանական Հնդկաստանում այժմ ապրում են բոլոր ե-  
րեք՝ սովիտակ, սև և զեղին ցեղերին պատկանող ժողովուրդներ:   
Մերանքին են պատկանում գըւաւիդները: Սրանք ապրում են  
Հնդկաստանի հարաւ-արևելեան մասում: Նրանց թիւն է մօտ  
40 միլիոն: Հիմալայեան լեռների լանջերին և Հնդկաչինում

տպըում են գեղին ցեղին պատկանող ժողովուրդներ, որոնք  
սակայն շատ են փոխւել իրենց հարեան հնդիկների ազդեցու-  
թեան տակ Նրանց թիւն  
է մօտ 15 միլիոն: Հընդ-  
կաստանի հիւսիս - արև-  
մտեան մասում և հընդ-  
կական հարթութեան վր-  
բայ բնակւում է սպի-  
տակ ցեղին պատկանող  
հնդիկ ժողովուրդը:  
Հնդիկների թիւն է մօտ  
200 միլիոն: Նրանք կազ-  
մում են Հընդկաստանի  
ազգաբնակութեան գրւ-  
խաւոր մասը և բաժան-  
ւում են շատ ցեղերի:  
Հնդիկները յայտնի են  
իրեն բարի բնաւորու-  
թեան տէր ժողովուրդ:

Հնդիկները պարապում  
են երկրագործու-  
թեամբ: Խոնաւ վայ-  
րերում նրանք մշակում  
են գլխաւորապէս բը-  
րինձ: Այս բոյսի ա-  
ճելու համար բաւական  
չեն նոյնիսկ այն յաճա-  
խակի անձրեները, որ տե-  
ղում են Բենգալիայում.

այդ պատճառով էլ Հնդիկները Գանգէս և ուրիշ գետերից փո-  
րած ջրանցքներով ջուր են բերում և դաշտերը ջում: Շնոր-  
հիւ այս բանի էլ այնտեղ տարեկան երկու անգամ է բրնձի  
հունձ լինում: Աւելի արևմուտք, որտեղ պակաս անձրէ է լինում,



Նկ. 25. Հնդկական օրջանի կենդանիներ:

յաջողւում է տարեկան միայն մէկ հունձ. Ի՞սդոս գետի և նրա վտակների մէջ եղած տարածութեան վրայ հնդիկները գերաշ-

դասում են ցանել ցորեն, իսկ Դեկանի բարձրաւանդակի վրայ՝ կռեկի:

Բացի հացահատիկներից՝ հնդիկները իրենց գաշտերում մշակում են նաև շատ ուրիշ բոյսեր։ Նրանցից ամենաշանաւորըն են՝ բամբակ, ջուտ կամ հնդկական կանեփ, որի թելերից պարան են գործում, խաշ-խաշ, որից պատրաստում են ափին։

Այդիներում անկում են բանան և զանազան տեսակի արմաւենիներ (կոկոսեան և փիւնիկեան արմաւենիներ)։ Հիմալայեան և Հատէսլեռների լանջերին վերջերս սկսել են զցել նաև թէյի անկարաններ (սլանտացիաներ)։ Յէյլոն կզզին համարեա ամբողջովին ծածկւած է թէյի, սուրճի, կինամոնի (դարչին) արնեկարաններով։

Անասուններ պահում են հընդիկները միայն հողի մշակութեան և բեռնակրութեան համար։ Ըստանիկենդանիներին նրանք սուրը են համարում. հաւատում են, թէ մեռածմարդու հոգին այս կամ այն կենդանու մէջ ընակութիւն է հաստատում։ Նրանք երբեք կենդանուն-



Կ. 26. Թրակով։



Կ. 27. Հնդկուհի։

չեն մորթում, միտ չեն ուտում. չեն գործածում նաև կաթ-

նեղեն։ Հնդիկները շատ "աղքատ են ապրում։ Այդ աղքատութիւնը երկու զլամաւոր պատճառ ունի. 1) Հնդիկները թուլակազմ են, չեն

կարողանում այնպէս աշխատել, ինչպէս եւրոպացիները, և 2) Հնդկաստանը այնչափ շատ քնար է ի չները ունի, որ ամեն մէկին հացահատիկի և պտղի հնձի մի չնչին մասն է ընկնում: Եւ երբ հունձը վատ է լինում,—իսկ այդ լինում է ամեն անդամ, երբ մուսոնները ուշանում կամ քիչ անձրեն են բերում,—այն ժամանակ արդէն Հնդկաստանում սովոր է լինում, և միլիոնաւոր մարդիկ մեռնում են սովամահից:

Արդիւնագործութիւնը շատ քիչ է զարգացած Հնդկաստանում: Միայն վերջերս անգլիացիները սկսել են այնտեղ ևս գործարաններ հիմնել: Ազգանքների մեծ մասը բերում է Անգլիայից: Առևտուրը մեծ է: Ամենից շատ արտահանում են՝ բամբակ—անմշակ դրութեան մէջ—բրինձ, ցորեն, ջուտ: Այս բոլորը արտահանում է դէպի Եւրոպա, գլխաւորապէս՝ Անգլիա: Խաշխաշը արտահանում է դէպի Չինաստան:

Հնդիկների մեծ մասի կը օնը հեթանոսական է, գլխաւորապէս բրահմայական: Նրանց գլխաւոր աստւածն է Բրահմա: դա ստեղծագործող աստւածն է և արեգերքի հոգին: Հնդիկները պաշտում են նաև ծառերի, սարերի, գետերի ողիների և այլն: Առանձին յարգանքի առարկայ է Գանգիս գետը, որ սրբագան է համարում: Նրա մէջ լողանալը կրօնական ծէս է: Հնդիկները սրբազն են համարում նաև որոշ կենդանիներ, որովհետև հաւատում են, թէ մեռած մարդկանց հոգիները նրանց մէջ են բնակութիւն հաստատում: Հնդիկների մէջ քիչ չեն նաև մահման դական բարեկամութում, իրանի սահմանի մօս:

Հնդիկները ընդունակ են ժամանակներում, երբ այժմեան եւրոպական ժողովուրդների նախնիները զեռ վայրենի էին, Հնդկաստանում ծաղկում էին գիտութիւնն ու գեղարվեստը: Սակայն յետոյ կանգ առաւ նրանց մտաւոր զարգացումը զրա գլխաւոր պատճառը ժողովրդի կառաւան երի բաժանաւած լինեն էր, այդ կաստաները (նեղ, քարացած դասակարգերը) մինչև օրս էլ կան հնդիկների մէջ: Ամեն մի կաստա թշնամաբար է վերաբերում ուրիշ կաստայի: Բարձր կաստաներին պատկանողները, օրինակ՝ քրմերը (հոգեորականները) և զինւորականները ասում են և իրենց հեռու պահում ցածր կաստաներին պատկանողներից, օրինակ՝ երկրագործութիւն է համարում:


Ներկայումս Հնդկաստանը անգլիացիների իշխանութեան տակ է: Անգլիացիների թիւը այնտեղ 200 հազարից աւելի

չէ, — զլիսաւորապէս պաշտօնեաներ, վաճառականներ, զինւորականներ և այլն: Անզլիացիները շինում են Հնդկաստանում երկաթուղիներ, փորում են ջրանցքներ, ծաղկեցնում են առևտուրը, հիմնում են գլբոցներ, թուլացնում են կաստաների մէջ եղած հակառակութիւնը, և այլն:

Մինչև այժմ սակայն չէ յաջողւում նրանց կոիւր խոլեր այի, ժանտախտի և մալեաթի այի (ճահճային տեսնդ) դէմ: Այս հիւանդութիւնների բոյնը Հնդկաստանն է, որտեղ ամեն տարի մի քանի միլիոն հնդիկ է մեռնում: Խոլերան շատ զոհներ է տանում զլիսաւորապէս ամառը, խոնաւ ժամանակ՝ ժանտախտը՝ ձմեռ, չոր ժամանակ. մալեարիան՝ ամբողջ տարին անընդհատ:


Կառավարչան տեսակէտից Հնդկաստանը բաժանում է նահանգների—որոնք կառավարուում են անզլիական նահանգապետաներով—և առանձին պետութիւնների, որտեղ գեռը բոլորովին չեն կորցրել իրենց իշխանութիւնը տեղական հնդիկ իշխանները. սրանք ու աջան են կոչւում: Սրանք էլ առանց անզլիացիների ոչինչ անել չեն կարող, նրանցից են սոճիկ ստանում: Ամբողջ Հնդկաստանի կառավարութեան գլուխ է կանգնած անզլիական փռխարքան:

Հնդկաստանի զլիսաւոր քաղաքը և փոխարքայի աթոռանի ստուն է Կալկաթան: Երկու հարիւր տարի առաջ Կալկաթայի տեղը ձրկնորսների մի փոքրիկ զիւղ էր, իսկ այժմ՝ ամենաշանաւոր նաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է ( $1,300,000$  բնակիչներով) Հնդկաստանում: Անզլիացիների շնորհիւ դարձեալ՝ արագօրէն մեծացաւ Բուրէյը



Նկ. 28. Անզլիացիների համամատակային մեծությունը: (800 հազար բն.): Այս

Երկու նաւահանգիստների վրայով է կատարւում Հնդկաստանի համարեա ամբողջ արտաքին առևտուղը: Բաւական նշանաւոր են նաև հետեւեալ նաւահանգիստները.—Մաղրաս, Կարաչի (Ինդոսի գետաբերանի մօտ) և Կոլմամ (Յէլլոնում): Հնդկաստանի ներսում եղած քաղաքներից շատ նշանաւոր է Բենարէ-



Կա. 29. Բենարէս բաղամը:

ուն՝ (Գանգէսի վրայ) իրեկ հնդիկների սրբազն քաղաք: Ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ են գնում այնտեղ\*):

\*). Այդ ուխտաւորները աղօթում են տաճարներում, որոնց թիւը Բենարէսում հազարից աւելի են հաշւում. լոգանում են սրբազն գետում (Գանգէսում), առաւօտեան շատ վազ: Խուռը բազմութեամբ հընդիկները մանում են պղտոր գետը, աղօթելով և ծաղիկներ ցանելով գետի վրայ: Ապա բուսով ջուր են առնում գետից, լւանում ուսերը, գլուխը, կուբձը և թիկունքը: Հիւանգներին, նոյնիսկ մահամերձներին, ազգականները բերում են այգանեղ, որպէսզի գետը բժշկէ նրանց կամ բարի վախճան տայ: Իսկ գետի ափին բոցավառում են խարոյկները, որոնց վրայ այրում են մեռածների գիւղիները: Այրածների աճիւնը ցցում են Գանգէս, որ գետը տանէ ովկիանոս:

## 25. ՀՆԴԿԱՌԻՆ

Հնդկաչինը լեռնային թերակղզի է. մի կողմից ողողւում է Բենգալիսան ծոցով և Մայակկայի նեղուցով, իսկ միւս կողմից՝ Հարաւային-Զինական ծովով (Սիամի և Տոնկինի ծոցեր): Թերակղզու հիւսիսային ամբողջ մասը ծածկւած է բարձր (2—3 վերստ), դժւարամատչելի լեռներով, որոնք կազմում են Տիբետի լեռների շարունակութիւնը: Քանի հարաւեն գնում լեռները, այնքան էլ ցածրանում են: Լեռնաշղթաներից մէկը ձգւում է գէպի հեռու հարաւ, կազմելով Մայակկա թերակղզին:

Հարաւարեսմտեան մուսսոնները ոռոգում են Հնդկաչինը աւելի լաւ, քան Հնդկաստանը: Այս է պատճառը, որ Հնդկաչինի լեռները բոլորն էլ ծածկւած են արեադաշյին խիտ անտառներով: Այդ անտառներում ապրում են վայրի փղեր, ոնդեղջիւրներ, տապիրներ, բաղմաթիւ կապիկներ: Սակայն այդ անտառները մարդկային բնակութեան համար անյարմար են, որովհետեւ շատ դժւար է մաքըել նրանց՝ հողագործութեան յարմարացնելու համար:

Լեռնաշղթաների մէջ ընկած հովիտներով հոսում են հետեւեալ գետերը. Մեկոնգ, Իրաւադի և ուրիշներ: Այդ գետերի հովիտները շատ նեղ են, այդ պատճառով դրանք ևս անյարմար են մարդկային բնակութեան համար: Միայն գետաբերաններից ոչ հեռու այդ հովիտները լայն են, ծածկւած արգաւանդ հողով:

Հէնց այստեղ էլ կենտրոնացած է Հնդկաչինի ազգաբնակութեան մեծագոյն մասը: Այդ ազգաբնակութիւնն էլ խառն է: Արևմուտքում գերակշռում են հնդիկները, արեելքում՝ չինացիները, իսկ հարաւում՝ մալայցիները: Նրանք ըգբաղւում են երկրագործութեամբ, գիտաւորապէս բրնձի մշակութեամբ: Ծնորհիւ առատանձրեների և, բացի դրանից նաև արևեստական ոռոգման՝ բրնձի հունձը միշտ այնքան առատ է լինում, որ Հնդկաչինից շատ բրինձ է արտահանուում ուրիշ երկրներ:

Հեռների լանջերին, արևադարձային անտառների մէջ, շատ դժւար է մշակել հողը. այդ պատճառով էլ այդ տեղերի գլխաւոր զբաղմունքներն են՝ անտառային և լեռնային աշխատանքները—փայտ կտրելը և վաճառելն ու հանքերում աշխատելը:

Համարեա ամբողջ Հնդկաչինը և բոպացիների իշխանութեան տակ է: Նրա հիւս.-արեւմտեան մասը կոչւում է Բիրման, որ պատկանում է անգլիացիներին. կառավարուում է Հնդկաստանի փոխարքան:

Բիրմայի զիմաւոր նաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է Ռայանգրուն: Ինչպէս միւս նշանաւոր նաւահանգիստները Հնդկաչինում, այնպէս նաև այս նաւահանգիստը նշանաւոր է քրնձի և արժէքաւոր փայտեղէնի արտահանութեամբ: 250,000 լ.

Անգլիացիներին է պատկանում նաև Մալակայի հարաւային մասը, որի ծայրում, փոքրիկ կղզու վրայ, գտնվում է անգլիական նշանաւոր Սինգապուր նաւահանգիստը. սա հանգստատեղի է բոլոր այն նաւերի համար, որոնք Հնդկական ովկիանոսից դէպի Մեծ ովկիանոսն են գնում, կամ ընդհակառակը:

Հնդկաչինի արևելեան մասը պատկանում է Փրանսիային. զիմաւոր նաւահանգիստն է Սայզոն: 300,000 լ.

Հնդկաչինի կենտրոնում, Անգլիայի և Ֆրանսիայի կալածների մէջ, գտնվում է Սիկմ անկախ պետութիւնը: Նրա մայրաքաղաքը և ամենանշանաւոր նաւահանգիստն է՝ Բանգկոկ (600 հազ. բն.):



## 26. ՄԱԼԱՅԵԱՆ ԱՐԵՒՊԵԼԱԳ

Մալայեան արշիպելագը գտնվում է Ասիայի և Աւստրալիայի մէջ և կարծես մի կամուրջ լինի՝ ովկիանոսի վրայ զցած: Նա բաղկացած է հետեւեալ կղզիներից.—Մեծ-Զոնդեան խումբ

(Սումատրա, Եասս, Բոռնէօ, Ցելեբես), Փոքր-Զոնդեան, Մոլլուկեան եւ Փիլիպպինեան կղզիներ:

Արշիպելագի ծայրերում, այսինքն Հնդկական և Մեծ ովկիանոսների եզերքին, ընկնում են մի շարք հանգած և գործող հրապարակներից մեծամեծ դժբախտութիւններ են առաջանում, մասնաւանդ Սումատրայում և Եաւայում: Միայն վերջինիս վրայ եղած հրաբուխների թիւն է՝ 45\*):

Մալայեան արշիպելագի կլիման արեագարձային է և անփոփոխ: Այստեղ հաւասարապէս տաք է լինում թէ ձըմեռուայ և թէ ամառուայ ամիսներին: Մթնոլորտային տեղումներ շատ են թափուում և երաշտ երեք չէ լինում: Այսպատճառով էլ կղզիները ծածկւած են արևադարձային փարթամ առաջաներով:

Այդ անտառները այնչափ խիտ են, որ կապիկները կարող են մեծ ճանապարհորդութիւններ անել՝ մի ծառից միւս ծառը թռչելով և երեք ոտքը գետնին չդնելով: Ծառերը այնքան բարձր են, որ մեր երկրի գարաւոր կազմիներից և մայրիներից բաղկացած անտառները նրանց հետ համեմատած կարծէք թփուաներ կամ մանրածառ անտառներ լինեն:

Կենդանիները այդ անտառներում շատ կան, մանաւանդ մայր ցամաքին մօտ գտնուղ կղզիներում: այնտեղ կան թէ վայրի փղեր, թէ ոնդեղջիւրներ և վազրեր, և թէ մարդանման կապիկներ:

Արշիպելագի բնիկ ազգաբնակութիւնը կազմում են մալայիները, որոնց անունով էլ արշիպելագը Մալայեան է կոչւում: *Կօ մալային նույներուայ քաշի*

Մալայցիները զեղին ցեղին պատկանող ժողովուրդներից են: Աւելի արևելք ընկնող կղզիների վրայ նրանք խառնւել են պապուանների (սկ) հետ: Մալայցիները ընդամենը 40 միլիոն են, որոնցից 25 միլիոնը եաւա կղզու վրայ է ապրում: Նրանց մի մասը մինչև այժմ

\*) Սումատրայի և Եաւայի մէջ, Զոնդեան նեղուցում, գտնուում է կը առ առ հրաբուխը, որ երկար ժամանակ համարւում էր հանգած: 1883 թւականին այդ հրաբուխը ուժգին կերպով սկսեց գործել և ժայթքել: Հրաբոխի բենից գուրս ժայթքեց 30 վերաս բարձրութիւնը ունեցող փոշու մի սիւն: Ովկիանոսի ալիքները Սումատրա և Եաւա կղզիների շատ գիւղեր և քաղաքներ ծովի տակով արին, 40,000 մարդ ոչնչացան սրանից: Հրաբոխի սաստիկ ժայթքոցը լուսի եղաւ Յէլլոն և Ֆիլիպպինեան կղզիների վրայ:

կիսավայրենի կեանք է անցկացնում: Մալայցիների մեծ մասը զբաղւում է երկրագործութեամբ, զլբաւորապէս բրնձի մշակութեամբ:

Մալայցիները զբաղւում են նաև արմաւենիների (կոկոսեան և սագոսեան), բանանի և արքայախնձորի (ահանաս) ծառերի մշակութեամբ: Նրանք յայտնի են՝ նաև իբրև ճարպիկ ձկնորսներ և ծովագնացներ:

Բացի մալայցիներից արշիպելագի վրայ ապրում են նաև չին ացին եր (մօտ  $\frac{1}{2}$  միլիոն), որոնք զբաղւում են առևտով և արհեստներով. կան նաև ոչ շատ եւրոպացինեաներ, զինուրականներ և առևտրականներ:

Կղղիների ծայրերին, ծովափի մօտ ապրող մալայցիները մեծ մասով ման մեղական են, իսկ կղղիների խորքերում ապրող կիսավայրենիները՝ կուպա

Բոլորովին անկախ պետութիւններ չկան Մալայեան արշիպելագի վրայ. բոլոր կղղիներն եւ զանազան տէրութիւնների դադութներ են: Արշիպելագի ամենամեծ և ամենալաւ մասը՝ պատկանում է ուժան գացին երին—Սումատրա, նաև, Ճիշթան, Փոքր-Զոնդեան, Մոլլոկեան կղղիները, Բոռնչոի հարաւարենեան



Նկ. 31. Մալայեցու տուն՝ ծառի վրայ:



Նկ. 32. Մալայեցի:

մասը: Հոլանդական այս գաղութները 46 անգամ մեծ են բուն Հոլանդիայից, իսկ բնակչութեան թւով՝ 7 անգամ:

Այդ բոլոր կղզիների թւում ամենանշանաւորն է՝ Նասան: Սա երկրագնդի ամենաախիտ բնակութիւն ունեցող և ամենաբերրի վայրերից մէկն է: *29 մայոս-քառուհի*

Եթէ ագործ ծութիւնը ծաղկած է Մալայեան արշապելագում, մանաւանդ եաւայում: Հարթ տեղերում մշակում են՝ բրինձ, ծխախոտ, եգիպտացորեն և շաքարեղէզն. իսկ սարերի լանջերին՝ սուրճ, թէյի և քինայի ծառեր:

Եաւայի գլխաւոր քաղաքը և հոլանդական ընդհանուր-նահանգապետի աթոռանիստն է՝ Բատավիա: *120,000 ք.*



Նկ. 33. Հոլանդիայի եւ նրա Մալայեան կալանքների համեմատական մեծութիւնը:

Այստեղի գլխաւոր քաղաքն է՝ Մանիլա:

*Բոռնիօ կղզու հիւսիս—արևմտեան մասը պատկանում է անգլիացիներին, իսկ Փիլիպաննեան կղզիները՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներին:*

*350,000 ք.*

## ԸՐԵՒԹԵԱՆ ԸՆԻՑ

Ընդհանուր ակնարկ

Արեելեան Ասիայի մասերն են կազմում հետևեալ երկիրները՝ Զինաստան, Մանջուրիա, Կորչա և Էսապոնիա:

[Կրկնել «Կլիմայ» դասի (յօդ. 5.) Արեելեան Ասիային վերաբերող կտորը:]

Արեելեան Ասիայում է ապրում մայր ցամաքի (Ասիայի) ամբողջ ազգաբնակութեան կէսից աւելին, որ ամբողջապէս դեղին ցեղին է պատկանում: Իրենց քաղաքակրթութեամբ Արեելեան Ասիայի ժողովուրդները ամենահսկելի են: Հողը այստեղ բերրի է, և երկրագործութիւնը հասել է ամենաբարձր կատարելագործութեան:

Արեելեան Ասիայում գտնաւող պետութիւններից Զինաստանը և Էսապոնիան պահպանել են իրենց անկախութիւնը:

## 27. ԶԻՆԱՍՏԱՆ

Զինաստանը բռնում է Արևելեան Ասիայի մեծ մասը. նատարածւում է Պամիրից մինչև Մեծ Ովկիանոս և Ամուրից մինչև Հնդկաշխն: Բուն Զինաստանը իր մեծ ութեամբ հաւասար է Եւրոպական Ռուսաստանին, իսկ իր բոլոր կարածներով (Մանջուրիա, Կենտրոնական Ասիա) միասին՝ ամբողջ Ռուսաստանի կէսին\*): Իսկ Զինաստանի քնակիչները  $2^1/2$ : անդամ աւելի են, քան Ռուսաստանի քնակիչները.—Ռուսաստանում ազգում են քնակամենը մօտ 140 միլիոն քնակիչներ, իսկ Զինաստանում՝ մօտ 350 միլիոն, այսինքն մօտաւորապէս այնքան, որքան ամբողջ Եւրոպայում:

Իր քնութեամբ Զինաստանը բաժանում է երկու մասի—հիւսիսային և հարաւային:

Հիւսիսային Զինաստանում գտնում է չին ական դաշտավայրը: Հողը գեղին է և արգաւանդք: Իսկ Հարաւային Զինաստանում հարթութիւններ համարեա չկան.—ամեն տեղ լեռներ են, թէպէտ ոչ բարձր: Այդ լեռների լանջերին աճում են մշտադալար ծառեր: Հարաւային Զինաստանի գետինը կարմրաւուն կաւից: Չնայելով այդ հողը այնպէս պտղաբեր չէ, ինչպէս Հիւսիսային Զինաստանի հողը, բայց և այնպէս այդտեղ էլ հունձը լինում է առատ, որովհետեւ կլիման աւելի խոնաւ է, քան հիւսիսում: Հիւսիսային Զինաստանում ձմեռը սառնամանիքներ են լինում, և ձիւն է գալիս, թէպէտ կարճատեւ. իսկ հարաւաւում գետինը երբէք ձիւնով չէ ծածկւում: Հիւսիսում արտերը տալիս են տարեկան մէկ կամ երկու հունձ, իսկ հարաւաւում երկու կամ երեք:

Զինաստանում քնակւող ազգութիւնը (չին ացին երը) պատկանում է դեղին ցեղին: Շատ հնումնրանք ապրում էին Կենտրոնական Ասիայում. բայց վաղուց արդէն, 2,000 տարի Ք. ծ. առաջ, նրանք գաղթեցին այժմեան Զինաստան,

\*.) Ռուս-Հինական սահմանի երկայնութիւնը 4000 վեցսուից աւելի է:

Հիմնեցին այդ մեծ պետութիւնը և զօրեղ ազգեցութիւն ունեցան հարևան ժողովուրդների վրայ:

Զինացիները աչքի են ընկնում իրենց աշխատասիրութեամբ: Նրանց գլխաւոր զբաղմունքն է՝ երկրադրութիւնը: Հիւսիսային Զինաստանի արտերը ծածկւած են ցո-



Կե. 34. Զինացիներ:

Պենլի քակեայի ցանքսերով. իսկ զարաւային Զինաստանում, լեռնաշղթաների մէջ ընկած հովիտներում, տարածւում են բրնձի արտեր, շաքարեղենի տնկարաններ և բամբուկի թփուտներ: Բամբակեի խաշխաշ (ափիոն) մըշակում է Զինաստանում ամեն տեղ:

Զինացիները մշակում են իրենց դաշտերը աւելի խնամքով, քան մեր գիւղացիները. Նրանք պարարտացնում են հողը աղբով և ջրում արտերը՝ ջրանցքներով բերած ջրով. Ջրանցքներ անց են կացնումնրանք ամեն տեղ՝ գետերից և գետակներից ջուր բերելու համար: Հունձը այնտեղ լինում է միշտ շատ առատ: Մի փոքր կտոր հողից անգամ շինական գիւղացին ստանում է բաւականաչափ հաց՝ իր ընտանիքը կերակրելու համար:

Երկրագործութիւնը չինացիների մէջ համարւում է ոչ միայն գլխաւոր, այլ նաև ամենայարգի զբաղմունքը: Նրանք ունեն երկրա-

գործութեան տօնը, երբ ինքը Զինաստանի կայսրը, որ կոչւում է «երկնքի որդի» վարում է մի կտոր հող:

Զինացիները մեծ հոգատարութեամբ զբաղւում են նաև այդեւք ու թե ամբ, մանաւանդ հարաւային Զինաստանում, որտեղ աճում են թթենիներ և թէյի ծառեր: Թէյի ծառի տերեներից շինացիները պատրաստում են թէյ, իսկ թթենու տերեներով կերակրում են շերամի որդը: Զինացիների մէջ կարեսը տեղ է ըսնում մետաքսագործութիւնը և թէյի մշակութիւնը: Զինաստանից Եւրոպա են արտահանուում մեծ քանակութեամբ թէյ և մետաքս:



Հակ. 35. Թաւզ. ծողովելը, չորացնելը և բովելը:

Մեծ նշանակութիւն ունի շինացիների համար նաև ձը կնորսութիւնը: Զինական ծովերը, գետերը, ջրանցքները և լճակները հարուստ են ձկներով:

Բրինձը, բակլան և ձուկը կազմում են շինացիների սննդի գրւիաւոր առարկան: Յաճախ գործ են ածում նրանք նաև խոզի, շան և կասուի միս: Զինացու սիրած ուտելիքների թվին են պատկանում մի քանի տհասակ ծովային որդեր և ծովային ծիծենակի բոյնը: Ողելից խմիչքներ շինացիները համարեա չեն գործածում. բայց դրա փո-

խարէն գործ են ածում ափիոն, որ առողջութեան վրայ աւելի վատ է ներգործում, քան սպիրտը:

Ա. Ն ասն ապա հութիւնը Զինաստանում զարգացած չէ, ուրովհետեւ բոլոր պէտքական հողերը մշակւած են. անաստաների համար չկան արօտատեղիներ: Կաթի և իւղի մասին չինացիները համարեա ոչինչ չգիտեն, կաթնատնտեսութեան մասին զաղափար անգամ չունեն: Անաստան քիչ լինելու պատճառով Զինաստանում բեռը կրում են մըշակչները (կուլիի): Հարաւային Զինաստանում նոյն իսկ կառքի համար ճանապարհներ չկան, այլ միայն շատ իդն եր՝ ոտքով գնացողների համար: Դրա փոխարէն՝ Զինաստանը հարուստ է գետային ճանապարհներով (կայսեր կամ առաջնորդի առաջնորդութիւն ունի): Ամենամեծ ջրանցքը (կայսեր կամ առաջնորդ) 1,000 վերստից աւելի երկայնութիւն ունի:

Առևտուրը Զինաստանում շատ եռում է. չինացիները շատ ընդունակ են առետրի մէջ: Զինացիների ձեռքում է գտնուում ներքին առետուրը ոչ միայն բուն Զինաստանում, այլ նաև նրա բոլոր կալւածներում:

Զինացիները շնորհքով են նմանապէս արհետներու մէջ: Միլիոնաւոր չինացիներ զբաղւում են պատրաստելով ամեն տեսակ առարկաներ տնային գործածութեան համար, նաև արդուզարդի առարկաներ: Առանձնապէս շնորհքով պատրաստում են նրանք յախճապակէ («չինի») ամմաններ (ափսէներ և այլն), մետաքսէ գործածքներ, փայտի և փղոսկրի քանդակներ:

Զինացիները ապրում են գլխաւորապէս գիւղերում, մասամբ նաև քաղաքներում: Հողի պակասութեան պատճառով նրանք տները շինում են իրար շատ մօտ: Զինացիների բնակարանները, ինչպէս և հէնց իրենք, շատ կեղաստ են: Զինական քաղաքները շրջապատած են լինում հաստ պարիսպներով, որոնք հնում ծառայում էին թափառաշրջիկների յարձակումներից ժողովուրդը պաշտպանելու համար: Թէպէտրագմամարդ են չինական քաղաքները, բայց բարեշն չեն:


Կը թութիւնը շատ յարգի է չինացիների մէջ ամենին ժամանակներից սկսած: Ժողովրդական դպրոցներ հիմնել սկսեցին նրանք եւրոպացիներից առաջ: Եւրոպացիներից աւելի առաջ են գտնել նրանք նաև տպագրութիւնը, կողմացոյցը և վառօղը: Բայց ինչպէս եղել են հնումը, չինացիները այնպէս էլ մնացել են մինչև մեր օրերը: Ամեն բա-

նում նրանք հն ապ աշտ են. Նոյն իսկ մեղք են համարում փոխել այն կարգերը, որ դրել են իրենց նախնիները:

Իրենց երեխաներին չինացիները զլխաւորապէս սովորեցնում են յարգել ծնողներին և նախնիներին, որոնց մաքերը նրանց համար սուրբ են: Գիտութիւնները չինացիների մէջ ամենեին չեն զարգացած, բացի թւարանութիւնից, որ նրանց հարկաւոր է առեսրի համար: Չինարէն լեզուն, մանաւանդ գը ու թիւնը, շատ գժւար է. բոլոր բառերը միավանկ են: Գրութիւնն էլ ոչ թէ այրուբենից է բաղկացած, այլ բազմաթիւ նշաններից, որոնք ամբողջ բառեր են ցոյց տալիս: Սովորել բոլոր նշանները՝ դա քչերին է յաջողւում: Մեծամասնութիւնը սովորում է կարդալ միայն սակաւաթիւ գրքեր, որոնք պարունակում են չինական իմաստունների մտքերը:

Տիրապետող կրօն չկայ Չինաստանում, բայց համարեա բոլոր չինացիները երկրպագութիւն են տալիս երկնքին, երկրին և ընութեան ոյժերին: Մեծ մասով հետեւում են ը ու դ դ հ ա յ ա կ ա ն կը- րօնին, մանաւանդ հասարակ ժողովուրդը: Աւելի բարձր խաւերը հետեւում են Քրիստոսից 5 դար առաջ ապրած չինացի իմաստուն Կոնֆուցիոսի վարդապետութեան: Բոլոր չինացիներն էլ զոհ են մատուցանում իրենց վախճանւած նախնիների ողիներին<sup>\*</sup>):

Երկիրը կառավարում է կայսրը, Բողդիիսանը. այս բառը նշանակում է «երկնքի» (այսինքն Աստեծոյ) որդի»: Նրա իշխանութիւնը համարւում է անսահման: Իրապէս կառավարութիւնը գտնւում է պալատական մեծամեծների, փոխ- արքաների և պաշտօնեաների (ման-



Կայ. 36. Չինական տաճար:

<sup>\*</sup>) Չինացիները կրօնամոլ ժողովուրդ չեն, այլ համբերատար. յաճախ երկու տարրեր կրօնների հետեւղներ միենոյն տաճարում են կատարում իրենց ծէսերը:

գարինների). Ճեպքում: Արանք բոլորը աւելի իրենց անձնական շահին են ծառայում, քան ժողովրդի օգտին:



Կապահարին (չինակ. պատ.):

Պապէս բոլոր օտարերկրացիներին. Նոյն խակ եւ բոլոր այլ այլ ի ն ե թի վրայ մինչև վերջին ժամանակներս նրանք արհամարհանքով էին նայում, անպատաքեր էին համարում իրենց համար՝ որևէ բան փոխ առնել նրանցից: Միայն վերջերս, մի քանի անգամ պարտութիւն կրելով եւրոպացիներից, նրանք սկսեցին իրենց զօրքը վարժեցնել եւրոպական ձեռվ, թոյլ տւին եւրոպացիներին Զինաստանում անցկացնել մի քանի երկ ամիս թուղարակ ի ն գծ եր և մի քանի քաղաքներում էլ գործարաններ հիմնել:

Զինաստանի մայրաքաղաքն է և Բողդիխանի աթոռանիստը՝ Պեկին, 1 միլ. աւելի քնակի չներով: Նշանաւոր նաւահանգիստներ են — Տեան-Ցզին (որ Պեկինի հետ երկաթուղով է միացած): Շամհայ և Կանտոն: Այդ նաւահանգիստների վրայով են Զինաստան ներմուծւմ եւրոպացից և նապոնիայից՝ գործա-

Ամբողջ ժողովուրդը տղիսութեան և վատ կառավարութեան շնորհիւ խեղճ է ապրում: Այդ պատճառով էլ արդիւն ազոր ծութիւնը չէ զարգանում այստեղ: Զինաստանում զտնուում են օր. շատ հարուստ ածխահանքներ, բայց նրանք չեն մշակւում: Բազմաթիւ կուլին եր (բանարներ, մշակներ) պարագ ման են գտնիս. շատերը ստիլւած թողնում են իրենց հայրենիքը և օտար երկիրներ (Հնդկացին, Աֆրիկա, Ամերիկա) են գնում և զանազան աշխատանքներ անում ամենաէժան վարձով:

Որպինետե դարերի ընթացքում չինացիները աւելի կրթած են եղել քան ուրիշ ժողովուրդներ, այդ պատճառով էլ նրանք սովոր էին արհամարհանքով նայել ընդհան-

ըանային ապրանքներ. — Հնդկաստանից՝ ափիոն, իսկ Հնդկաչինից՝ բրինձ (թէպէտ չինացիները շատ բրինձ են ցանում, բայց եղածը չի բաւականացնում չինական ամբողջ ժողովրդին կերակրելու համար):



նկ. 38. Փողոց Պնկվելում:

Միւս քաղաքներից նշանաւոր է Խանգառը՝ Կապոյտ գետի վրայ: Այս քաղաքը յայտնի է իրեկ թէյի մեծ շուկայ, որտեղից ծովային նաւերով շատ թէյ է արտահանուում Եւրոպա և Ամերիկա: Թէյը և մետաքսը Չինաստանի արտահանութեան գլխաւոր առարկաներն են: Խանգառը՝ Կապոյտ գետի վրայ, նշանաւոր է բամբակի առևտրով:

Եւրոպացիները և ամերիկացիները, օգտակարով իրենց ոյժից, սկսել են խանուել չինական գործերի մէջ: Նըրանք արդէն զրաւել են մի քանի նաւահանգիստներ չինական ծավագում: Այսպէս՝ անգլիացիները խլել են Հօնգ-Կոնգ կղզին, այդանու գտնուում է Վիկտորիա նաւահանգիստը: Գերմանացիները իրենց ձեռքն են գցել Կիաո-Չաու—Դեղին ծովում: Այս վայրերը առևտրական խոշաբ նշանակութիւն ունեն:

*Էլեման Ցաշիս*

28. ՄԱՆՉՈՒՐԻԱ

Մանջուրիան ընկնում է Զինաստանից հիւսիս: Այդ երկրը երկու անգամ աւելի մեծ է, քան Կովկասը: Մանջուրիան մեծ մասով լեռնոտ, բայց պաղաւէտ երկիր է: Հարաւային մասում, Լեաօ-Խէ զետի հովտում, տարածւում են բերրի գաշտեր, խակ հիւսիսում՝ խոտաւէտ տափաստաններ: Մանջուրիան ըրջապատող լեռները ծածկւած են խիտ անտառներով և հարուստ են ուկու և քարածուխի հանքերով:

Մանջուրիայի քնակիչները մանջուրացիներն են: Առաջ նրանք անկախ և զօրեղ ժողովուրդ են եղել: Մի քանի հարիւր տարի սրանից առաջ նրանք նւաճեցին Չինաստանը, որտեղ մինչեայժմ էլ թագաւորում է մանջուրական հարստութիւնը (դինաստիա): Բայց տիրելով չինացիներին՝ մանջուրացիները այնպէս խառնւեցին նրանց հետ, որ իւրացրին նրանց բոլոր սովորութիւնները, մոռացան նոյն իսկ իրենց լեզուն: Այժմ ըստն Մանջուրիայում էլ գժւար է ջոկել մանջուրացիներին (թւով ընդամենը մօտ 1 միլ.) չինացիներից: Սրանք բնակութիւն են հաստատել Լեաօ-լուէ և Սունգարի զետերի հովիտներում և մեծ աշխատասիրութեամբ մշակում են իրենց դաշտերը, ցանում են կորեկ, բակլայ, խաշխաշ և ծխախոտ: Վերջին ժամանակներս չինացիները խմբերով բնակութիւն են հաստատում նոյն իսկ հիւսիս-արևեմտեան Մանջուրիայի տափաստանում: Միայն լեռների անտառներում դեռ ևս թափառում են մանջուրացիներին ցեղակից տունգուսները և ուրիշ ժողովուրդներ, որոնք զբաղւում են սամոյը, կղաքիս և վագրուալուզ:

Զինացիներին և մանջուրացիներին մեծ օգուտ են տալիս սուսների ձեռքով շինած երկաթուղային ճանապարհները։ Սրանցից մեկը կտրում է Հիւսիսային Մանջուրիան և միացնում է Սիբիրի երկաթուղին Վլադիվոստոկի հետ։ Մի ուրիշ երկաթուղային դիմանցնում է Խալքին քաղաքից (Սունգարի-

գետի վրայ) դէպի հարաւ՝ Մանջուրիայի գլխաւոր քաղաք Մոկոլէնի վրայով մինչև Պօրտ-Արտուր, որ այժմ գտնւում է Կապոնացիների ձեռքում:

## 29. ԿՈՐԵԱ

Կորէան լեռնուտ թերակղզի է. մի կողմից նա ողողւում է Կապոնական ծովով, իսկ միւս կողմից՝ Դեղին ծովով։ Հարաւ-արևմտեան մասը շատ աւելի տաք է, քան հիւսիս-արեւելեան մասը։

Կորէայի բնակիչներն են՝ կորէացիները ( $10^1 /_2$  միլ.)։ Արտաքին տեսքով նրանք նման են չինացիներին և եապոնացիներին, իսկ իրենց զարդացմամբ և ձեռներէցութեամբ շատ աւելի յետ են մնացել թէ մէկ և թէ միւս ժողովրդից։ Նրանք զբաղւում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Կորէացիները իրենց դաշտերը մշակում են շատ աւելի վատ, քան եապոնացիները և չինացիները։ Կորէացիները չեն տնկում թէյի և թթի ծառեր, մետաքսագործութեամբ էլ չեն պարապում։ Արհեստների մէջ ես նրանք առանձին շնորհք չեն ցոյց տալիս։

Կորէացիները ապրում են խղճուկ խրճիթներում։ Նրանց երկրում քաղաք համարեաթէ չկայ. Կորէայի թագաւորի աթոռանիստն է՝ Աէոլ, որ մեծ դիւդի է նման։

Կորէացիները շատ հանդարտաբարոյ և խաղաղաէր ժողովուրդ են։ Այդ պատճառով էլ Կորէան առաջ ենթարկւած էր Զինաստանին, իսկ այժմ եապոնացիների ձեռքում է գտնւում։ Թէպէտ կորէացիները ունեն իրենց կայսրը, բայց նա ետպոնացիների իշխանութեան տակ է։ Եապոնացիների համար Կորէան մեծ նշանակութիւն ունեցող մի երկիր է։ Եապոնիայի ազգաբնակութիւնը շատ խիտ է, իսկ Կորէայի ազգաբնակութիւնը՝ նօար. այդ պատճառով էլ եապոնացիները խմբերով ըընակութիւն են հաստատում Կորէայում և վաճառում են այնտեղ իրենց գործարաններում պատրաստած ապրանքները։

## 30. ԵԱՊՈՆԻԱ

Եապոնիան Սոխայի ամենաարևելիան երկիրն է. այդ պատճառով էլ նա կոչւում է «Ծագող արեգակի երկիր»: Եապոնիան բաղկացած է չորս մեծ ու բազմաթիւ մանր կղզիներից: Այդ չորս մեծ կղզիներն են Հոնդո կամ նիպոն, Կիու, Շիու, Շիկօկ և Ղասօ: Բացի սրանցից՝ եապոնացիներին են պատկանում նաև Կուրիիան կղզիները, Սախայինի հարաւային կէսը, Ռիու-Կիու և Փօրմօզա կղզիները. Իր բռնած տարածութեամբ Եապոնիան մի փոքր մեծ է Անգլիայից և համարեա հաւասար է մեր Կովկասին:



Նկ. 39. Յունգի-Եամա:

Եապոնական բոլոր կղզիներն էլ լեռնոտ են, ենթակայյածախակի երկրաշարժների \*): Լեռնագագաթները ընդհանրա-

\*.) 1885 թւականին Եապոնիայի մայրաքաղաք Տոկիոում 80 տնգամ երկրաշարժ եղաւ, որոնց առաջացրած աւերակների տակ ոչնչացան 100,000-ից աւելի մարդիկ:

պէս հրաբխային են—կամ գործող, կամ հանգած։ Միայն կուրիեան կղզիների վրայ գանկող հրաբուխների թիւն է՝ 13։ Եապօնիայի ամենաբարձր հրաբխային սարն է՝ Փուղի-Եամա (3½ վերած բարձրութեամբ), որ գանւում է Հօնդո կղզու վրայ։ 10 ամիս շաբունակ նա ձիւնով ծածկւած է լինում։ Եապօնացիները սուրբ են համարում այդ սարը։ Դաշտավայր եր համարեա թէ չկան. չկան նաև երկայն, նաւազնացութեան յարմար գետեր։

Կուրօ-Սիվօ տաք հոսանքը Եապօնիա է բերում շատ տարութիւն և խոնաւութիւն։ Ամառ ժամանակ այդ հոսանքի վրայով են փշում հարաւարեելեան մուսոնները, որոնք ջրային գոլորշիներով լցւում են և առատ անձրեներ թափում եապօնական կղզիների վրայ։

Կուրօ-Սիվօի մի ճիւղը մտնում է Եապօնական ծովը։ Զմեռը մայր ցամաքից փշող մուսոնները ջերմութիւն և խոնաւութիւն են ստանում Կուրօ-Սիվօի այդ ճիւղից. այդ պատճառով էլ նրանք Եապօնիա են բերում առատօրէն մթնոլորտային տեղումներ։ Տարւայ ամենալաւ եղանակներն են՝ դարուն և աշուն։

Շնորհիւ տաք և խոնաւ կլիմայի՝ ետպօնական գլխաւոր կղզիների բուսականութիւնը շատ փարթամ է։ Լեռները ծածկւած են անտառներով, իսկ հովիաները և բլուրները՝ արտերով և այգիներով։

Եապօնական կղզիների բուսականութիւնը մեր ձարեաւոր ձարին է։

Կուրիեան կղզիների և Սախալինի կլիման շատ խիստ է. բուսականութիւնն էլ բաղկացած է փշատերեա անտառներից և տունդրաներից։ Դրա համար էլ նրանք անյարմար են մարդկացին բնակութեան համար։ Փօրմօզա կղզու կլիման, ընդհակառակը, շատ տաք է և վատառողջ, իսկ բուսականութիւնը՝ միանգամայն արեալարձային։ Կենդանիները այդ անտառներում, յատկապէս թռչուններ, քիչ կան։

Եապօնիան Բուսաստանից յիսուն անգամ փոքր է\*), բայց նրանից հազիւ 3 անգամ պակաս թւով բնակիչներ ունի։ Եապօ-

\*). Եապօնիան Կովկասից էլ աւելի փոքր տարածութիւն է բռնում։

Նիսայում մօտ 50 միլիոն մարդ է տալրում: Այսպէս խիտ բնակութիւն ունենալու զիմաւոր պատճառները երկու են.—նախքնութեան հարասութիւնը, երկրորդ՝ եապօնացիների աշխատասիրութիւնը և մեծ ընդունակութիւնները: Եապօնացիները գեղին ցեղին են պատկանում և չինացիներին ցեղակից են:

Եապօնացիների մեծ մասը աղքատ գիւղացիներ են. սրանց ունեցած հողը այնչափ սակաւէ, որ կէս գեսեատինը համարւում է արդէն մեծ հող: Բայց իրենց փոքրիկ արտերը նըրանք մշակում են նոյնալիսի ջանասիրութեամբ, ինչպէս չինացիները. զբաղւում են զիմաւորապէս բըրբընձի մշակութեամբ:

Աշնանը, բրնձի հնձից յետոյ, նոյն հողի վրայ ցանում են հացահատիկներ—զարի կամ ցորեն,

Նկ. 40. Բամբուկի բփուտ Եապօնիայում: Եապօնական կտուապան:

որոնց հունձը լինում է գարնանը: Եապօնիայի հարաւում ամեն մի արտից կարելի է լինում տարեկան նոյնիսկ երեք հունձ վերցնել:

Հացահատիկների արտերը տարածւում են Եապօնիայի ամենացածը վայրերում: Աւելի բարձր տեղերում եապօնացիները մշակում են թէյի թփեր, խակ սարերի լանջերին՝ թթենին ին եր: Եապօնիայում այնչափ շատ մետաքս է պատրաստւում, որ նա կազմում է եապօնական արտահանութեան զիմաւոր առարկան: Իսկ թէյը համարեա ամբողջն էլ երկրի ներսում է ծախւում, որովհետեւ եապօնական թէյը իր որակով շատ յետ է մնում չինականից և հնդկականից:

Ծովափերին ապրող եապօնացիները զբաղւում են ձը կնորսութեամբ, որ նըրանց համար էլ աւելի մեծ նշանաւ-



կութիւն ունի, քան չինացիների համար։ Ամենահարուստ ձըկնորսարանները գտնվում են Եսաուլում և Սախալինի հարաւում։ Այնքան շատ ձուկ է ստացվում, որ մի մասը գործ են դնում նոյն իսկ արտերը պարարտացնելու համար։

Բրինձը, ձուկը, բակլան և ծովային կաղամթը կազմում են եապօնացիների զինաւոր ուտելիքները։ Թէ բրինձը եապօնացիների համար ինչ մեծ նշանակութիւն ունի, այդ երեսում է նրանից, որ փոխանակասելու «նախաճաշ», ճաշ, ընթրիք» նրանք ասում են՝ «առաւօտեան բրինձ, կէսօրւայ բրինձ, երեկոյեան բրինձ»—որովհետեւ ամեն անդամ էլ բըրինձ են ուտում։ Միս, կաթ և խղզ նրանք ես, չինացիների նման, համարիա չգիտեն ինչ բաներ են, որովհետեւ արօտատեղիներ չլինելու պատճառով անասնապահութիւնը Եապօնիայում գարգացած չէ։

Եապօնացիները մեծ մասով ապրում են գիւղերում։ Նրանք աչքի են ընկնում իւրենց գարմանալի մաքրութեամբ։ Տներում կահկարասիք չի լինում։ Եապօնացիները նստում և քնում են խոտից կամ արմաւենու տերեններից հիւսած խսիրների (փսիփաթ) վրայ։ Տուն մանելիս եապօնացիները հանում են կօշիկները։ Նրանց ընակարանների մաքրութիւնն էլ օրինակիլի է։

Եապօնացիները շատ ընդունակ ժողովուրդ են։ Հին ժամանակները նրանք սովորեցին չինացիներից մի քանի արհեստներ (օրինակ՝ ճենապակեղին պատրաստելը), և այդ բանում նրանք գերազանցեցին նոյն իսկ իրենց ուսուցիչներին։

Անցեալ գարի վերջերում եապօնացիները սկսեցին շատ քան սովորել եւրոպացիներից և ամենակարճ ժամանակայ ընթացքում ցոյց տվին մեծ առաջադիմութիւն։ Ներ-



Կապ. 41. Եապօնական գիւղացի։

կայումն եապոնացիները ունեն եւրոպական ձևի բազմաթիւ սեփական գործարաններ, այդտեղ նրանք մեքենաների օդութեամբ պատրաստում են բամբակէ և մետաքսէ գործւածքներ, մետաղի զանազան ապրանքներ, ամեն ալաւ տեսակի թուղթ, և այլն: Այժմ եապոնացիները իրենք են կառուցանում շոգենաւեր, երկաթուղիներ: Ամբողջ Եապոնիան ծածկւած է երկաթուղային ցանցով: Եապոնական շատ քաղաքներում, յաճախնոյն իսկ զիւղերում, կայ էլեքտրական լուսաւորութիւն:



Նկ. 42. Եապոնուհի:

Եապոնացիները շատ հնուց արդէն կուլտուրական ժողովուրդ են: Իրենց կրթութիւնը, շատ սովորութիւններ և կրօնը փախ են առել չինացիներից: Չինաստանի նման՝ Եապոնիան և երկար ժամանակ ապրում էր կարւած ուրիշ երկրներից. Եապոնացիները իրենց երկիրը ներս մտնել չէին թողնում օտարերկրացիներին: Միայն 50 տարի սրանից առաջ եւրոպացիներին թոյլ տրւեց Եապոնիամտնել: Այդ ժամանակից էլ սկսած նրանք շատ բան սովորեցին եւրոպացիներից:

Բայց ամենագլխաւորը այն է, որ Եապոնացիները այժմ կը թւած ժողովուրդ են: Նրանք հիմնել են բազմաթիւ ժողովրդական դպրոցներ և ուսումը պարտադիր են գարձրել բոլորի համար: Այդ պատճառով էլ համարեա բոլոր Եապոնացիները զրագէտ են, կարգում են լրացիներ, զրքեր, որ Եապոնիայում աւելի են լոյս տեսնում, քան Ռուսաստանում:

Երկրի կառավարութիւնն էլ նման է եւրոպականին:

Եապօնիան Ասիայի այն երկիրներիցն է, որտեղ կայսրի (Միշտո) իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտավ, այսինքն ժողովրդական ներկայացուցիչների ժողովով։ Ժողովրդից ընտրւած այդ մարդիկ աշալուրջ կերպով հսկում են միանիստների և պաշտօնեաների գործերին և նրանցից ամեն բանի համար հաշիւ են պահանջում։



Կ. 43. Եապօնացի կառապան։

Եապօնացիների մեծ մասը դաւանում է Շինտո կրօնու, որ այդ ժողովրդի բնիկ, ազգային կրօնն է։ Այդ կրօնի էութիւնն է՝ բնութեան ոյժերին և նախահայրերի ոգիներին երկրորդագելը։ Եապօնացիների մէջ քիչ չեն նաև բուդիայական ներ և Կոնֆուցիոսի վարդապետութեան հետեւղներ։

Եապօնիայի մայրաքաղաքն է Տոկիօ. ունի մօտ 1,800,000 բնակիչ։ Զնայած սրան, Տոկիօն մեծ դիւզի նմանութիւն ունի, որովհետեւ բաղկացած է բազմաթիւ փոքրիկ փայտաշէն տներից<sup>\*)</sup>։ Փողոցներում երթևեկութիւնը մեծ է. կայ նաև էլեկտրաքարշ։ Կառապանները իրենք են քաշում երկանիւ փոքրիկ կառ-

<sup>\*)</sup> Տները փայտից են շինում, որ յաճախակի կրկնուող երկրաշարժներից շատ չլինաւեն։

ՔԵՐԸ: Թէպէտ Տօկիօ մայրաքաղաքը շինած է ծովածոցի վրայ, բայց որսվիճետե այդ ծովածոցը փոքր է, այդ պատճառով էլ մեծ նաւերը կանգ են առնում Իօկոհամա նաւահանգստում:

Եապոնիայի երկրորդ մեծ քաղաքն է՝ Օսակա, որ եապոնիական գործարանային արդիւնագործութեան կենտրոնն է: Եապոնիայի ամենանշանաւոր նաւահանգիստներն են, հաւասարաբժեք Իօկոհամային, Կորէ և Նազասակի:



Կանկ. 44. Եապոնիական տաճար:

Եսոօ, Սախալին և Կուրիլեան կղզիների վրայ բացի եապոնացիներից ապրում են նաև այն կոչւող մի խեղճ և համարեա վայրենի ժողովրդի միացորդներ: Նրանց թիւը փոքրանում է և այժմ հազիւ մի քանի հազար հոգի լինեն:

# Ա Փ Բ Ի Կ Ա

## ԸՆԴՀԱՅՆՈՒՄ ՆԿԱՐԾԴՐՈՒԹԻՒՆ

### 1. ԱՅՐԻԿԱՅԻ ԴԻՐՔԸ, ՄԵՇՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աֆրիկան Հին-Աշխարհի բոլոր մասերի մէջ միակն է, որ տարածւմ է հասարակածի երկու կողմում։ Հասարակածը անցնում է Աֆրիկայի հիւսիսային և հարաւային ծայրերից համարեա հաւասար հեռաւորութեան վրայ, նրա կենտրոնով։ Հիւսիսից հարաւ Աֆրիկան տարածւմ է մօտ 8,000 վերստ, իսկ արևմուտքից արևելք, ամենալայն տեղում, 7,500 վերստ։ Աֆրիկան Եւրոպայից մեծ է 3 անգամ, իսկ Ասիայից փոքր է  $1\frac{1}{2}$  անգամ։ Աֆրիկայի մակերեսոյթը բռնում է 27 միլ. քառակուսի վերստ տարածութիւն։

Աֆրիկայի ամենահեռաւոր ծայրերն են.—հիւսիսում՝ Բըլանկօ կամ Սպիտակ հրւանդանը, հարաւում՝ Ասեղի հրւանդանը, արևմուտքում՝ Կանաչ հրւանդանը, իսկ արևելքում՝ Գվարդաֆույ հրւանդանը։

Աֆրիկան ամեն կողմից շրջապատեած է խոր ծովերով և ովկիանոսներով. արևմուտքից՝ Ասյանտեան ովկիանոսով, հիւսիսից՝ Միջերկրական ծովով, արևելքից՝ Հնդկական ովկիանոսով և նրա մասերով—Աղենի ծոցով և Կարմիր ծովով։

Հիւսիս-Արևմուտքում Աֆրիկան բոլորովին մօտենում է Եւրոպային. սրանից բաժանւում է իրավալուարի նեղուցով, որ ոչ խոր է և ոչ էլ լայն (ընդամենը 14 վերստ լայնութիւն ունի)։

Հիւսիս-արևելքում Աֆրիկան միանում է Ասիայի հետ Սուէզի պարանոցով, որի վրայ 1869 թւականին Սուէզի ջրանցքն են փորել:

Աֆրիկայի ափերը շատ աւելի քիչ են կտրտւած, քան որ և է ուրիշ աշխարհամասի ափեր: Այստեղ համարեա չկան ոչ ծովեր, ոչ ծոցեր, ոչ էլ թերակզբիներ կամ կղզիներ՝ մայր ցամաքին մօտ: Եղած ծոցերից ամենամեծերն են — Գվինէյի ծոցը՝ արևմուտքում, Գարէսի ծոցը՝ հիւսիսում: Թերա կղզիներից նշանաւոր է՝ Սոմալի թերակզբին հիւսիս-արևելքում: Կղզիներից նշանաւոր է Մադագասկար մեծ կղզին հարաւ-արևելքում, որ մայր ցամաքից բաժանվում է Մոզամբիկի խոր և լայն նեղուցով: Լաւ, յարմար նաւահանգիստներ Աֆրիկայում շատ քիչ կան:

## 2 ԱֆրիկաՅի ՀԵՏԱԶՕՏՈՒՄԸ

Ամենահին ժամանակներից սկսած արդէն եւրոպացիներին յայտնի էին Աֆրիկայի հիւսիսային ծովափնեայ երկրները: Վաղուց յայտնի էին նրանց նաև կարմիր ծովի ափերը, այդտեղով նրանք Սուէզի պարոնացից Հնդկաստան էին գնում: Իսկ Աֆրիկայի մնացած ահազին տարածութիւնը եւրոպացիները յետոյ միայն ճանաչեցին: 8-րդ դարում Քրիստոսից յետոյ ամրող հիւսիսային Աֆրիկան նաւածեցին առաքները և այդտեղ տարածեցին իրենց կրօնը (մահմեդականութիւն), առևտրական յարաբերութիւններ ստեղծեցին նաև երկրի ներքին մասերի հետ: 15-րդ դարում, երբ նաւազնացութիւնը զարգացաւ, եւրոպացիները սկսեցին յաճախ երթալ գէպի Աֆրիկայի արևմտեան ափերը և հիմնեցին այստեղ գաղթականութիւններ: Դրանք գլխաւորապէս պորտուգալացիներ էին:

15-րդ դարի վերջում պորտուգալացի ծովագնաց Ասակօ-դէ-Գաման կատարեց առաջին ծովային ճանապարհորդութիւնը Աֆրիկայի քուրքով դէպի Հնդկաստան: Պարտուգալացիներից յետոյ Աֆրիկայում գաղութիւնը հիմնեցին նաև իսպանացիները, ֆրանսիացիները, անգլիացիները: Իսկ վերջին ժամանակներու՝ նաև գերմանացիները: Մակայն Աֆրիկայի խորքերը երկար ժամանակ ոչ ոք սիրտ չէր անում թափանցել, երկիւղ կրելով վատառողջ կիմայից և գէպի եւրոպացիները թըշ-նամութիւն տածող սկամորթ բնիկներից:

Առաջինը անգլիացի Լիլինգստոններ էր, 19-րդ դարի 60-ական թւականներին, որ երկար ճանապարհորդութիւններ արաւ գէպի Աֆ-

քիկայի խորքերը Նա ճանապարհ ընկաւ գէպի Հարաւային Աֆրիկան աւետարանը քարոզելու նպատակով Իր հեղ և բարի բնաւորութեան շնորհիւ նա գրաւեց տեղացիների սէրը և նրանց օդնութեամբ շատ ուսումնասիրութիւններ արաւ:

Լիինգստոնը շատ սակաւ անգամ էր տեղեկութիւն տալիս իր մասին, ուստի և մտածեցին մի ժամանակ, թէ նա արդէն սպանուել է 80-ական թւականներին նրան որընելու նպատակով Աֆրիկա ուղարկեցին մի ուրիշ անգլիացու, Ստէնլի անունով: Սա կտրում անցնում է կենտրոնական Աֆրիկան, զտնում է Լիինգստոնին: Յետոյ Ստէնլին հայրենիք է վերադառնում, իսկ Լիինգստոնը շարունակում է իր ճաշնապարհորդութիւնը գէպի հարաւ: Շուտով տեսնդից նա հիւանդանում է և մենքում: Նրա հաւատարիմ ծառաները—նեղքերը իրենց ուսերի վրայ են տանում նրա դիակը անտառների խորքներից մինչև ովլիանդոսի ափերը: այդտեղից արդէն անգլիացի նաւաստիները նրա դիակը հայրենիք են փոխազդում:

Ստէնլին էլի երեք անգամ ճանապարհորդութիւն է կատարում Աֆրիկայում և ուսումնասիրում է Վիկտորիա լիճը, Կոնցո գետը և այդ գետի ջրաբաշխում գտնւած դարեւոր արևատարձային անտառները: Լիինգստոնից և Ստէնլից յետոյ ուրիշ ճանապարհորդներ էլ ուսումնասիրել են Աֆրիկան, բայց և այնպէս մինչև այսօր էլ Աֆրիկայում կան շատ տեղեր, որոնք քիչ են հետազոտած: Բայց Աֆրիկայի բոլոր մասերն էլ բաժանւած են եւրոպական պետութիւնների մէջ, որոնք և շատ տեղ երկաթուղիներ են անց կացրել:

### 3. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Համարեա ամբողջ Աֆրիկան ներկայացնում է մի բարձրաւանդակ՝ հողակոշտերից բաղկացած: Նրա միջին բարձրութիւնն է կէս վերստ: Մակերեւոյթը բաւական հարթ է, այնպէս որ օրեր և շաբաթներ շարունակ Աֆրիկայով կարաւաններ են գնում, առանց տեսնելու իրենց շուրջը աւելի կամ պակաս բարձրութիւն ունեցող սարեր:

Աֆրիկայի հարաւ-արևելեան կէսը աւելի բարձր է, քան հիւսիս-արևելմտեանը: առանձնապէս բարձր է (տեղ-տեղ 4 վերստից էլ բարձր) Հարէշատանի բարձրաւանդակը, —մի լեռնոտ և վայրի երկիր: Բարձր են նաև Դրակոնի սարերը՝ հարաւ-արևելքում (3 վերստից բարձր):

Արևելեան Աֆրիկայի բարձր սարահարթերի մէջ գտնւում

են բազմաթիւ խորը և մեծ (40—100 վերստ) լեռնագոգեր։ Սրանցից մի քանիսը լցւած են ջրով—լճեր են։ Օրինակ՝ Վիլտորիա, Տանգանիկա, Նեսասա և ուրիշները։ Դրանց ծայրերին բարձրանում են հանգած հրաբխային լեռներ։ դրանցից ամենաբարձրներն են՝ Կիլիմանջարո (6 վերստ բարձր) և և Կենիա (5 և կէս վերստ). սրանք ծածկւած են մշտական ձիւնով։

Հիւսիսարև և մտեան Աֆրիկան թէպէտ իր բարձրութեամբ չէ կարող հասնել հարաւարելեանին, բայց և այնպէս նա էլ բաղկացած է ընդարձակ բարձրաւանդակներից։ Դաշտավայրերը այդ մասում փոքր տեղ են բռնում։

Աֆրիկայում չկան այնպիսի լեռնաշղթաներ, ինչպէս Ասիայում. բացառութիւն կազմում է Աստրափ լեռնաշղթան՝ Միջերկրական ծովի ափին։

Աֆրիկայի միակ մեծ կղզին՝ Մադագասկար—ցամաքային ծագում ունի. նա ևս հողակոշտերից է բաղկացած։ Աֆրիկայի մեացած կղզիներից շատերը հրաբխային են. օրինակ՝ Համբարձման, Ս. Հեղինեի, Կանարեան, Մասկարեննան կղզիները։ Շատերն էլ կորալլական ծագում ունեն. այսպէս են բազմաթիւ մանր կղզիներ Աֆրիկայի արևելեան ափում։ օրինակ՝ Զանզիբար։

#### 4. Կ Լ Ի Մ Ա Ն

Քանի որ Աֆրիկան ընկնում է հասարակածի երկու կողմը, ուստի և նրա կլիման աաք է։ Արեգակը ամբողջ տարին շատ է տաքացնում այդ մայր ցամաքը. ամառւայ և ձմեռւայ ամիսների մէջ այնտեղ համարեա տարբերութիւն չկայ։ Աֆրիկայի ամենահիւսային կամ ամենահարաւային ծայրերում իսկ աւելի տաք է, քան Եւրոպայի ամենահարաւային, տաք երկներում։


Ամենատաք երկրամասը, այն էլ ոչ միայն Աֆրիկայում, այլ նաև ամբողջ երկրագնդի վրայ, Սահարա անապատն է. այնտեղ տարւայ տաքութեան միջին աստիճանը 35-ի է հասնում։ Ամառ ժամանակ անապատի լերկ ժայռերը մինչև 70,

նոյնիսկ 80 աստիճան տաքանում են: Օդն ևս այնքան է տաքանում, որ նոյնիսկ դժւար է չնշել: Իսկ երբ անապատով փչում է Ասմում կոչւող սոսկալի աւազախան փոթորիկը, շատ անգամ կարաւաններ են ոչնչանում: Մակայն գիշերները Սահարայում զով է լինում, յաճախ ցող է նստում. իսկ ձմեռուայ գիշերներին ժայռերի վրայ նոյնիսկ եղեամ է երեսում:

Սահարայում շատ սակաւանձրեներ են զալիս. համարեա ամպ չէ երեսում երկընքի վրայ: Այս է պատճառը, որ այնտեղ ցերեկը շատ տաք է լինում, իսկ գիշերը շատ զով:

Սահարայի չափազանց չոր լինելու պատճառները որանք են: — արեմտեան կողմից նա ողողւում է Աստղանտեան ովկիանոսի այն մասով, որտեղ ամբողջ տարին անդագար փչում են հիւսիսարեկեան պասաւատները. իսկ որանք խոնաւութիւնը ովկիանոսից տանում են դէպի Հարաւային Ամերիկա: Սահարայի արեւլեան կողմում էլ ընկած է Արարիա թերակղղին, որ չոր է: Կարմիր և Միջերկրական ծովերն էլ այն չափամեծ չեն, ուստի և քիչ զոլորշի են առաջացնում: Իսկ Գիլինէի ծոցից փչող քամիները իրենց բերած խոնաւութիւնը հազիւ թողնում են նրա ծովափնեայ բարձրութիւնների վրայ: Վերջապէս՝ Հնդկական ովկիանոսից փչող քամիները խոնաւութիւնը թողնում են Հարէշստանում:

Սահարայից դէպի հարաւ ընկնում են տաք և խոնաւ երկիրներ. դրանք գտնուում են հասարակածի երկու կողմում: Խոնաւութիւն բերող քամիները այդ երկիրներում թափում են շատ մթնոլորտային տեղումներ, — թէ Աստղանտեան և թէ Հնդկական ովկիանոսից: Մանաւանդ շատ անձրև է



Ֆի. 45. Մրնուրտային և զովումների տարածումը Աֆրիկայում:

գալիս Գվինէի ծոյի տիերին և Կոնցո գետի ջրաբաշխում: Այստեղ յորդ անձրևներ գալիս են համարեա ամբողջ տարին: Իսկ Աֆրիկայի մասցած մասերում ձմեռւայ ամիսներին երաշտէ լինում, և անձը և գալիս է զիմաւորապէս ամառը, մասնաւանդ կէսօրին:

Այժեղ ապար արեադից հարաւ Աֆրիկայի կլիման չափաւոր-տաք է: Ամառը (այսինքն՝ դեկտեմբերին, յունիարին, փետրւարին, այդ ամիսներին է հարաւ Աֆրիկայում ամառ) շատ շոգ է լինում այստեղ, իսկ ձմեռը՝ բաւական ցուրտ բարձր տեղերում նոյն իսկ ձիւն է գալիս: Անձրևներ բերում են Հնդկական ովկիանոսից փշող քամիները:

Աֆրիկայի հիւսիսային ծայրն ևս ունի այնպիսի չափաւոր-տաք կլիմայ, ինչպէս հարաւային մասը. միայն թէ այստեղ ձմեռ է լինում այն ժամանակ, երբ հարաւում ամառ է, և ընդհակառակը (ինչու):

## 5. ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Աֆրիկայի բոլոր մեծ գետերն էլ իրենց սկիզբը առնում են այն վայրերում, որտեղ շատ մինուրատային տեղումներ են թափւում: Այդ գետերի մեծ մասը թափւում է Ատլանտեան ովկիանոս, և փոքր մասը միայն՝ Հնդկական ովկիանոս:

Աֆրիկայի զիմաւոր գետն է Նեղոս, որ իր երկայնութեամբ (մօտ 6,000 վերստ) յետ է մնում միայն Միսսիսիպի գետից՝ իր Միսսուրի վտակով: Նեղոսը կազմւած է Սպիտակ Նեղոս և Կապոյտ Նեղոս ճիւղերից:

Սպիտակ Նեղոսը (կամ Բար-էլ-Արիան) իր սկիզբը առնում է Վիկտորիա լճից, որի մակերեսոյթը ովկիանոսից բարձր է աւելի քան մեկ վերստ: Կապոյտ Նեղոսը (կամ Բար-էլ-Ազրել) սկսում է Հարէշստանի Յան կոչւող լճից, որ աւելի բարձր է ովկիանոսի մակերեսոյթից, քան Վիկտորիա լիճը: Ամեն տարի ամառ ժամանակ Նեղոսը ափերից դուրս է գալիս շնորհիւ այն առատ անձրևների, որոնք գալիս են նրա ակունքների մօտ:

Աֆրիկայի գետերի թւում իր երկայնութեամբ երկրորդ տեղը բանում է Կոնցո գետը: Նա իր ջրառատութեամբ երկրորդ տեղն է բանում երկրագնդի բոլոր գետերի շարքում (առաջինը՝ Հարաւ. Ամերիկայի Ամազոն գետը): Այդ գետի սովորական լայնութիւնը, միջին հոսանքի վրայ, մօտ 10 վերստ է, իսկ ովկիանոսի մօտ նեղանում է մինչեւ  $\frac{1}{4}$  վերստ:

Իր երկայնութեամբ երրորդ գետն է Աֆրիկայում՝ Նիգեր: Մնացած գետերից նշանաւոր են—Օրանժի, Զամբեզի և Շարի (որ թափւում է Զադ լիճը):


Արևելեան Աֆրիկայի լճերն են—Նեասսա, Տանգանիկա, Վիկտորիա, Ալբերտ և ուրիշներ: Սրանց մէջ ամենախոր լիճն է Նեասսա, իսկ ամենամեծը՝ Վիկտորիա:

Աֆրիկայի չոր մասերում շատ քիչ գետ կայ կամ ամեններն չկայ: Մահարայում ոչ մի գետ չկայ. այնտեղ պատահում են միայն չոր հովիտներ (վաղիներ), որոնց միջով երբեմն անձրեկց յետոյ գետակներ են հոսում. սրանք էլ կորչում են աւազուաների և քարքարուաների մէջ: Մահարայի հիւսիսային մասում, մի քանի փոս տեղերում, պատահում են աղի լճակներ (շոտաեր). դրանց մէջ ջուր լինում է գարձեալ անձրեկց յետոյ միայն. մնացած ժամանակ նրանք ծածկւած են լինում ձիւնանման աղի սպիտակ շերտով:

## 6 ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գլխինէի ծոցի ափերին և Կոնցո գետի ջրաբաշխի վրայ, այսինքն Աֆրիկայի ամենախոնսաւ մասերում, աճում են որ եւ ադարձային անտառներ: Սրանք շատ խիտ են, լիանոսներով պատած, ուստի և մութն են: Սրեգակի ճառագայթները շատ քիչ տեղ միայն կարողանում են ծառերի միջով ներս թափանցել: Օգը այստեղ տաք է լինում և խոնաւ: Մակայն իրենց փարթամութեամբ և բազմազանութեամբ Աֆրիկայի անտառները համեմատւել չեն կարող Մալայեան արշապելագի կամ Հարաւային Ամերիկայի անտառների հետ: Պատ-

ճառն այն է, որ Աֆրիկայում քիչ տեղեր կան, որտեղ ամենին երաշտ չի լինում:



Կե. 46. Բուսականութեան տարածումը  
Աֆրիկայում:

Պատահում են նաև հազարամեայ բաօբարներ\*): Սաւանները կտրող գետահովիտներում տարածում են անտառներ: Գետերի և լճերի ճահճոտ ափերը ծածկւած են խիտ եղեգնով և պապիրուս կոչւող բոյսով:

Երբ սկսում են երաշտները, այն ժամանակ սաւանների խոտը չորանում է, ծառերը թափում են իրենց տերենները: Ահա այդ միջոցին սաւաններում հեշտութեամբ առաջ են գալիս հրդեհներ, որոնք բռնում են տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն:

Աֆրիկայի ան ապատն երը — Սահարա և Կալահարի — բռնում են ահազին տարածութիւն: Նրանք համարեա բոլորովին զուրկ են որևէ բուսականութիւնից: Հովիտներում և սարալանջերի վրայ, որտեղ հազւադեպ անզամ անձրև է գա-

Աֆրիկայի այն ժամանակում, որտեղ չորսութիւնը, երաշտը, երկարատեւ է լինում, և անձրեներ գալիս են միայն ամառ ժամանակ, այնտեղ էլ տարածում են սաւանները Արանք երկրագնդի ամենաափարթամ արեալարձային տափաստաններն են: Անձրեների ժամանակ այդ տափաստանները ծածկւում են բարձրը խոտով, — շատ անզամ մարդու հասակի չափ և աւելի: Խոտերի մէջ այս ու այն տեղ աճում են և բարձր ծառեր, օրինակ՝ ակացիաները

\*) Մատաղ բաօբարներ համարեա ամենակին չեն պատահում. այդ պատճառով պէտք է կարծել, որ այդ ծառերը կամաց - կամաց ոչնչանում են:

լիս, աճում են միայն խոտ և թփեր՝ մանրիկ փշատերեաներով և չափազանց երկայն, հաստ արմատներով:

Աֆրիկայի ամենահիւսիսային մասում, Ատլասի երկիրն երում, բուսականութիւնը անձրեների շնորհիւ աւելի թարմ է: Բարձրաւանդակների վրայ կան տափաստաններ: Հովաններում և սարալանջերին տարածում են մերձարև և ագարձային տնտեռներ՝ մշտականաչ ծառերով. օրինակ՝ ձիթենի, օլէանղը և այլն:

Աֆրիկայի ամենահարաւային մասում, բարձրաւանդակների վրայ, գտնուում են դարձեալ տափաստաններ: Գարնու այդ ատափաստանները ծածկւում են ծաղիկներով և շատ գեղեցիկ տեսք ունեն: Ծովափի հովիտներում աճում են մշտականաչ տերեւաւոր ծառեր (միայն թէ ուրիշ տեսակի, քան Աֆրիկայի հիւսիսում):

Աֆրիկայից են ծագում շատ օգտակար բոյսեր: Հարէշստանից է գուրս եկել սուրճի թուփը, Գվինէի անտառներից —ձիթարմաւենին, Սահարայի ովազիմներից —փիւնիկեան տըմաւենին, և այլն:

### 7. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Աֆրիկայի կենդանական աշխարհը պատկանում է երկու Աֆրիկական և Եւրոպական շրջաններին: Առաջին շրջանի կենդանիներ կան ամբողջ Աֆրիկայում, իսկ երկրորդ շրջանի կենդանիներ՝ մայր ցամաքի միայն հիւսիսարեւեան մասում: Ամենից շատ կենդանիներ կան սաւաններում: Այդտեղի փարթամ արօտատեղիներում արածում են բազմաթիւ անտիլոպներ, ջայլամեներ և զերեր: Սաւանների վրայ ցըւած ծառերի ճիւղերից են կերակրուում ընձուղտները (ժիրաֆֆ): Խոտակեր կենդանիներին հալածում են զիշակերները —առիւծներ, բորենիներ և շնագայլեր: Սրանց սիրած տեղերը անտառների բոլորքն են, որտեղից նրանք զիշերը սաւանն որպի են գուրս գալիս:

Էլի նոյն տեղ, անտառների շրջակայքում, թափառում են

և ձիւղերով, արմտիքով ու պատւզներով կերակրւում ահագին, հաստակաշի փղեր և ոնդեղջիւրներ:



Նկ. 47 Աֆրիկայի օքանի կենդ.

Աֆրիկայի անտառների խորքում համեմատաբար աւելի քիչ կենդանիներ կան: Ամենից շատ այնաեղ պատահում են կապիկներ և նըրանց զլիսաւոր թշնամիները՝ յովապներ (լէօպարդ): Ամե-



Նկ. 48 Յովազ (լուպարդ):

նախուլ տեղերում փոքրիկ ընտանիքներով ապրում են մարդանման կապիկներ — շիմպանզե և գորիլլա: Անտառների և սաւանների միջով հօսող զետերում և լճերում ապրում են զետաձիներ (բեզեմոտ) և կոկորդիլոսներ: Թէ անտառներում և թէ սաւաններում շատ կան միջատներ:

Նեղոսի վերին հոսանքի և մեծ լճերի մօտերքը լինում են շատ թռչուններ: Զմեռը այդ կողմերն են դիմում եւրոպայից չւող ահագին երամները:

Հարասային Աֆրիկայի տափաստաններում առաջ տպրում էին նոյն կենդանիները, ինչ որ ստւաններում, բայց այժմ նրանք համարեա թէ բնաշխնջ են արւած։ Այսպէս օրինակ՝ Հարաւային Աֆրիկայում վիլ մնացել է դեռ այն տեղերում, ուր արգելւած է սպանել նրանց։

Սահարայում կենդանիներ քիչ կան. այնտեղ գտնուում են միայն կարիճներ, մողէսներ և օձեր։ Սրանք շատ երկար ժամանակ, ամիսներ շարունակ, կարող են ապրել առանց ուտելու և խմելու։ Հովվաններով, որտեղ խոտ է բնուում, մինչև հեռու անապատ թափանցում են անտիլոպներ։ Սրանց, ինչպէս նաև ջայլամների համար, դժւար բան չէ մի օրում մի քանի տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն անցնել՝ ուտելիք կամ խմելիք որոնելու։ Անապատների ծայրերում պատահում են դիշակերներ—առիւծներ և բորենիներ։

Անապատների բոլոր կենդանիներն էլ մոխրա-դեղնաւուն գոյն են ունենում. այդ պատճառով էլ դժւար է նրանց նկատել նոյն զոյնը ունեցող ժայռերի և աւազի մէջ։

Ա. տլասի երկիրներում ևս առաջ կային ջայլամներ և առիւծներ, իսկ այժմ նրանք համարեա բոլորովին բնաշխնջ են արւած։

### 8. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աֆրիկան ունի մօտաւորապէս 150 միլիոն բնակիչ, այսինքն՝ ամբողջ մարդկութեան  $\frac{1}{10}$ -ից էլ պակաս։ Որովհետեւ



Կնկ. 49. Շիմպանզե։

Աֆրիկայի մակերեսոյթը հաւասար է մօտ 27 միլ. քառ. վերստի, կոչանակէ՝ իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ միջին հաշով գալիս է վեց մարդուց պակաս:



Կա. 50. Գորիլլայի բնակիք:

Աֆրիկայի տարբեր մասերը տարբեր չափով էլ բնակութիւն ունեն: Անապատները համարեա անմարդաբնակ են: Սակաւընակութիւն կայ նաև արեւադարձային ճահճուտ անտառների մէջ որոնց խորքերում թափառում են միայն որսորդական մանրիկ ցեղեր: Աֆրիկայի սաւանները շատ աւելի խիտ բնակութիւն ունեն; քան կենտրոնական-ասիական տափաստանները, որովհետեւ սաւաններում անձրեների առստութեան պատճառով հնարաւոր է երկրագործութեամբ պարապելը: Ամենախիտ ազգաբնակութիւնն ունի Նեղոսի ստորին հոսանքի բերրի հովիտը:

Աֆրիկայի ժողովուրդները պատկանում են երեք՝ սև, սպիտակ և գեղին ցեղերի: Սեւ ցեղին է պատկանում Աֆրիկայի բոլոր բնակիչների  $\frac{2}{3}$ -ից աւելին: Այդ ցեղին պատկանող գլխաւոր ժողովուրդն են Աֆրիկայում—ներք երբ: Սրանք ապրում են սաւանների և արեւադարձային անտառների ամբողջ տարածութեան վրայ և իրենց լեզով նայելով բաժանում են՝ Սուդանի և Բանտու նեղուերի:

Սև ցեղին են պատկանում նաև հոտտենտոնները և բուլզէնները, որոնք ապրում են հարաւարենմտեան:

Աֆրիկայում։ Նեղբերից նրանք գանազանւում են իրենց աւելի փայլուն, բայց խորշոմաւոր կաշւով և գանգուր մազերով։

Ապիտակ ցեղին պատկանող ժողովուրդներից Աֆրիկայում շատ հնուց սկսած ապրում են՝ հիւսիսում և արևելքում՝ քամեան ազգեր—բերբերները, եղիստացիները և այլն։ Ապա Ասիայից են դադթել սեմտկան ցեղեր—արաբները և հրեաները, որոնք յըրւած են ամեն տեղ քամիտների մէջ։

Քամեան և սեմտկան ազգերը նման են իրար թէ արտաքինով և թէ լեզով. միայն թէ քամեանների մէջ մի փոքր նկատելի են նեղրերի մի քանի նշաններ—աւելի հաստ շրթունքներ, սակաւամազութիւն դէմքի վրայ. Երկուսի կաշւի գոյնն էլ թուխ է։

Եւրոպացիները վաղուց չէ որ սկսել են բնակութիւն հաստատել Աֆրիկայում. նրանց թիւը մեծ է միայն ամենահարաւային մասում, որտեղի կլիման նրանց համար առողջարար է։

Թէ ցեղն յեղին պատկանում են միայն Մադագասկարի բնակիչները,—մադագասկան երը, որոնք այստեղ են դադթել հաւանօրէն Մալայեան արշիպելագից։

# ԵԳԻՒՅԵՑ ԵԹԵՆԶԻՆ ՄԱՍԻՐԸ

## 9. ԵԳԻՊՏՈՍ



Եգիպտոս կոչում է ստորին Նեղոսի հովիտը՝ շուրջը տարածւած անապատային մասերի հետ։ Այդ հովիտը ներկայացնում է մի տեսակ երկայն ովազիս՝ Սահարա անապատի մէջ։

Հովափի լայնութիւնը համառմ է մինչև 50 վերստի. բայց մարդկանց բնակութեան համար պէտքական է միայն նրա այն մասը, որ ողողում է ջրով, եթէ նեղոսը վարաբում է և ափերից գուրս գալիս։ Հովափի այդ մասի լայնութիւնը ոչ մի տեղ 15 վերստից չի անցնում։ միայն գելտայում նա շատ աւելի լայն է։ Հովափի մնացած ամբողջ մասը անապատ է, որովհետեւ Եգիպտոսի կլիման չափազանց չոր է և անձրեամբարեա երբեք չէ գալիս։

Եգիպտոսի բնակիչների թիւը համառմ է մօտ 10 միլիոնի։ Շրջակայքի անապատները համարեա անմարդաբնակ են։ Ամբողջ ազգաբնակութեան  $\frac{3}{4}$ -ը կազմում են սպիտակ ցեղի քամեան ճիւղին պատկանող ֆելան և նու երը։ Սրանք հին եգիպտացիների սերունդ են, միայն թէ խառնւած են արաբների հետ և իւրացրել են վերջիններիս լեզուն և կրօնը—մահմեդականութիւնը։ Նրանց ամբողջ կեանքը կախւած է նեղոսից\*): Գլխաւոր զրադաշտներն էն երկրագործութիւնը, որ ծանծաղէ կարունեած է գույքաւածական արագածութիւնը։

*Փարաւոնների ժամանակից սկսած նեղոսի հովիտը ամբողջապես կատարած է ջրանցքներով։ Դրանք երկու տեսակ են. կան այնպիսիները, որ խոր են, կան այնպիսիներն էլ, որ ծանծաղ*

*Ակ. 51. Քելլահ.*

\*.) Իզուր չէ, որ Փելլահների նախնիները—հին եգիպտացիները աստածացրել եին Նեղոս գետը, աղօթելիս նրան զիմում էին այս խոսքերով. «Փառք քեզ, Նեղոս, փառք քեզ, որ կենդանացնում ես Եգիպտոսը»։

են: Առը ջրանցքներով ջուրը գետից դալիս է ամբողջ տարւայ ընթացքում, իսկ ծանծաղ ջրանցքներով՝ երբ նեղոսր վարպում է:

Նեղոսր վարպում է ամառը, երբ եղանակը պարզ և շպէ է լինում: Վարարելուց Նեղոսր պղտորում է, ջրանցքները լցում են ու արտերը ողողում: Ամեն ինչ ծածկում է ջրով, որից բարձր մնում են միայն արմաւենու անտառակներով, ծառերով և քաղաքներով ծածկւած կղղիներ:

Պղտոր ջուրը կանգնում է ամբարտակներով (պատճէշներով) շրջապատած դաշտերում, և գետինը ծածկում է արդաւանդ տղմի հասա շերտերով: Հոկտեմբերին միայն, երբ ջուրը կրկին իջնում է, ֆելլաները ցանում են թաց տղմի մէջ ցոք են, բակլայ, եղի պտացոք են, բամբակ, շաքար եղի և արքար եղի գույն: Այս բոլորը բննում են ուշ աշնանը և ձրմեռը: Այն ժամանակ, երբ մեղնում դաշտերը ձիւնով են ծածկւած մինում, Եղիպտոսում կանաչում են փարթամ ցանքսերը: Հունածը լինում է գարնանը — մարտին և ապրիլին:

Հունձից յետոյ ֆելլաները սկսում են մաքրել ջրանցքները, որոնք տիղմով են ծածկւած լինում: Տիղմը զամբիւլիների մէջ են ածում նրանք, վեր են բարձրացնում և նրանով ամբացնում ամբարտակները: Հարիւր հաղարտոր ֆելլաները ամեն գարուն այդ գործով են զբաղվում:

Հունձը Եղիպտոսում միշտ էլ շատ առատ է լինում: Ոչ մի տեղ հողը այնպիսի հունձ չէ տալիս, ինչպէս Նեղոսի հովիտում: Այդ պատճառով աղգարնակութիւնը այնտեղ խիտ է: Ամեն տեղ, համեմատաբար մի փոքր բարձրադիր վայրերում, ցըւած են ֆելլաների գիւղերը: Տները այդ գիւղերում շինած են լինում իրար շատ մօտ, այնպէս որ հարթ կտուրները յաճախ իրար են կպչում:

Բացի ֆելլաներից Եղիպտոսում աղբում են նաև դըպտիներ (կոպտեր) և արաբներ: Ղպտիներն ես իրենց ծագումով հին եղիպտացիների սերունդ են, բայց ֆելլաներից զանազանում են նրանով, որ քրիստոնեայ են, պարապում են արհեստներով և առևտրով ու աղբում են կլիսաւորապէս քաղաքներում: Ղպտիների թիւն է մօտ 700,000: Արաբների մի-

մասը ապրում է քաղաքներում և տռետրով է պարապում։ Խսկ մեծամասնութիւնը, այսպէս կոչւած բեգութինները, թափառաշրջիկ կեանք է վարում։ Վերջապէս Եղիպտոսի քաղաքներում ապրում են նաև յոյն եր, հայեր, թուրքեր և եւրոպացիներ։



Նկ. 52. Կահիրէ։

Եղիպտոսի առետրական նշանակութիւնը շատ մեծ է։ Այստեղից եւրոպա են արտահանուում մեծ քանակութեամբ ցորեն և բամբակ։ Բացի դրանից՝ Եղիպտոսի վրայով է կատարում առետուրը Աֆրիկայի ներքին մասերի հետ—Նեղոսով, երկաթուղով կամ կարաւաններով։ Յատկապէս մեծ նշանակութիւն ստացաւ Եղիպտոսը, երբ 1869 թւականին փորւեց Սուեզի ջրանցքը։ Այս ջրանցքը, որի երկայնութիւնն է 110 վերստ, միացնում է Միջերկրականը Կարմիր ծովի հետ։ Այդ ջրանցքով են անցնում այն նաւերը, որոնք եւրոպայից գետի Ասիա, Աւստրալիա, արևելան Աֆրիկա են գնում։ Սուեզի ջրանցքը փո-

բելով՝ Եւրոպայից Հնդկաստան տանող ճանապարհը 7000 վերսա  
կարճացաւ:

Եգիպտոսը կառավարում է խեղիւը. բայց նա անկախ չէ, հարկ է վճարում Թիւրքիայի սուլթանին: Սակայն իրապէտ Եգիպտոսը անդիմացիների ձեռքում է: Եգիպտական բոլոր պաշտօնեաները, զօրապեաները և բարձր զինւորականները անգրիպացներ են:

Եգիպտոսի մայրաքաղաքն է՝ Կահիրէ, որ շինւած է Նեղոսի դելտայի սկզբում: Կահիրէն ամենամեծ քաղաքն է ոչ միայն Եգիպտոսում, այլ նաև ամբողջ Աֆրիկայում (ունի մօտ 600,000 բնակիչ):

Կահիրէից ոչ հեռու գտնւում են հին փարաւոնների դամբարանները, հսկայական պիրամիդները (բուրգեր): Թէպէտ գրանք շինած են Քրիստոսից մի քանի հազար տարի առաջ, բայց և այնպէտ մինչև օրս էլ լաւ են պահպէլ, որովհետեւ պինդ քարից են: Բուրգերի ներսում գտնվել են փարաւոնների զմբսած մարմինները, որոնք մուժի ան կոչւում: Բուրգերից շատերի վրայ էլ մնացել են հին Եգիպտացիների նշանագրերը, որ հիերօգլիֆ են կոչւում: Եգիպտոսում կան հսութեան շատ ուրիշ մնացորդներ:

Եգիպտոսի ամենանշանաւոր նաւահանգիստն է՝ Ալեքսանդրիա, նա միացած է Նեղոսի հետ նաւատար ջրանցքով, իսկ Կահիրէի հետ՝ երկաթուղով: Թէ Կահիրէում և թէ Ալեքսանդրիայում ապրում են բաւականաչափ հայեր, գլխաւորապէտ Թիւրքիայից:

Սուէզի ջրանցքի հիւսիսային ծայրում գտնւում է Պորտ-Սայիդ մեծ քաղաքը, իսկ հարաւում՝ Սուէզ:

## 10. ԱՏԼԱՍԻ ԵՐԿԻՐՆԵՐ

(Մարուկո, Ալժիր եւ Թունիս, Տրիպոլի եւ Բարկա)

Ատլասը բաղկացած է մի քանի լեռնաշղթաներից, որոնք ընկած են Ատլանտեան ովկիանոսի և Միջերկրական ծովի ափերի երկայնութեամբ: Ատլասի ծովափնեալ անտառներով, որոնց մէջ անում են մշտադալար ծառեր: Զմեռային յորդ-

անձը մների շնորհիւ ծովափնեայ մասը յարմար է երկրագործութեան և այդեղործութեան համար: Առլասի լեռնաշղթաների մէջ ընկած բարձր հովիտները տափաստաններ են, խոտով ծածկւած: Այդ տափաստանները յարմար են անասնապահութեան համար: Առլասի հարաւային ստորոտներից սկսում է անապատը, որի ովազիմներում միայն ապրել կարելի է:

Առլասի ազգաբնակութեան մեծ մասը, բնիկները, սպի-



Նկ. 53. Պիրամիդներ և սֆինքս:

տակ ցեղի քամեան ճիւղին պատկանող բերքերներն են, որոնք ամենահին ժամանակներից սկսած ապրում են այդտեղ: (Ալժիրում նրանք քարել են կոչւում): Ասիայից Առլաս են եկել յետոյ սեմիտ արաբները: Սրանք հպատակեցրել են բերքերներին և երկար ժամանակ իշխել նրանց վրայ. իսկ արևմտեան Առլասում մինչև օրս էլ իշխող են:

Քաղաքներում յիշած երկու ժողովուրդները խառնւել են. այդ խառնուրդ ժողովրդին պատկանողները կոչւում են մաւրեր:

Արաբները հովիւներ են և պարապում են զիսաւորապէս անասնապահութեամբ Նրանք սիրում են թափառեր բնակւում են վրաններում։ Թափառելիս նրանք կողոպտում են նսաակեաց բերբերներին։

Բերբերները նստակեաց կեանք են վարում։ Նրանց զիսաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և այդեգործութիւնը։ Նրանք արտերը ցանում են աշխանը, որ ձմեռաւյ անձրեները ջրեն այդ արտերը։ Հունձը լինում է գարնան սկզբին։ Հացահատիկների (ցորեն, գարի) հունձը սովորաբար լաւ է լինում, միայն թէ մորեխը երբեմն փշացնում է ցանքսը։

Այն միջոցին, երբ տղամարդիկ աշխատում են արտերում, կանայք զբաղւում են խաղողի և այլ պտղատու ծառերի մշակութեամբ։

Ատլասի երկիրների համարեա բոլոր բնակիչների կրօնը մահմեղականութիւնն է, լեզուն՝ արաբերէնն է։

Կառավարութեան նայելով՝ այդ երկրները բաժանում են մի քանի մասի։

Արևմուտքում գտնուում է ՄԱՐՈՒԴՈ պետութիւնը։ Պետութեան զլուխն է սուլթանը։

Մարուկօի զիսաւոր քաղաքներն են՝ Փէս եւ Մարուկօ։ Ֆէսում է ապրում սուլթանը։ Մարուկօի զիսաւոր նաւահանգիստն է՝ Տանժեր։ այդտեղով է կատարւում առևտուրը Եւրոպայի հետ։

Ալժիր և ԹՌԻՆԻՍ երկիրները կազմում են Ատլասի արեւելեան մասը։ Նրանք պատկանում են ֆրանսիացիներին։ Ֆրանսիացիները շատ օգտակար գործեր են կատարել այդ գաղութներում։ Նրանք այնտեղ հաստատել են կարգ ու կանոն, անց են կացրել շատ երկաթուղիներ։ ուսոգել են Մահարային մօտ եղած շատ հողամասեր, այնտեղ արտէզեան խոր ջրհորներ վորելով։ Այնտեղ, ուր առաջ անապատ էր, այժմ ծաղկում են փիւնիկեան արմաւենու շատ անտառակներ։ Արդիւնագործութիւնը և առևտուրը, գարձեալ ֆրանսիացիների շնորհիւ, զարդանում են այնտեղ։ Եւրոպա են արտահանւում շատ գինի, միքզ, վշակաղնու կեղե և այլն։ Ընդհանրապէս

Փրանսիացիները դնում են այնտեղ հումքեր, իսկ ծախում են՝ իրենց զործարաններում պատրաստած ապրանքներ։ Գլուխաւոր քաղաքները և նաւահանգիստներն են՝ Ալժիր և Թունիս։



ՀԿ. 54. Հրապարակ Թունիսում։

ՏՐԻՊՈԼԻ և ԲԱՐԿԱ երկիրները իրենց կլիմայով նման են Թունիսին և Ալժիրին. միայն թէ անձրեւ աւելի պակաս է գալիս։ Այդ պատճառով էլ բնակիչները (նոյն արաբները և բերբերները) աւելի աղքատ կեանք են անցկացնում։ Այդ երկիրները պատկանում են Թիւրքիային և կառավարում են թիւրք պաշտօնեաններով։ Բայց մի քանի արաբական շէյխեր աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան ինքը թիւրքական ընդհանուր նահանգապետը։

### 11. Ս Ա Հ Ա Ր Ա

Սահարան աշխարհիս ամենամեծ անապատն է. նա տարածվում է Աֆրիկայի ամբողջ մայր ցամաքի լայնութեամբ—Ատլանտիան ովկիանոսից մինչև Կարմիր ծովի ափերը, և Ատլասի սարերից ու Միջերկրական ծովից մինչև Սաւդան։ Սահարան մեծ է Եւրոպական Ռուսաստանից և հաւասար է Եւրոպայի  $\frac{2}{3}$ -ին։ Ամբողջ անապատը ծածկւած է

լերկ ժայռերի շերտերով կամ աւազաթմբերով։ Սահարայում փչում է սամում կոչւող աւազարեր փոթորիկը։ Այդ փոթորիկը թէն կարճ է տեսում, բայց և այսպէս չորացնում է ջուրը, ջրհորները աւազով է լըցնում և ճանապարհորդներ ոչնչացնում։ Տարիներ շարունակ անձրև չի գալիս Սահարայում։ Շոգը ստերի տակ հասնում է 30—40 աստիճանի։

Սահարայի միայն լեռնոտ տեղերում կարող է մարդ ապրել, ուր անձրեներ են գալիս և խոտ է բանում. բնակւել կարելի է նաև ովազիմներում, որտեղ ջուր է դուրս գալիս, և աճում են փիւնիկեան արմաւենիներ։



Կազ. 55. Սամում փորորիկ.

Լեռնոտ տեղերում ապրում են թափառաշրջիկ ցեղեր. Սահարայի արևմտեան կիսում՝ տուարէգները, որոնք բերբերական ցեղին են պատկանում։ Սարալանջերի աղքատ արօտատեղիներում պահում են նրանք այժ, ոչխար և ուղտ։

Ցածախ տուարէգները յարձակումներ են գործում կարաւանների վրայ և կողոպուտներ անում. երբեմն արշաւում են մինչև Ատլաս և Սուլան։

Ովազիմներում ապրում են նաև բերբերներ։ Սրանք սաստիկ խառնւել են արաբների և մասսամբ նեղբերի հետ։ Նրանց ամբողջ կեանքը կախւած է փիւնիկեան արմաւենուց\*):

\*). Անապատի բնակիչները արմաւի համար ասում են «Միակ մխիթարութիւնը աղքատների, օգնողը և փրկիչը ամենքիւ»։

Սահարայի մեծ մասը պատկանում է Ֆրանսիային, բայց Փրանս-սիացիների իշխանութիւնը ճանաչում են միայն Ալժիրի սահմանները:

Սահարայի և Սուդանի սահմանի մօտ է գտնուում Տիմքուկտուքաղաքը՝ Նիգեր գետի վրայ:

## 12. Հ Ա Բ Է Շ Ս Ա Ն

Հարէշստանը բարձր սարահարթ (բարձրաւանդակ) է, ամբողջապէս կիրճերով կարտւած. ունի բազմաթիւ լեռներ՝ մեծ մասը հարթ գագաթներով: Այդ գագաթները ծածկւած են լինում աւազի շերտերով կամ հանգած լաւայով: Կան նաև շատ հանգած հրաբխային սարեր՝ մինչև 4 վերստ բարձրութեամբ:

Մարդկային բնակութեան համար ունեցած յարմարութեանը նայելով՝ Հարէշստանը կարելի է բաժանել և ը և ք մասի—ստորին, միջին և վերին: Ստորին մասը շատ տաք կլիմայ ունի. հովիտները ամբողջապէս ծածկւած են արևադարձային անտառներով: Այդտեղ կան բազմաթիւ կապիկներ և յովազներ (լէօպարդ). պատահում են նաև առիւծներ, ընձուղտներ, փղեր և ունգեղջիւրներ: Գետերում ապրում են կոկորդիլոսներ և բազմաթիւ ձիագետիներ (բեղեմոտ): Մարդկանց բնակութեան համար անյարմար է այս մասը, ամառը, անձրեների ժամանակ, հովիտներով հոսում են արագավազ հեղեղներ, որոնք ափերից գուրս են գալիս և ողողում շրջակայըք: Շատ յարմար չէ բնակութեան համար նաև երկրի վերին մասը, որ բաղկացած է  $2\frac{1}{2}$  վերստ բարձրութիւն ունեցող բարձրաւանդակներից: Մարերի գագաթները այս մասում երկար ժամանակ ծածկւած են մնում ձիւնով:



Նկ. 56. Տուարէզ:

Բնակութեան համար ամենից յարմար է միջին մասը: Այստեղ լաւ աճում է խաղողի որթը, այստեղ է սուրճի ծառի հայրենիքը: Այս

բարձրաւանդակների վրայ շատ լաւ աճում են՝ ցորեն, զարի, կորեկ. ծաղկաւէտ արօտատեղիներն էլ կերակրում են կովերի, ոչխարների և այծերի բազմաթիւ հօտեր:

Հաք է շն երը խառնուրդ ժողովուրդ են: Նրանք սեմական ցեղին են պատկանում, Արարիայից են գաղթել այս երկիրը, ուր և խառնւել են քամեան ցեղին պատկանողների ու նեղուցի հետ: Շատ վաղուց արդէն նրանք ընդունել են քրիստոնէութիւնը: Սակայն կուապաշտական և մահմեղական հաւատալիքներ ու սովորութիւններ դեռ շատ կան հարէշների մէջ:

Հարէշների զլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և անտանապահութիւնը: Որովհետեւ ամառ ժամանակ Հարէշստանում շատ անձրեւ է գալիս, այդ պատճառով էլ հունձը այստեղ միշտ էլ լաւ է լինում:

Հարէշստանի առանձին մասերը կառավարուում են իրենց իշխաններով, որնք յարձակումներ են գործում իրար վրայ և աւերում երկիրը: Այդ իշխանները կոչւում են «նեղուս» Ամբողջ Հարէշստանի կառավարողն է «Նեղուս-Նեղեստին»—թագաւորների թագաւորը,—որին հարկ են տալիս միւս իշխանները: Նա անսահման իշխանութիւն ունի իր հպատակների կեանքի և մահւան վրայ:

Հարէշստանի զլխաւոր քաղաքն է՝ Աղջիս-Արեգա: Թէպէտ նա ունի մօտ 100 հազար բնակիչ, բայց նման է ոչ թէ քաղաքի, այլ մի մեծ գիւղի: *Հայոց այլ Յայրակ*

### 13. ԱՍԻԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԵՒԱԴԱՐՁԱՑԻՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՇՐՋԱՆ

Աֆրիկայի այս մասը տարածւում է Սահարայի հարաւային ծայրից մինչև Կալահարի, և Ատլանտիս ովկիանոսի տփերից՝ մինչև Հնդկական ովկիանոսի ափերը:

Աֆրիկայի սաւանների շրջանի բնութիւնը շատ փարթամ է: Տարւայ ամառային ամիսներին, երբ արեգակը բարձր է կանգնած լինում, տեղաւում են առատ, յորդ անձրեներ: Սաւանները ծածկում են խիտ և բարձր խոտով: Սաւանների մէջ ցրւած ծառերը ծաղկում են, և արեգարձային արգաւանդ հողը (սեահող) երկրագործ մարդկանց առատ բերք է տալիս: Զմեռւայ ամիսներին եղանակը չոր է լինում և այնպէս տաք, ինչպէս ամառը մեր երկրում: Երկինքը պարզ է լինում, արեգ

էլի այրում է. այդ միջոցին սաւաննենի խոտը գեղնում և չորանում է, ծառերը չորութիւնից թափում են իրենց տերենները:

Չմնուայ ամիսներին անձրև գալիս է միայն Գվինէի ծոցի ափերքին և կոնցո գետի աւազանում. այդ պատճառով էլ այնտեղ աճում են արեագարձային անտառներ: Սակայն մարդկային բնակութեան համար այդ անտառները անյարմար են. շատ քիչ տեղ կայ այնտեղ երկրագործութեան համար. անտառներն էլ մաքրելը հեշտ բան չէ:



Վարդեգ Պետրոսյան

բարձր է, իսկ կենտրոնում ցածրանում է: Գլխաւոր գետն է Նիգեր:

Սուզանի նեղրերը բանտու նեղրերից տարբերում են միայն իրենց լեզով: Նեղրերի գլխաւոր զբաղմունքն է՝ երկրագործութիւնը: Երանք չգիտեն թէ ինչ բան է զութան կամ արօր. հողը փորում են բրիչներով կամ հասարակ, ծայրը սրած փայտերով: Ամենից շատ ցանում են նրանք աֆրիկական կոռեկ (գուրբրու): Ցաջողութեամբ մշակում են նաև բանան, շաքարեղէցն և ուրիշ շատ բոյսեր:

Գիւղերում նեղրերը մշակում են միայն արմաւենիներ:

Անասնապահութիւնը սաւաններում ամեն տեղ զարգացած չէ: Իսկ բուն Սուզանում և Նորիայում (Նեղոսի միջին հոսանքի երկրամասում) անասնապահութիւնը ծագկած վիճակի

Սաւաններում և անտառներում ապրում են Սուզանի նեղրեր, և բանտու նեղրեր:

ՍՈՒՀԱՆ (այսինքն՝ «սև մարդկանց երկրը») կոչում է այն ընդարձակ երկիրը, որ ընկնում է Նիղեր գետի ակունքներից մինչև Սպիտակ Նեղոս: Իր տարածութեամբ Սուզանը համարեա հաւասար է Եւրոպական Ռուսաստանին.

Ամբողջ Սուզանը ներկայացնում է մի բարձրաւանդակ, որ արևելեան և արևմտեան մասերում

մէջ է և աւելի մեծ նշանակութիւն ունի, քան երկրագործութիւնը,

Արևադային անտառներում ասլրում են թղթակներ, որոնք զբաղւում են միայն օրսորդութեամբ և որսի ման գալով անդադար մի տեղից ուսիշ տեղ են թափառում:



Նկ. 58. Բնուակայիրների կարառանք անցնում է սպառնով:

Նեղրերը նստակեաց կեանք են վարում. ապրում են գիւղերում: Քաղաքներ շատ քիչ ունեն նրանք, որոինետև առևտուրը զարգացած չէ այստեղ: Մեծ քաղաքներ կան միայն Սուդանում. օրինակ՝ Կուկա, Կանօ, Տիմքուկտու:

Ոչ մի տեղ սարկութիւնը այն չափերի չէ հասած, որչափ Աֆրիկայում: Այժմ էլ, երբ Ամերիկայում ոչնչացել է սարկութիւնը, Աֆրիկայի շուկաներում սարուեները առևտրի ամենասովորական առարկայ են: Կենարոնական Աֆրիկայում յաղթւած թշնամիներին յաճախուութում են: Սրանով յայտնի են առանձնապէս նեամ-նեամ երը (նշանակում է «լափողներ»): Նրանք ուստում են ոչ միայն սպանւած թշնամիներին և զերիներին, այլ նաև իրենց ցեղակիցներին. օրինակ՝ որբերին և անօպնական մարդկանց: Նրանց գիւղերում ամեն տեղ թափաթփած կարելի է տեսնել մարդկային ոսկըներ, իսկ լափած թշնամիների գանգերը նրանք կախի են տալիս ծառերի ձիւղերից՝ իրով պարզաբանուու:

Նեղբական ամենամշանշաւոր պետութիւնն է Լիբերիա՝ հասարակագույնութիւնը՝ Սոնգովիա զիսաւոր քաղաքով։ Այդ

հասարակապետութիւնը հիմնել են այն նեղբերը, որոնք Ամերիկայում ստրկութիւնից ազատելով Աֆրիկա եկան:

Նեգրերի ընդունակութիւնը, ընաւորութիւնը եւ կլոնը: — Նեգրերի երեխաները հեշտութեամբ են սովորում կարգալուրել և շուտ են իւրացնում օտար լեզուներ: Սակայն նրանց զարդացամը շուտ էլ կանգ է առնում, և նրանք ամբողջ կեանքի ընթացքում երեխայի պէս են մընում: չեն մտածում բնաւ էզուցւայ մասին, սիրում են խաղեր, շատախօսութիւն և գւարձութիւն:



Նկ. 59. Բռնւած բզուկ (աղեղով և թունաւորած նեսերով): Սրանք ողիների մէջ եղած միջնորդներն են՝ քրմերը: Սրանք ողիների սիրում առնում են առաջախակ առարկաները, որ պաշտում են նեգրերը: Սրանք հաւատում են, իրք թէ այդ առարկաների մէջ կամ նրանց մօտ գտնուում են բարի կամ չոր ողիներ, որոնք կարող են օգնել կամ վասել մարդու: Մարդկանց և ողիների մէջ եղած միջնորդներն են՝ քրմերը: Սրանք ողիների սիրում առնում են առթքներով, պարերով և զոհներով (յաձախ մարդկային զոհներով): Թրմերը բժշկում են նաև հիւանդներին, միայն ոչ թէ գեղերով, այլ կախարդութեամբ:

Վերջին դարերի ընթացքում նեգրերի մէջ ֆետիշական կրօնը սկսեց տեղի տալ մահմեղականութեան, գլխաւորապէս շնորհիւ արար վաճառականների և որսորդների: Իսկ քրիստոնէական քարոզը նեգրերի մէջ սակաւ յաջողութիւն է գտնում:

#### 14. ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՍԱԻԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

Շնորհիւ նեգրական պետութիւնների թուլութեան՝ եւրապացիները կարողացան տիրել կամ տանց որևէ պատերազմի բաժանել իրար մէջ Աֆրիկայի բոլոր սաւանները և անստառապատ մասերը (չհաշւելով Լիբերիա հաւարակապետութիւնը): Այսպէս՝ ամբողջ Սուդանը այժմ բաժանւած է ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի մէջ. Կենտրոնական

Աֆրիկան ևս բաժանել են եւրոպացիները իրար մէջ՝ Արևմտեան ծովափում գտնւում են՝ գերմանական (Կամերուն գաղութը), Փրանսիական (Ֆրանսիական Կոնգօ) և պորտոգալական (Ալգորա) կալւածքները. իսկ արևելքում անգլիական, գերմանական և պորտոգալական կալւածքները: Կենարոնական Աֆրիկայի մէջտեղում ընկած է Կոնգօ պետութիւնը, որ ենթակայ է Բելգիային:

Եւրոպական այս գաղութների կէ ի ման շատ վատ առողջ է (ամեն տեղ մեծ զոհեր է տանում մալեարքան). այդ պատճառով էլ նըրանք անյարմար են եւրոպացիների բնակութեան համար և միայն առևտրական տեսակէտից նշանակութիւն ունեն: Եւրոպացիները այդտեղ բերում են հրազէն, ճոթեղէն, ապարանջան և ուրիշ զարգարանքներ, որ շատ են սիրում նեղութերը: Իսկ նեղութերից նրանք գնում են՝ արմատի խող, կառչուկ, փղի և ձիազետիի ժանիք, զազանների մորթի:

Առևտրի յարմարութեան համար եւրոպացիները մայր ցամաքի ներօը անց են կացրել մի քանի երկաթուղային գծեր, իսկ մեծ գետերի և լճերի վրայ սարքել են նաւազնացութիւն:

Մի քանի տեղերում եւրոպացիները գցել են շաքարեղէզնի, սուրճի և կակաօի տնկարաններ (պլանտացիաներ). բայց այդ տնկարանները չեն ծաղկում, որովհետեւ նեղութերը չեն սիրում տեսական աշխատանք, իսկ եւրոպացիները հիւանդանում են ջերմից: Եւրոպացիները սովորաբար ապրում են ֆակտորիաներում, այսինքն առևտրական կայարաններում, շինուած այս ու այն տեղ՝ ովկիանոսի կամ մեծ գետերի ափերին իւրաքանչիւր ֆակտորիա ամրացրած է պինդ ցանկապատով և պահպանում է սևամորթ զինուրների վաշտով՝ սպիտակամորթ սպայի ղեկավարութեամբ:

## 15. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Կլիմային նայելով՝ Հարաւային Աֆրիկան կարելի է բաժանել երեք մասի՝ Հնդկական ովկիանոսի խոնաւ ծովափի, Օրանժ գետի սակաւածուր աւազան և Կալահարի ջրազուրկ անապատ:

Հնդկական ովկիանոսից փշող խոնաւարեր քամին երը ծովափերում մթնոլորտային շատ տեղումներ են թափում: Այդ պատճառով այդտեղ պատահում են մերձարևադարձային անտառներ և լաւ աճում են՝ խաղող, նարինջ և ուրիշ պտղատու ծառեր: Դրակոնի սարերից արևմուտք աւելի քիչ մթնոլորտային տեղումներ են թափում: այդտեղ կան տափաստաններ, որոնք յարմար են միայն անասնապահութեան համար: Կալահարի անապատում աճում են կարծր խոտ և փշոտ թփեր:

Կալահարիի չորութեան պատճառներից մէկն այն է, որ Հարաւ. Աֆրիկայի արևմտեան ծովափի երկայնութեամբ անցնում է ցուրտ հոսանք, որ շաա քիչ գոլորշիներ է տալիս:



Կալահարիի արևմտեան ծովափի հոսանքը:

Հար. Աֆրիկայի բնիկ ազգաբնակութիւնը կազմում են—արևելեան մասում՝ զուլուսները կամ քաֆրերը, (որ բանտու նեղորեից են), իսկ արևմտեան մասում՝ հոտտենտոտները և բուշմէնները: Այդ վայրենի ցեղերի զլաւոր զբաղմունքն է անասնապահութիւնը:

Հարաւային Աֆրիկայի առողջ կլիման և գեղեցիկ արօտատեղիները վազուց արդէն սկսեցին դէպի այդ կողմերը զբաւել եւրոպացիներին:

Առաջին անգամ հոլանդացի զիւլացիներ (բուրեր) եկան այդ կողմերը՝ 17-րդ դարում, իսկ 19-րդ դարի սկզբից՝ նաև անգլիացիները, որոնց ձեռքում և զտնում է այժմ համարեա ամբողջ Հարաւային Աֆրիկան:



Կալահարիի արևմտեան ծովափի հոսանքը:

Բուրերը սկզբում հաստատւեցին Բարեյուսոյ հրեանդանի մօս, որտեղ նրանք հիմնեցին Կապշտադի քաղաքը:

Բուրերը նւաճեցին տեղական միքանի ցեղեր և հիմնեցին երկու հաստրակապետութիւններ—Օրանժի և Տրանվալի: Երբ իմացւեց, որ այդ երկերները հարուստ են ուկու և ալմաստի հանքերով, զբանից յետոյ անգլիացիները երկար և յամառ պատերազմելուց յետոյ, նւաճեցին այդ հասարակապետութիւնները ու իրենց զարութները դարձրին (1902թ.):

Թէ զաղթածների և թէ Հար. Աֆրիկայի բնիկների զլաւոր զբաղմունքն է՝ անասնապահութիւնը:

հութիւնը: Հարաւային Աֆրիկայի տափաստանները ամառ ժամանակ շատ չեն չորանում, ձմեռն էլ ձիւնով չեն ծածկում: Ամբողջ տարին այնտեղ արածում են ոչխարների և եղջիւրաւոր խոշոր կենդանիների հօտեց:

Երկրագործութեան համար Հար. Աֆրիկայի տափաստանների կիման շատ է չոր. ցորենի և ուրիշ հացահատիկների արտերը լաւ հունձ են տալիս միայն արևեստական կերպով ջրւելուց յետոյ:

Սակայն Հար. Աֆրիկայի գլխաւոր հարստութ. հողի ծոցում են թագնւած—ոսկին և ալմաստը:

Անցեալ դարի վերջում Տրանսվալում գտնւեցին ամենահարուստ ոսկու հանքերը: Հազարաւոր մարդիկ դիմեցին դէպի այդ երկիրը և շուտով հիմնեց Յովիաննէորուրգ քաղաքը. նա հիմնել է մեզնից ընդամենը 22 տարի առաջ և այժմ դարձել է ամենամեծ քաղաքը ամբողջ Հարաւային Աֆրիկայում (ունի համարեա 200,000 բնակիչ):



Կ. 62. Պուր:

Ոսկու հետ միաժամանակ Հար. Աֆրիկայում գտնւեց նաև ալմաստ,—մանաւանդ վաալ գետի հովառում: Շատ եւրոպացիներ դէպի Հարաւային Աֆրիկա շաալեցին՝ հարստանալու նպատակով: Հանքահորերում (շախտաներում) եւրոպացիների հոկոզութեան տակ աշխատում են քաֆրերը և ալմաստ որոշում: Ամենահարուստ հանքերի մօտ հիմնեց և կարճ ժամանակւայ ընթացքում մեծացաւ կիմբերլէյ քաղաքը:

Ոսկու և արծաթի հանքերի շահագործումը գտնւում է անգլիացիների ձեռքում: Բուրերը առաջւայ նման անասնապահութեամբ են պարապում և ապրում են տափաստաններում՝ իրենց պարզ բայց յարմար ագարակներում (ֆերմա): Բաֆրերը և հոտտենտոտները նմանապէս պահում են անասուններ և ապրում են գիւղերում (կրաալ): Բուշմէններին եւրոպացիները

համարեա բնաջինջ են արել. մնացածները քշւել են կալահարի անապատը և այսաեղ թափառաշրջիկ որսորդների կեանք են անց կացնում: Հանքերում աշխատում են միայն ամենաաղքատ քաֆրերը, այն է՝ ոչ-սիրով. այս պատճառով վերջին ժամանակներս անգլիացիները սկսել են հար.-Աֆրիկա բերել չինացի կուլիներ (բանւորներ):

Ոսկին, արծաթը, բուրդը և հար. Աֆրիկայի ուրիշ արտադրութիւնները արտահանուում են դէպի եւրոպա հետեւեալ նաւահանգիստների վրայով—կապշտաղտ, Պորտ-Եղիսաբէթ և Պորտ-Նավալ: Այդ նաւահանգիստներից դէպի երկրի խորքերը անց են կացրած երկաթուղային դժեր:

Ամբողջ բրիտանական հարաւային Աֆրիկայի գլխաւոր քաղաքն է՝ կապշտաղտ. այնտեղ է ապրում անգլիական ընդհանուր նահանգապետը, որի իշխանութիւնը սահմանափակւած է ժողովրդից ընտրւած ներկայացուցիչներով:

### 16. Աֆրիկաթի կղջիների

Աֆրիկային պատկանում է միայն մէկ հատ մեծ կղզի—Մադագասկարը. սա հողակոշտերից է բազկացած և ծածկւած է սաւաններով ու արեադրձային անտառներով. ունի տաք, վատառողջ կլիմայ: Կղզու բնակիչներն են՝ մազգագաները, որոնք պատկանում են մալայեան ցեղին. վերջինս կղզու արևմուտքում խառնել է բանտունեղրի հետ և սրանց նման էլ կեանք է վարում:

Աֆրիկայի մնացած կղզիները չնչին են իրենց մեծութեամբ: Նըրանց մեծ մասը հրաբխային ծագում ունի. օրինակ՝ Մադեյրա, Կանարեան, Համբարձման, Ս. Հեղինէի, Մակարենեան կղզիները. Ռուիշ կղզիների, օրինակ Զանգիբարը, Կորալլական են:

Աֆրիկայի համարեա բոլոր կղզիներն էլ փարթամ բուսականութիւն ունեն: Մասկարենեան կղզիների վրայ մեծ չափերով մշակւում է շաքարեղիզն, Մադեյրայի վրայ՝ խաղող, որից այնտեղ լաւ գինի են պատրաստում:

Աֆրիկայի բոլոր կղզիներն էլ պատկանում են եւրոպացիներին. Մակապասկարը պատկանում է ֆրանսիացիներին. Զանգիբարը, Ս. Հեղինէի և Համբարձման կղզիները՝ անգլիացիներին. Մադեյրան—պորտուգալացիներին. Եւրոպական նաւերի համար կղզիներից շատերը ծառայում են իրեւ լաւ կայարաններ, որտեղ կարելի է գտնել պաշար և ածուխ:

Աշուակ. դատարկութեան 1912—1913թ.

Հայոց պատմութեան հայութեան

Ծրեալ:

## Ա Մ Ե Ր Ի Կ Ա

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԵՐԸ ԳՐՈՒԹԻՒԹԻՒՆ

#### 1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻԲՅԱՅ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՓԵՐԻ ԳԾԱ- ԳՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկան գտնուում է արևմտեան կիսագնդում. երբ այն-  
տեղ ցերեկ է՝ մեզնում, արևելեան կիսագնդում, գիշեր է լի-  
նում և ընդհակառակը:

Բոլոր աշխարհամասերից Ամերիկան բաժանուած է ով-  
կիանսաներով.—Եւրոպայից և Աֆրիկայից նա բաժանուած է  
Աստվանտեան ովկիանսոսով, Ասիայից և Աւստրալիայից՝ Մեծ-  
Ռվիկանսոսով. Միայն ամենահեռաւոր հիւսիս-արևմուտքում, Բե-  
րինգեան նեղուցի մօտ, Ամերիկան բաւական մօտենում է  
Ասիային:

Իր մեծութեամբ Ամերիկան մի քիչ փոքր է Ասիայից,  
իսկ երկայնութեամբ առաջին տեղն է բռնում բոլոր  
աշխարհամասերի մէջ. հիւսիսից հարաւ նա 15,000 վերստ-  
տարածութիւն ունի (արևմուտքից արևելք, ամենալայն մասում,  
 $5\frac{1}{2}$  հազար վերստ):

Ամերիկան բաղկացած է երկու մասերից—Հիախային եւ  
Հարաւային Ամերիկա։ Սրանք իրար հետ միանում են ցամաքի-  
մի երկայն ու նեղ շերտով, որ կոչւում է Կենտրոնական Ամե-  
րիկա. Կենտրոնական Ամերիկայի ամենանեղ մասը կոչւում է  
Պանամայի պարանոց։

Հնումը Ամերիկայի երկու մասերը առանձին-առանձին  
մայր ցամաքներ են եղել, իրարից բաժանուած, այդ է պատ-

ճառը, որ այդ երկու մասերի բնութիւնը, յատկապէս ըռւսականութիւնը և կենդանական աշխարհը, բաւականաչափ տարբերւում են իրարից: Ընդհակառակը՝ լեռների (հիւսիսից հարաւ ձգւող) և դաշտավայրերի դիրքին նայելով՝ նրանք շատ նման են իրար. երկու մասերից իւրաքանչիւրն էլ հիւսիս գնալով լայնանում է, իսկ հարաւ գնալով՝ նեղանում:

Հիւսիսային Ամերիկայի ափերը շատ են կտրտւած. այնտեղ կան շատ թերակղզիներ, որոնցից ամենամեծերն են—Լար-քաղոր, Փլորիդա, Կալիֆորնիա եւ Այնավա:

Ծոցերից նշանաւոր են.—Հուդզոնի, Ս. Լավենտիոսի, Մեքսիկայի եւ Կալիֆորնիայի ծոցերը:

Ամերիկայի ափերին ընկած են շատ կղզիներ. նշանաւոր են.—Նիուիֆառնովինդ, Գրէնլանդիա, Բաֆֆինի երկիր:

Հարաւային Ամերիկայի ափերը ամենաեին կտրտւած չեն,—այնտեղ չկան մեծ թերակղզիներ և ծոցեր. նրա ափին ընկած է միայն մէկ նշանաւոր կղզի—Հոռյ Նրկիրը, որ մայր ցամաքից բաժանում է Մազեյլանի նեղուցով:

## 2. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԸՆ ԵՒ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ամերիկան երկու անգամ է գտնել եւրոպացիների ձեռքով: Առաջին անգամ գտան Ամերիկան 10-րդ դարում նոր մանները, —որոնք առլորում էին Սկանդինավիա թերակղզու վրայ: Նոր երկիրներ որոնելու նպատակով՝ նրանք յաճախ էին ձեռնարկում ծովային հեռաւոր ճանապարհորդութիւնների, և այդպիսով՝ նրանք գտան սկզբում Գրենլանդիան, իսկ յետոյ՝ Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափը, որ և նրանք «խաղողի երկիր» կոչեցին (որովհետեւ այնտեղ մեծ քանակութեամբ վայրի խաղող էր աճում): Նորմանները մեծ նշանակութիւն չտվին իրենց գիւտին և շուտով մոռացւեց այդ բանը. իսկ մնացած եւրոպացիները այդ գիւտի մասին մի բան էլ չիմացան:

Երկրորդ անգամ, նորմաններից միանգամայն անկախ կերպով, Ամերիկան գտաւ Քրիստովոր Կոլումբոսը: Սա իստալացի էր, ձենովաքդաքից, միայն թէ Խաղանիայի թագաւորի մօտ էր ծառայում: Իր ժամանակի ուրիշ ծովագնացների նման Կոլումբոսը նպատակագրել էր գտնել ամենակարճ ճանապարհը գէպի Հնդկաստան: Նա մտածում էր, որ այդ նպատակին հասնել կարող է՝ եւրոպայից ուղիղ դէպի:

արևմուտաք դիմելով: 1492 թուականի օգոստոսի 3-ին Կոլումբոսը ճառապարհ ընկաւ Ատլանտիան ովկիանոսով. նոյն տարւայ հոկտեմբերի 31-ին նա հասաւ Բահամեան կղզիներից մէկին: Կուրա և Հայթի կը դղիներն էլ գտնելով՝ վերագարձաւ իսպանիա և բերաւ ուրախ լուրը—վերջապէս գտնւել է ծովային ճանապարհը գէպի Հնդկաստան (Կոլումբոսը կարծում էր, որ իր գտած կղզիները Հնդկաստանի մօտ են, իսկ Կուրա կղզին նա Ետպոնիայի տեղ էր ընդունում):

Ցետոյ Կոլումբոսը երեք անգամ ևս ծովային ճանապարհորդութիւն կատարեց և գտաւ շատ նոր կղզիներ, նաև բուն Ամերիկա մայր ցամաքը. բայց միշտ էլ նա այն կարծիքին էր, թէ իր գտած երկիրները չարաւ-Արևելեան Ասիայի մասերն են: Այդ համոզման մէջ էլ նա մեռաւ: Եւրոպացիները երկար ժամանակ նոր գտնւած երկիրները կոչում էին Հնդկաստան, իսկ յետոյ՝ Վեստ-Ինդիա, այսինքն Արևելեան Հնդկաստան:



Նկ. 63. Մագելլան.

Գտնւած երկիրները յայտարարւեցին իրեւ իսպանական կալւածներ. այնուհետև նորանոր ճանապարհորդներ սկսեցին յաճախել այդ կողմերը: Շատ ճանապարհորդութիւններից յետոյ միայն Եւրոպացիները համոզւեցին, որ Կոլումբոսը նոր աշխարհամաս է գտել, Այդ նոր աշխարհամասը «Ամերիկա» կոչւեց մի երկրորդական ճանապարհորդի—Ամերիկո Վեսպուչչի անունով, որ կաղմել էր գտնւած երկիրների նկարագրութիւնը և քարտեսը:

Կոլումբոսից յետոյ՝ Ամերիկայի հետազոտման համար ամենամեծ

ժառայութիւնը արել է իսպանացի ծովադնաց Մագելլանը: Նա աշխարհի շուրջը ձեռնարկած իր ճանապարհորդութեան (1520 թ.) միջիցին Ատլանտիան ովկիանոսից մտաւ իր անունով (Մագելլանի) կոչւած նեղուցը, կտրեց անցաւ Հարաւային Ամերիկան և առաջինը եղաւ, որ համոզւեց, թէ Ամերիկայի և Ասիայի մէջ գտնւում է մի հակայական ովկիանոս (որ և նա Խաղաղ օվկիանոս կոչեց):

Այնուհետև Եւրոպացի ճանապարհորդները մանրամասն հետազոտեցին Ամերիկայի զանազան մասերը. շատ Եւրոպացիներ հիմնեցին այնուեղ իրենց գաղութները:

### ՅԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի արևմտեան տփի երկայնութեամբ—Ալեառ-  
կայից մինչև Հրոյ-Երկիր—տարածւում են աշխարհի ամենա-  
երկայն լեռները Կորդիլլրերներ. սրանք հարաւային Ամերիկա-  
յում նաև Անդ են կոչւում։ Այդ լեռները կտրւում են միայն  
մէկ տեղ—Պանամայի պարանոցում։

Կորդիլլերները իրենց համարեա ամբողջ տարածութեան  
վրայ բաղկացած են մի քանի զուգահեռական լեռնա-  
շղթաներից։ Հիւսիս-Ամերիկեան Կորդիլլերներում այդպի-  
սի լեռնաշղթաներ շատ կան, որոնք և իրենց առանձին անուն-  
ներն ունեն—Ժայռոտ, Կասկադեան, Սըերրա-Նեւադա և այլն։  
Այդ լեռնաշղթաների մէջ ընկած են ընդարձակ բարձրաւան-  
դակներ. օրինակ՝ Մերսիկայի բարձրաւանդակը։

Հարաւ-Ամերիկեան Կորդիլլերները կամ Անդերը շատ աւե-  
լի նեղ են. նրանք մեծ մասով բաղկացած են երկու զուգահեռա-  
կան լեռնաշղթաներից. նրանց մէջ ընկած են երկայն, բայց  
նեղ բարձրաւանդակներ. օրինակ՝ Պերու և Բոլիվիա. Վերջինս  
4 վերստ բարձրութիւն ունի, այսինքն համարեա Տիրետի չափ։

Բարձրութեան կողմից Կորդիլլերները յետ են մնում  
միայն Հիմալայեան և Կարակորում լեռներից. առանձնապէս  
բարձր են Հար. Ամերիկայի Կորդիլլերները. Նոյն իսկ հասա-  
րակածի մօտ, որտեղ ձեան սահմանը 5 վերստ բարձրութեան  
վրայ է գտնւում, այդ լեռների գագաթներից շատերը ծած-  
կւած են յաւիտենական ձիւնով։

Կորդիլլերների ամենաբարձր գագաթն է Ակոնկագուա,  
մօտ 7 վերստ բարձրութեամբ. նա հանգած հրաբուխ է։ Բնդ-  
հանրապէս այդ լեռնագագաթների մեծ մասը հըարխային  
է—կամ զործող և կոնմ հանդած։

Կորդիլլերների արևելեան ստորոտներից սկսած—թէ Հիւ-  
սային և թէ Հարաւային Ամերիկայում—տարածւում են  
ընդարձակ հարթութիւններ, որոնք կամ բլաշտավայրեր. օրինակ՝ Միսիսիպի, Ամազոնի, Լասպատեան գաշտավայրերը։ Բնդարձակ հար-


թութիւններից դէպի արևելք—թէ Հիւսիսային և թէ Հարաւային Ամերիկայում—նորից բարձրանում են լեռներ. Հիւսիսային Ամերիկայում՝ Ալեգանի, իսկ Հար. Ամերիկայում Բրազիլիայի խռները՝ Իրենց բարձրութեամբ այդ լեռները համեմատւել չեն կարող կորդիլլերների հետ. մինչև գագաթը նրանք ծածկւած են տնտառներով և խոտով:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները մակերեսոյթի կազմութեամբ իրար շատ են նման:

#### 4. Կ Լ Ի Մ Ա Ն

Հիւսիսից հարաւ Ամերիկան չափազանց մեծ երկայնութիւն ունի. նրա հիւսիսային ծայրն ընկնում է հիւսիսային քեռային շրջանակից այն կողմը, իսկ հարաւային ծայրը՝ հարաւային արևադարձից այն կողմը:

Բնեուային կղզիների և Սառուցեալ Ովկիանոսի ափերի կլիման շատ ցուրտ է, ինչպէս հիւսիսային Սիբիրում: Գրենլանդիան և մի քանի ուրիշ կղզիներ ծածկւած են յաւիտենական ձիւնով և սառցադաշտերով, որոնք ուղղակի ովկիանոս են լոգում, և կտոր կտոր լինելով գոյացնում են սառցասարեր (ովկիանոսում): Լարրապորի ցուրտ հոսանքը քաշում առնում է այդ սարերը դէպի հարաւ և ցրտութիւն բերում մայր ցամաքի հիւսաւարեկեան ափերից:



Նկ. 64. Վրճութային և զումբների բաժիններ Հիւսաւարեկեան ափերից:

Զհաշւած Սառուցեալ ովկիանոսի ցուրտ ափերը և Լարրապորի թերակղզին՝ Հիւսիսային Ամերիկայի մնացած մասը բաւա-

կանին տաք, բայց խիստ ցամաքային կլիմայ ունի Ամառը մայր ցամաքը խիստ տաքանում է, և շոգերը համուռմ են մինչև  $40^{\circ}$  և  $50^{\circ}$ , իսկ ձմեռը այնչափ ցրտում է, որ  $30^{\circ}$  և մինչև իսկ  $40^{\circ}$  սառնամանիքներ են լինում:

Միայն Մեքսիկայի տաք ծոցի ափերին սակաւ են լինում սառնամանիքներ. թէպէտ երբեմն ձմեռը այնտեղ ձիւն գալիս է, բայց իսկոյն և եթ հալչում է՝ հէնց որ ծոցից տաք քամի է չփում:

Մեքսիկայի ծոցը մեծ ազդեցութիւն ունի Հիւս. Ամերիկայի կլիմայի վրայ. այսինքն գարնանը և ամառը, երբ ցամաքը աւելի է տաքացած լինում քան ծովը, այդ ծոցից փչում են խոնաւարեր քամիներ, որոնք մթնոլորտային առատ տեղումներ են թափում Հիւս. Ամերիկայի ամբողջ արևելեան կիսում:

Մեքսիկայի ծոցից է սկսում երկրագնդի ամենառժեղ տաք հոսանքը, որ Գոլֆշտրոմ՝ կոչւում, նա տաքացնում է Ֆլորիդան և տաքութիւն է տանում դէպի բաց ովկիանոսը—մինչև հեռու Եւրոպայի ափերը. երկրագնդի այս մասի համար նա շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան Ամերիկայի համար:

Կենտրոնական Ամերիկայի և Հար. Ամերիկայի մեծ մասի կլիման արևադարձային է: Ամբողջ տարին այնտեղ շատ տաք է լինում. յունւարը համարեա ոչնչով չէ զանազանուում յուլիսից: Անձրեւ շատ է գալիս, որ բերում են զիսաւորապէս հիւսիս-արեւելեան պասսատները: Այս քամիները փչում են ամբողջ տարին անընդհատ: Անցնելով Ատլանտեան ովկիանոսի ամենատաք մասով, նրանք լցում են խոնաւութեամբ, որ բերում թափում են կենտրոնական և Հար. Ամերիկայի կղզիների և մայր ցամաքի վրայ: Յատկապէս շատ անձրեներ են գալիս Ամազոն գետի ջրաբաշխում:

Այծեղեր արևադարձից հարաւ կլիման աստիճանաբար աւելի ցուրտ և չոր է դառնում: Լապլատեան դաշտավայրի վրայ արդէն նկատելի է ձմեռուայ և ամառուայ տարբերութիւնը, իսկ սառնամանիք՝ ձմեռը այնուամենայնիւ համարեա երբէք չի լինում, երկիրը չէ ծածկում ձիւնով: Մշտական սառնամանիքներ լինում են ձմեռը (յուլիսին) միայն ամենահեռաւոր հարաւում—Հրոյ Երկրում, այն էլ բարձր սարերի վրայ:

Ամերիկայի (թէ Հիւս. և թէ Հար.) ուսոգման զլխաւոր աղբիւր ծառայում է Սալանտեան ովկիանոսը: Մեծ ովկիանոսից Ամերիկան կորեած է Կորդիլլերներով: բացի դրանից՝ Ամերիկայի արևմաեան ափերի երկայնութեամբ անցնում են ցուրտ հսաւանքներ, որոնք քիչ զոլորշիներ են տալիս:

### 5. ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Ամերիկայի գետերը աչքի են ընկնում իրենց ջրառատութեամբ: Նրանք մեծ մասով հոսում են դէպի Հիւսիսային Սառուցեալ և Սալանտեան ովկիանոսներ:

Հիւս. Ամերիկայի ամենամեծ գետն է Միասիսիպի: Միսսիսիպի, Օհայօ և ուրիշ վատկներով: Եթէ Միսսուրին հետը հաջւենք՝ Միսսիսիպին կլինի ամենաերկայն գետը երկրագնդի վրայ (մաս 7,000 վերստ): Ջրառատ է նաև Ս. Լայրենտիոսի գետը, որ հոսում է Ամերիկայի հետեւեալ նշանաւոր լճերով—Մերին, Հուրոն, Միչիգան, Էրի և Օնտարիօ: Երկրագնդի վրայոչ մի ուրիշ վայր չկայ, ուր անուշ ջուր ունեցող լճեր այնչափ շատ լինեն, որչափ այսուհետ:

Դրանց մէջ ամենամեծն է Վերնուն լիճը, որ 600 վերստ երկայնութիւն ունի: Էրի և Օնտարիօ լճերի մէջ է ընկնում Նիազարա հոչակաւոր ջրվէժը:

Հիւսիսային թեքւածքով հոսով գետերից ամենանշանաւորներն են.—Նելսոն (որ հոսում է վլինիանեց լճի միջով) և Մելենզի (որ հոսում է Ատարասկա և Արջի լճերի միջով): Այս գետերը, չնայելով որ ջրառատ են, առանձին նշանակութիւն



Նկ. 65. Մընուցային եկամումների բաշխումը Հար. Ամերիկայում:

չունեն նաւագնացութեան համար, որովհետեւ թափւում են այնպիսի ծովեր, որոնք լիքն են սառոյցով, և հէսց իրենք էլ երկար ժամանակ սառած են լինում:

Դէպի արեմուտք, Մեծ կամ Խաղաղ ովկիանոս են հոսում հվզն, Կորոմըիա և Կոլորադօ գետերը:

Հիւսիսային Ամերիկայում կան նաև սակաւաթիւ աղի լճեր, որոնք գտնուում են բարձրաւանդակների վրայ. ամենանշանաւորն է՝ Մեծ Աղի լիճը:

Հարաւային Ամերիկայի ամենամեծ գետն է՝ Ամազոն, իր երկայնութեանը նայելով (5<sup>1</sup>/<sub>2</sub> հազ. վ.) նա յետ է մնում Միսսիսիպի և Նեղոս գետերից, իսկ ջրառատութեամբ առաջին գետն է երկրագնդի վրայ: Նա ունի 15 այնպիսի մեծ վտակներ, ինչպէս են Հայաստանի Եփրատ, Տիգրիս և Երասխ, կամ Ռուսաստանի Վոլգա, Դոն և Դնէպր գետերը: Այդ վրտակներից նշանաւոր են՝ Մադեյրա, Ոխո-Նեզոր և ուրիշները, —որոնք նաւագնաց են համարեա մինչև իրենց ակունքները: Ինքը Ամազոնը նաևագնաց է մինչև Կորդիլլերների ստորոտները: Իր ստորին հոսանքում Ամազոնը այնչափ խոր է և լայն, որ ծովային մակընթացութիւնը հասնում է մինչև 1,000 վերստ վեր նրա հոսանքով:

Հարաւային Ամերիկայի երկրորդ մեծ գետն է՝ Պարանա, որ սկսում է Բրազիլիայի լեռների հարաւարենելեան ստորոտներից. Նրա գետաբերանը կոչւում է Լա-Պյատա, որ ներկայացնում է ծովածոց: Նրա նշանաւոր վտակներն են՝ Պարագվայ և Ուրուգվայ:

Հարաւային Ամերիկայի երրորդ մեծ գետն է՝ Օրինոկօ (Հիւսիսում), որ ծովը թափւելիս դելտա է կազմում: Այս բոլոր գետերը նաւագնաց են իրենց հոսանքի մեծ մասում, որովհետեւ հարթութիւնների վրայով են հոսում:

## 6. ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բուսական աշխարհը Ամերիկայում աւելի փարթածէ, քան որևէ ուրիշ աշխարհամասում: Անապատներ այնտեղ համարեա թէ չկան, առավաստաններն էլ այնչափ ընդարձակ և չոր չեն, ինչպէս Ասիայում: Ամերիկայի կեսից աւելին ծածկւած է խիտ անտառներով. կան նաև տունդրաներ:



Նկ. 66. Բուսականութեան տարածումը

### Հիւս. Ամերիկայում:

Նուկ մայրի ծառի 40 զանազան տեսակներ, կազմու 80 տեսակ, և այլն: Շատ ծառեր անագին բարձրութիւն ունեն. Մեծ ովկիանոսի ափերին աճում են բուսական թագաւորութեան այնպիսի հսկայ ծառեր, ինչպէս են օրինակ մամոնտի ծառը, որ 60 սաժէն բարձրութեան է հասնում: Մերսիկայի ծոցի ափերին աճում են մշտադաշտ ծառեր և արմաւենիներ:

Հիւս. Ամերիկայի չոր մասերում գտնւում են բաւական ընդարձակ տափաստաններ, որոնք այստեղ կոչւում են պրերներ: Գարնանը և ամառը պրերները ծածկւած են լինում հիւթառատ կանաչ խոտով. չորանում են նրանք միայն ամառայ վերջը և աշնանը, և այն ժամանակ պրերները անապատի կերպարանք են ստանում:

Տունդրաները տարածւում են բենեռային կղզիների վրայ և Սառուցեալ ովկիանոսի ափերում. տունդրաների բուսականութիւնն էլ բաղկացած է մամուներից, հատապտուղ բոյսերից, և այն: Տունդրաներից հարու (տես նկարը) Հիւս. Ամերիկայում՝ տարածւում են խիտ և ընդարձակ անտառներ, նման Սիբիրի տարգային, միայն թէ աւելի բազմազան:

Այստեղ աճում են բազմաթիւ ծառեր, որ չկան չին-Աշխարհում (այստեղ հաշւում են օրինակ մայրի ծառը, անագին բարձրութիւն ունեն. Մեծ ովկիանոսի ափերին աճում են բուսական թագաւորութեան այնպիսի հսկայ ծառեր, ինչպէս են օրինակ մամոնտի ծառը, որ 60 սաժէն բարձրութեան է հասնում: Մերսիկայի ծոցի ափերին աճում են մշտադաշտ ծառեր և արմաւենիներ:

Հիւս. Ամերիկայի չոր մասերում գտնւում են բաւական ընդարձակ տափաստաններ, որոնք այստեղ կոչւում են պրերներ: Գարնանը և ամառը պրերները ծածկւած են լինում հիւթառատ կանաչ խոտով. չորանում են նրանք միայն ամառայ վերջը և աշնանը, և այն ժամանակ պրերները անապատի կերպարանք են ստանում:

Ամբողջ Կենարոնական Ամերիկան և Հար. Ամերիկայի կեսը ծածկւած են արևադարձային խիտ անտառներով: Ամազոնի ամբողջ դաշտավայրի վրայ աճում են արևադարձային անտառներ, որոնք սելվասներ են կոչւում. նրանք բոլորը միասին կազմում են մի հսկայական (Երոպական Ռուսաստանի մեծութեամբ), շատ խիտ անտառ, որ ամենափարթամն է ամբողջ երկրագնդի վրայ:



Նկ. 67. Մամոնտի ծառ:

Ամերիկայում պամապատճեն կոչւում:

Այդտեղի ծառերը շատ բարձր են, աճում են այնչափ խիտ և այնպէս խճճած են լիանուներով, որ ճանապարհորդել այդ անտառներում հընարաւոր է միայն գետափերով: Սելվասներում ծառերի բազմազանութիւնը շատ մեծ է, այնտեղ աճում են այնպիսի արժեքաւոր ծառեր, ինչպէս են՝ կակա, քինա, կարմիր ծառ և այլն:

Հարաւային Ամերիկայի աւելի չոր տեղերում, օրինակ՝ Օրինոկո, Պարանա և Պարագվայ գետերի մօտ գտնվում են արևադարձային տափաստաններ, որոնք տարւայ խոնաւ (ամառը) կիսում ծածկում են խոստով, իսկ ձմեռւայ երաշտների ժամանակ՝ չորանում, այրուում են:

Այծեղեր արևադարձից հարաւ սաւանները աստիճանաբար բարեխառն գոտու տափաստանների են փոխաւում, որոնք Հար. Ամերիկայում պամապատճեն կոչւում:

Ամերիկայից են ծագում մարդու համար մի քանի օդականար բոյսեր: Անդերի լանջերում է գտնվում կարտօֆիլի հայրենիքը, որ Ամերիկայի գիւտից յետոյ փոխազրւեց նաև միւս աշխարհամասերը. այժմ կարտօֆիլ մշակւում է երկրագնդի համարեա բոլոր կողմերում. համարեա նոյնչափ տարածւել է նաև եղիպտացցորենի զործածութիւնը, որ ծագել է կենարոնական Ամերիկայից: Ամերիկայից են նաև քինայի ծառը, կակաոն, ծխախոտը և ուրիշ բոյսեր:

Եւրոպացիներն էլ Ամերիկա են փոխազրել Հին-Աշխարհի բոլոր նըշանաւոր մշակովի բոյսերը—ցորեն, բրինձ, շաքարեղէզն, սուրճի ծառ և այլն, որոնք բոլորն էլ Ամերիկայում աւելի լաւ են աճում, քան Հին-Աշխարհում:

Նկ. 68. Բուսականութեան տարածումը Հար. Ամերիկայում:

## 7. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ամերիկայի կենդանական աշխարհը այնչափ հարուստ չէ, ինչպէս բուսականը: Ամերիկայի հիւսիսային մասում ապրում են նոյն կենդանիները, ինչ որ Ասիայի և Եւրոպայի հիւսիսում, բայց քանի ուշի հարաւ ենք գնում, այնչափ էլ Ամերիկայի կենդանիները տարբերում են Հին աշխարհի կենդանիներից: Ամերիկայի տունդրաներում ապրում են—հիւսիսային եղջերու, բեւեռային աղւէս, սպիտակ կաքաւ: Անտառներում ապրում են—սկիւռ, աղւէս, գայլ, արջ և ուրիշ աղւամաղ գազաններ:

Մեծ լճերից հարաւ, որտեղ ազգաբնակութիւնը բաւական խիտ է և անտառները աւելի սակաւ, այնտեղ վայրենի գազանները համարեա բնաջինջ են արւած:

Պը երն երում մինչեւ վերջերը թափառում էին վայրի



եղների՝ բիսոնների՝ ահազին հօտեր. 50 տարի սրանից առաջ հաշում էին այստեղ մի քանի միլիոն բիսոն, իսկ այժմ համարեա չկան. մնում են դեռ միայն մի քանի տեղերում, որտեղ արգելւած է նըանց որսալը:

Հարաւային Ամերիկայում բազմաթիւ են այնպիսի կենդանիներ, որոնք տեսքով շատ են ջոկւմ մնացած աշխարհամասերի կենդանիներից. այդպէս են օրինակ՝ յամբուկները, մը ջնակերները և զըահակիրները: Ամերիկայի գիշատիչ կենդանիները (օրեագուար) շատ աւելի քիչ են և թոյլ, քան Հին Աշխարհի գիշատիչները — առիւծը և վագը:



Նկ. 69. Հիւս. Ամեր. երջանի կենդան.

Ամբողջ Ամերիկայում ամենից հարուստ է սելվասների կենդանական աշխարհը: Այստեղ կան այնչափ շատ կապիկներ, որչափ և ոչ մի տեղ: Աշխարհիս վրայ ոչ մի տեղ այնչափ թռչուններ (թռչակ, կռնդոր, կոլիբրի) չկան, որչափ սելվասներում: Ամեն քայլափոխում հանդիպում են թռնաւոր և ոչ-թռնաւոր օձեր — թէ ջրբում, թէ ցամաքում և թէ ծառերի ճիւղերի վրայ:

Բարձրաւանդակներում և Կորդիլլերների լանջերում արածում են լամաներ: Պամպասներում պատահում են ջայլամներ:

Ընտանի կենդանիներ Ամերիկայում, մինչև եւրոպացիների այստեղ հաստատւելը, համար եաւ ամեն և ին-

չկային. առևնդրաներում միայն մարդուն ծառայում էր շունը, իսկ Հար. Ամերիկայի բարձրաւանդակներում՝ լաման.



Նկ. 70. Հարաւային Ամերիկայի օբյանի կենդանիներ:

Եւրոպացիները Ամերիկա փոխադրեցին ձի, խոշոր եղջիւրաւոր անասուններ և ուրիշ նշանաւոր ընտանի կենդանիներ, որոնցից այժմ Ամերիկայում հարիւրաւոր միլիոններ կան:



Գլ. 71. Հար. Ամեր. օքանի կենդ.

## 8. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի բնակիչների  
թիւն է մոտ 150 միլիոն. ա-  
մեն մի քառակուսի վերստի

վրայ այնտեղ գալիս է միջին հաշւով ընդամենը 4 հոգի (քա-  
նի՞ անգամ աւելի պակաս, քան Ասիայում):

Ամենից աւելի պակաս ազգաբնակութիւն ունեն բևեռա-  
յին կղզիները և Սառուցեալ ովկիանոսի ափերը: Այնտեղ ապ-  
րում են սակաւաթիւ էսկիմոսներ—իրենց խղճուկ խրճիթնե-  
րում և պարապում են որսորդութեամբ ու ձկնորսութեամբ:

Սակաւ ազգաբնակութիւն կայ նուև Հուդզոնի ծոցի, Մե-  
կինզի և Խւկոն գետերի ափերում տարածւած խիտ անտառ-  
ներում: Երկրագործութեամբ պարապել այնտեղ, ցրտութեան  
պատճառով, անհնար է. իսկ անտառներում թափառում են  
միայն վայրենի որսորդ-հնդիկների:

Միասիսիպի գետի աւազանը, Մեծ լճերի և Ատլանտեան  
ովկիանոսի ափերը խիտ բնակութիւն ունեն, որովհեաև այն-

առեղ կլիման տաք է և խոնաւ, իսկ հողը՝ արդաւանդ, Այդտեղ է ասլրում Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան համարեա կեսը:

Բաւական խիտ ազգաբնակութիւն ունի նաև Կենտրոնական Ամերիկան, մանաւատնդ Վեստ-Ինդիան: Այդտեղի բնակիչները արդէն շատ են մաքրել արևադարձային անտառները և մշակովի, պտղաբեր դաշտեր դարձել:

Հարաւային Ամերիկայի ընդարձակ տարածութիւնները բռնւած են գարաւոր, հին անտառներով, որոնց մարդու ձեռք համարեա չէ կպած, այդ պատճառով էլ Հար. Ամերիկան բաւականին նօսր բնակութիւն ունի:

Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան  $\frac{2}{3}$  մասը պատկանում է սպիտակ ցեղին, որ եւրոպացի գաղթականների սերունդներից է բաղկացած: Հիւա. Ամերիկա գաղթել են զինաւորապէս անգլիացիներ, իրանդացիներ, գերմանացիներ, իսկ Կենտրոնական և Հար. Ամերիկա՝ իսպանացիներ և պորտուգալացիներ:

Ամերիկայի ազգաբնակութեան մնացած  $\frac{1}{3}$ -ը բաղկացած է նեղրերից (սկ ցեղ), հնդիկներից (դեղին ցեղ) և խառնուրդ ժողովուրդներից—մուլասներ (սպիտակների և նեղրերի սերունդ) և մետիսներ (սպիտակների և հնդիկների սերունդ): Նրանք ապրում են զինաւորապէս այն վայրերում, որոնք անյարմար և վատառողջ են եղել եւրոպացիների բնակութեան համար:

Ամերիկայում տիրապետող տարր են, ի հարկէ, սպիտակ ցեղի ժողովուրդները: Նոր Աշխարհ գաղթելով՝ եւրոպացիները սկզբում հիմնեցին գաղութներ, որոնք կախում ունեին եւրոպական պետութիւններից. Վերջը համարեա բոլոր գաղթականութիւններն էլ ձեռք բերին անկախութիւն և դարձան հասարակապետութիւններ: Ամենամեծ և ամենախիտ բնակութիւն ունեցող հասարակապետութիւնն է՝ Հիախային Ամերիկայի Միացեալ Նահանգները: Իր մեծութեամբ և բնակիչների թւով երկրորդ տեղը բռնում է Բրազիլիան, գաղութներից ամենաշշանաւորն է Կանադան, որ պատկանում է անգլիացիներին:

Ամերիկայի բնիկներն են՝ գեղին ցեղին պատկանող ժողովուրդները՝ էսկիմոսներ և հնդիկները։ Հն դիկն երի մեծագոյն մասը վայրենի որսորդներից էր բազկացած, որոնք թափառաշրջիկ կեանք էին վարում, նրանք ապրում էին մանր ցեղերով և անընդհատ կոխներ էին մղում իրար դէմ։ Միայն մի քանի ցեղեր, օր Մեքսիկա և Պերու բարձրաւանդակներում ապրողները, զրադաւում էին երկրագույն գարում, որ սնկախ եւրոպացիներից՝ նրանք գտել էին նշանագրեր։

Եւրոպացիները Ամերիկա գաղթելով՝ երկար ժամանակ և շարունակ կոխներ մղեցին հնդիկների դէմ, հետզհետէ գրաւեցին ամրող Ամերիկան, շատ հնդիկ ցեղեր բոլորովին ոչնչացրին, իսկ մնացածները թուլացան և նւաճեցին։

Ներկը երը ակամայ են գաղթել Ամերիկա։ Երկար ժամանակ եւրոպացիները Աֆրիկայից Ամերիկա էին բերում ներկը ու կներինց տնկարաններում նրանց բանացնելու նպատակով։ Ընդամենը մի քանի միլիոն նեզը են բերւել Ամերիկա։ Իսկ այժմ նրանք կազմում են ամրող ազգաբնակութեան մէկ ութերորդ մասը։ Սարկութիւնը անցեալ գարում վերացւեց և ներկը ազատ են արժմ։

## ՀԻՒՍԻՍԵՑԻՆ ԸՄԵՐԻԿԱ

### 9. ԳՐԵՆԼԱՆԴԻԱՆ ԵՒ ՀԻՒՍԻՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳ

Գրենլանդիան երկրագնդի ամենամեծ կղզին է. նա համարեա հաւասար է Եւրոպական Ռուսաստանի կէսին։ Սակայն մարդկային բնակութեան համար Գրենլանդիան շատ անյարմար է, որովհետեւ նա յաւիտենական ձիւնով և սառցադաշտերով ծածկւած մի բարձրաւանդակ է։

Գրենլանդիայի ափերը կտրտւած են խոր, պատանման և նեղ ծոցերով, որոնք Փիօրդ են կոչւում. նրանցով է ցամաքից շարժւող սառոյցը թափւում ովկիանոս ահագին սառցարանների ձևով, որոնք մանրւելով կազմում են սառց ասարեր։

Բաֆֆինի երկիրը և հիւսիս-ամերիկեան մնացած կղզիները տարւայ կէսից աւելին ծածկւած են ձիւնով։ Իսկ յաւիտե-

Նական ձիւն և սառցադաշտեր այնտեղ պատահում են միայն մի քանի, համեմատաբար բարձր տեղերում. մնացած մասերում տարածւում են տունդրաներ:

Այս կղզիների վրայ և Գրենլանդիայի ծայրերում ապրում են էսկիմոսները, որոնց միակ ընտանի կենդանին լծկան շռւնն է: Նրանց գլխաւոր զբաղմունքն է որսորդութիւնը և ձկնորսութիւնը: Որսում են՝ հիւսիսային եղջերուներ, սպիտակ արջեր, փոկեր, ծովացուկեր և այլն: Ուրիշ խոշոր ծովային կենդանիներ, ինչպէս օր. կետը, չկան այնտեղ, որովհետեւ արդէն ոչնչացւել են եւրոպացիների ձեռքով:

Էսկիմոսները ապրում են խրճիթներում, որ շինում են քարից և հաղից, իսկ երբեմն նոյն իսկ սառցակոշտերից: Էսկիմոսների թիւը մոտ 10,000 է:

Թէպէտ Գրենլանդիան և հիւսիսամերիկեան կղզիները պատկանում են եւրոպացիներին, բայց շատ քիչ եւրոպացիներ են լինում այնտեղ: Գրենլանդիան պատկանում է գանդիացիներին, որոնց թիւը այնտեղ հազիւ 300 է: Հիւսիսամերիկեան կղզիները պատկանում են անգլիացիներին:

Գրենլանդիայի ափերն են գալիս ամեն ամառ մի քանի շուրջ աւել քառուքայից, բերում են պոստ և բեռնած են լինում ցորենով, շաքարով և ուրիշ առըճանքներով, որ եւրոպացիները ծախում են էսկիմոսներին և առնում նրանցից մորթի, ձուկ և այլն:

Գրենլանդիայի էսկիմոսները եւրոպացիներից ընդունել են քրիստոն էութիւն և նրանցից են սովորել գրագիտութիւն: Նրանց մի դիւդում, որ կոչւում է Ռապերնիվիկ, կայ նոյն իսկ տպարան, որտեղ տպագրուում են էսկիմոսների լրագիրները և հանդէսները:

## 10. ԿԱՆԱԴԱ. ԵՒ ԱԼԵՍ.ՍԿԱ.

Կանադան և Ալեսկան բռնում են Ամերիկայի հիւսիսային ամքող ցուրտ մասը: Սառուցեալ ովկիանոսի և նոյն իսկ Լաբրադորի ափերում գտնուում են տունդրաներ, իսկ Կանադայի մնացած մասը համարեա ամքողջովին ծածկւած է փշատերեւ և տերեւաւոր ծառերի անտառներով, որոնք հարուստ

են աղւամազ գաղաններով։ Այդ անտառները անյարմար են մարդկային բնակութեան համար։ Կլիման այնտեղ շատ խիստ է (նման Սիրիրի կլիմային), այնպէս որ երկրագործութեամբ զբաղւել հարաւոր է կանագայի միայն հարաւային մասում—սկսած Ս. Լարենտիոսի ծոցից՝ արևելքում, մինչև Վանկովսկի կղզին՝ արևմուտքում։ Բայց նոյն իսկ այս շերտում հողը մեծ մասով քարքարոս է և մշակութեան համար անյարմար։ Այսակայում՝ երկրագործութեամբ զբաղւելը միանգամայն անհնար է։ Կանագայի և Արեակայի սարերը հարուստ են արծաթով և ոսկով, որոնց ձեռք բերելը դժւար է—գարձեալ կլիմայի խառութեան պատճառով։

Կանագայի բնակիչների թիւն է ընդամենը 7 միլիոն։

Տուն գրաներում տաղրում են որսորդութեամբ և ձրկնորսութեամբ պարապող և կիմոսները (ինչպէս քենուային կղզիների վրայ)։ Մեկենզի և ներսն գետերի աւազանում տարածւած խիստ անտառներում թափառում են վայրենի հնդիկները, որոնք աղւամազ գաղաններ որսալով են պարապում։

Հնդիկների վիճակը կանագայում այնչափ վատ չէ, ինչպէս Ամերիկայի ուրիշ շատ վայրերում, որտեղ նրանց մեծ մասը բնաջնջ է արւած։ Կանագայում գանդաղօրէն բնակութիւն են հաստատել եւրոպացիները, իսկ հնդիկներն էլ հետզհետէ զիմել են դէպի անտառների խորքերը, աւելի լաւ տարածութիւնները սպիտակիներին թողնելով։ շատ հնդիկներ նոյնիսկ մեացել են իրենց տեղերում և այժմ վարում են նատակեաց կեանք, զբաղւում են երկրագործութեամբ և նոյն իսկ իրենց երեխաններին ուսումնաբան են ուղարկում։

Կանագայի հարաւային մասում, առանձնապէս Մեծ լճերի և Ս. Լաւրենտիոս գետի ափերում, աղրում են Եւրոպայից գաղթածները, որոնք և կազմում են կանագայի աղդաբնակութեան զլամաւոր տարրը։

Ամենից շատ կանագա են գաղթել անգլիացիները. այդ պատճառով էլ անգլիերէնը կանագայում տիրապետող լեզու է դարձել։ Սակայն ամենից վաղ այնտեղ գաղթել սկսեցին ֆրանուացիները, որոնք կաղմում են կանագայի աղդաբնակութեան  $\frac{1}{3}$  մասը և պահպանել են իրենց լեզուն։

Կանագացիների գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և անսամնապահութիւնը: Իրենց դաշտերում նրանք ցանում են գլխաւորապէս ցորեն, գարի և հաճար:

Մեծ լճերի ափերին կանագացիները մշակում են նաև պտղատու ծառերի այգիներ: Հուբոն, էրի և Օնտարիօ լճերի մէջ ընկած թերակզզին ներկայացնում է մի խսկական այգի Կանագայում. այնտեղ համնում է նոյն խոլ խաղող. բայց առանձնապէս լաւ աճում է խնձորենին:

Ան առունն եքից պահուում են գլխաւորապէս կաթնատուները, որոնց կաթից պատրաստում են շատ խղ և պանիր:



Նկ. 72 Կիագարայի ջրվեժը:

Կանագացիների համար մեծ նշանակութիւն ունի նաև անտառաբուծութիւնը: Զմեռը կտրատում են անտառը, խոլ գարնանը փոխադրում գետերով կամ երկաթուղիներով: Կանագացիները որսում են նաև շատ ձուկ, մանաւանդ նիութառունդներում:

Կանագացիները շատ զարգացած և ձեռնարկող ժովողուրդ են: Նրանք հիմնել են բազմաթիւ գլուխներ—սառին, միջնակարգ և բարձրագոյն տիպերի (Կանագան ունի 16 համալսա-

բան). անզրագէտ մարդ նրանց մէջ շատ քիչ կայ: Նրանք շինել են նաև շատ երկաթուղիներ:

Մեծ նշանակութիւն ունեն նաև ջրային ճանապարհները: Կանադայի և Միացեալ Նահանգների սահմանում գտնւում է Նիազարայի հսկայական ջրվէժը, մոտ 25 սաժէն բարձրութեամբ:

Կանադայի ամենամեծ քաղաքն է Մոնրէալ (250 հազ. բն.), Ա. Լաւրենտիոս գետի ափին, նշանաւոր է իր առևտքով եւրոպացի հետ: Կանադայի արտահանութեան գլխաւոր առարկաներն են՝ փայտ, անասուններ, իւղ, պանիր և հաց. քիչ չեն արտահանուում նաև աղւամազ զաղանների մորթիներ:

Կանադան Անգլիայի գաղութներից է. նրա կառավարութեան գլուխ կանգնած է ընդհանուր նահանգապետը, որ նշանակւում է Անգլիայի թագաւորի կողմից: Սակայն օրէնքներ հրատարակւում են երկրի պարլամենտի կողմից, որ քաղկացած է ժողովրդական ընտրեալներից և գտնւում է Օտտավա քաղաքում:

Ալեասկա մեծ թերակղին, նրանից հարաւ ընկած ծովափնեայ նեղ շերտով միասին, պատկանում է Միացեալ Նահանգներին: Առաջ Ալեասկան պատկանում էր ուսւներին, որ յետոյ ծախեցին ամերիկացիներին: Ալեասկան երեք անգամ մեծ է Կովկասից, բայց համարեա անմարդաբնակ է: Վերջին տարիները Ալեասկայում գտնւել են ոսկու հարուստ հանքեր. այդ պատճառով էլ այնտեղ սկսեցին դիմել շատերը, որոնք շուտ հարստանալ էին ցանկանում:

## ▽ 11. ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

«Միացեալ Նահանգները» ամենամեծ պետութիւնն է Ամերիկայում և չորրորդը՝ երկրագնդի վրայ: Իր տարածութեամբ (Ալեասկայի հետ) այդ երկիրը երկու անգամ մեծ է Եւրոպական Ռուսաստանից և համարեա հաւասար է ամբողջ Եւրոպային:

Միացեալ Նահանգներում ապրում են աւելի քան 80 միլիոն բնակիչներ: Միացեալ Նահանգների բնութիւնը շատ հարուստ է, հողը ամեն տեղ արդաւանդ է, յարմար մշակութեան

համար: Արևելքից արևմուտք Մ.-Ն. տարածւում է 4,600 վերստ, իսկ հիւսիսից հարաւ՝ 1,300 վերստ:


Կլիման տաք է, համարեա ամեն տեղ խոնաւ և այսպէս առողջարար, ինչպէս Եւրոպայի կլիման: Միացեալ նահանգների արևելեան կէսում գարնանը և ամառը տեղում են առատ անձրեներ, որոնց շնորհիւ այնտեղ շատ լաւ են աճում գանազան հացահատիկներ, բամբակ և ուրիշ կարեւոր բոյսեր:

Հակայական հարստութիւններ կան թաղւած նաև երկրի ծոցում: Միսսիսիպի գետի և նրա վտակների աւագանում շատ տեղ ընկած են քարածուխի հանքեր: Ալեգաները հարուստ են երկաթով և նաւթով, իսկ Փայոոս լեռները, Սիերա-Նեադան և Կասկադեան լեռները՝ ոսկով, արծաթով, պղնձով և ուրիշ մետաղներով:

Այս բոլոր հարստութիւնները մշակուում են Մ.-Նահանգներում առանց գժւարութեան, շնորհիւ հաղորդակցութեան ընական ընտիր ճանապարհների, մանաւանդ արևելքում: Միսսիսիպի գետը և նրա բազմաթիւ վտակները—Օհայօ, Միսսուրի և ուրիշները—նաւագնաց են համարեա իրենց ամբողջ ընթացքում: Նաւագնաց են նաև Ալտանտեան ովկիանոս հոսող գետերը, որոնք թէպէտ երկայն չեն, օր. Հուլզոն գետը: Հաղորդակցութեան առաջնակարգ ճանապարհներ են նաև Մեծ լծերը, որոնք այժմ ջրանցքներով միացած են Հուլզոն գետի և Միսսիսիպի վտակների հետ: Վերջապէս՝ Մ.-Ն.-Ները թէ արևելքից ևթէ արևմուտքից ողողւում են ովկիանոսներով, այնտեղ կան բազմաթիւ ընտիր նաւահանգիստներ, որոնք ամբողջ տարին բաց են:

Բնական հարստութիւնները, լաւ կլիման, հաղորդակցութեան ընտիր ճանապարհները,—այս բոլորը վաղուց արդէն գրաւել սկսեցին Եւրոպացի գաղթականներին դէպի Մ.-Նահանգներ: Ամենից շատ գաղթեցին անգլիացիները, ուստի և անգլիական լեզուն այնտեղ տիրապետող գարձաւ: Մնացած բոլոր Եւրոպացիները—իրանգացիները, գերմանացիները, իտալացիները, ֆրանսիացիները և այլն, խառնւեցին անգլիացիների հետ և ընդունեցին ոչ միայն նրանց լեզուն, այլ նաև կեն-

ցաղավարութեան եղանակն ու սովորութիւնները։ Այսպէս ահա Ամերիկայում առաջ եկաւ մի նոր ժողովուրդ, որ իրեն ամերիկացի է կոչում (իսկ Եւրոպայում նրանց երեկոն «եանկի» են կոչում)։ Այս ժողովուրդը աշքի է ընկնում իր ձեռնարկուողով և աշխատասիրութեամբ։ Այս բոլորի շնորհիւ է, որ Մ.-Նահանգները կարծ ժամանակում դօրաւոր պետութիւն դարձաւ. այդ պետութիւնը իր ոյժով և զօրութեամբ յետ չէ մընում երկրագնդի և ոչ մի պետութիւնից։



Նկ. 73. Վասիլի.

Բացի սպիտակ ցեղին պատկանող ներից՝ Մ.-Նահանգներում ապրում են նաև հնդիկներ և նեղըներ։ Ամերիկական հնդիկների թիւը առաջ շատ էր, իսկ ներկայումս մնացել են ընդամենը 200 հազար հնդիկ։ Իսկ նեղըներ Մ.-Նահանգներում բաւական շատ կան, — մոտ 9 միլիոն։ Նրանք ապրում են Մ.-Ն.-ի բոլոր մասերում, իսկ աւելի խիտ միայն հարաւում և հարաւ-արևելքում, որտեղ

կլիման տաք է և խոնաւ։

Թէպէտ նեղըները ազատւած են ստրկութիւնից և ունեն քաղաքացիական ամեն տեսակ իրաւունքներ, բայց և այնպէս սպիտակ ցեղին պատկանողները արհամարհանքով են վերաբերում նրանց։ Տնտեսական կեանքում նեղըները բոլորովին ենթարկւած, են սպիտակներին—համարեա բոլոր նեղըներն էլ աշխատում են սպիտակներին պատկանող արտերում, գործարաններում, հանքերում և այլն և կամ երկաթուղիներում ստորին ծառայութիւններ ունեն։ Քիչ կպատահի, որ մի նեղըներ սեփական անտեսութիւնը ունենայ։

Միացեալ-Նահանգների ամրող արդիւնաբերութիւնը գըտընում է ամերիկացիների ձեռքում և նրանց շնորհիւ միայն հասել է բարձրագոյն զարգացման։ Առաջին տեղը բռնում են երկրագործութիւնը և անասնագանութիւնը։ Այստեղ, ուր գեռ ոչ շատ առաջ տարածւում էին խիտ անտառներ և վայրի պրերներ, ուր արածում էին միայն բիսոնների հօտեր, թափառում էին վայրենի հնդիկներ, — այստեղ այժմ ամենուրեք տարածւում են ընդարձակ դաշտեր, կամ արածում են ըն-

տանի կենդանիների ահապին հօտեր: Դաշտային աշխատանքները ամերիկացիները կատարում են երկրագործական մեքենաների օգնութեամբ. այդ պատճառով էլ նրանք կարճ միջոցում կարողանում են մշակել ընդարձակ տարածութիւններ և հաւաքել առաստ հունձ: Միայն եգիպտացորեն ստացւում է Մ.—Նահանգներում այնչափ, որչափ Ռուսաստանում՝ բոլոր հացահատիկները միասին առած: Մշակւում է նաև մեծ քանակութեամբ ցորեն, որ ոչ միայն բաւականացնում է Մ.—Նահանգների բոլոր բնակիչներին, այլև ամեն տարի մի քանի հարիւր միլիոն փուլթ ուղարկւում է Արևմտեան Եւրոպա:

Մ.—Նահանգներում ստացւում է աւելի մեծ քանակութեամբ բամբակամբակ, քան աշխարհի մնացած բոլոր երկիրներում և մեծ քանակութեամբ էլ ուղարկւում է արևմտեան Եւրոպա ու մասամբ Ռուսաստան:

Շատ է զարգացել Մ.—Նահանգներում նաև անառնապահութիւնը, մանաւանդ պլերներում, որոնք ամբողջապէս դեռ չեն մշակւած: Ամենից շատ պահում են խոշոր եղջիւրաւոր կենդանիներ, նաև ոչ խար և խոզ: Այնչափ շատ միս է ստացւում Մ.—Նահանգներում, որ սառցրած ձևով միլիոնաւոր փթեր Արևմ. Եւրոպա է ուղարկւում:

Կորդիլլերներում ամերիկացիները զբաղւում են ոսկւ և արծաթի հանքերի մշակութեամբ: Ոսկու առատութեամբ Մ.—Նահանգների հետ մրցում են Աւստրալիան և Հարաւային Աֆրիկան, իսկ արծաթով՝ միայն Մեքսիկան: Բայց թանգագին մետաղներից աւելի արժէքաւոր են Մ.—Նահանգների համար—երկաթը և քարածուխը. երկաթը նրա համար, որ գործադրուում է ամեն տեսակ մեքենաներ, երկաթուղիներ և շողեմեքենաներ շինելու. իսկ քարածուխը նրա համար, որ գործադրուում է իրեւ վառելանիւթ գործարանների, շողեկառքերի համար և այլն: Քարածուխի և երկաթի քանակով Մ.—Նահանգները ներկայումս գերազանցում են բոլոր պետութիւններին, մինչև անգամ Անգլիային: Վերջապէս՝ ստացւող նաւթի (Ալլեգաններում) քանակով Մ.—Նահանգները յետ են մնում միայն Ռուսաստանից (Բագւի նաւթահանքները):

Մ.-Նահանգներում շատ կան ամեն տեսակ գործառնություն:

Եթե կաթուղիներ այնտեղ աւելի կան, քան ամբողջ Եւրոպայում և Ասիայում՝ միասին վերցրած։ Մի քանի երկաթուղային գծեր կարում անցնում են Կորդիլլըրներով ու միացնում Ասլանտեան ովկիանոսի նաւահանգիստները Խաղաղ ովկիանոսի նաւահանգիստների հետ (այդ գծերը կոչւում են «խաղաղովկիանոսեան» երկաթուղիներ)։ Մ.-Նահանգների գետերի, լճերի և ծովերի վրայ ամեն տեղ լողում են շոգենաւերը նորհիւ արւեստական ջրանցքների՝ ծովային շոգենաւերը կարողանում են անցնել Ասլանտեան ովկիանոսից մինչև Մեծ լճերը և ապա վերադառնալ այնտեղից։ Ընդհանրապէս՝ ճանապարհների հազորդակցութիւնը Մ.-Նահանգներում շատ զարգացած է։


Թէպէտ Մ.-Նահանգները բաղկացած են 45 հասարակապետութիւններից (շտատներից կամ նահանգներից) և 5 տերրիտորիաներից (երկրամասերից\*), բայց նրանք բոլորն էլ կապւած են իրար հետ իրը մի ամբողջութիւն—շնորհիւ ճանապարհների հողորդակցութեան, ընդհանուր լեզվի և ընդհանուր կառավարութեան։ Մ.-Ն.-ի շտատները մեծութեամբ հաւասար չեն իրար։ Հիւս.-արևելեան՝ հին շտատները շատ աւելի փոքր են, քան հիւս.-արևմտեան և հար.-արևմ. շտատները։ Բոլոր շտատները բաժանւում են 4 խմբերի.—արևելեան, հարաւային, կենտրոնական և արևմըստեան։

Միացեալ նահանգների կամ շտատների զլուխ կանգնած է հասարակապետութեան նախագահը (որ ընտրուում է 4 տարով) և կոնգրեսը (որ բաղկացած է ժողովրդական ընտրեալներից)։ Կոնգրեսը հաստարակում է օրէնքներ, իսկ նախագահը հոգում է նրանց գործադրութեան վրայ։

\*.) «Տերրիտորիա» կոչւում են այն շրջանները, որոնք շատ սակաւագարնակութիւն (100 հազ. պակաս) ունեն, և սեփական կառավարութիւնից գուրեկ են. նրանց գործերը վարում են նախագահի կողմից նըշանակւած պաշտօնեաները։

Ամեն մի նահանգու կամ պետութիւն (շտատ) ունի իր յառաւել կառավարութիւնը։ Ամեն մի նահանգի գլխաւորն էլ ընտրովի նահանգապետ է, որ կառավարում է իր նահանգը՝ ժողովրդական ներկայացուցիչների ձեռքով հրատարակւող օրէնքներով։ Այդ բոլոր շտատներն էլ դաշնակցելով միացել և կազմել են Մ.-Նահանգների դաշնակցական (ֆեդերալարի) հոսարակատութիւնը։

Միացեալ Նահանգների բոլոր քաղաքացիները ունեն մի ևնոյն իր տւունքները, և օրէնքի առաջ բոլորն էլ հաւասար են։ Նոյն իսկ հասարակապետութեան նախագահը ծառայութիւնը վերջացնելուց յետոյ ոչնչով չէ զանազանութեամբ մնացած քաղաքացիներից։



Կա. 74. Խոնգրէսի օկներ Վասինգտոնում։

Ժողովրդական կրթութեան համար Մ.-Նահանգներում հոգում են ամենքը—կոնգրէսը, նախագահը, նահանգապետները, զանազան ընկերութիւններ, մասնաւոր անձեր—որոնք ահագին գումարներ են նւիրում այդ նպատակով։ Համալսարանների մեծ մասը (որոնց թիւը Մ.-Նահանգներում մոտ 500 է) պահուում է ամերիկացի միլիոնատէրերի նւիրաբերութիւններով։ Գրքեր, լրագիրներ, ամսագիրներ Մ.-Նահանգներում հրատարակւում են անսահման քանակութեամբ։

Մ.-Նահանգների մայրաքաղաքն է Վաշինգտոն, որ

գտնուում է Կոլումբիա շրջանում\*) և միջին մեծութիւն ունեցող մի քաղաք է: Այստեղ է գտնուում ժողովրդական ներկայացուցչութիւնը (կոնգրեսը) և ապրում նախագահը:

Մ.-Նահանգների ամենամեծ քաղաքն է՝ Նիու-Եռկլ (արևելքում), որ մօտ 4 միլիոն բնակիչ ունի: Իր բնակիչների թւով նա յետ է մնում երկրագնդի միայն մէկ քաղաքից—Լոնդոնից (Անգլիայի մայրաքաղաքից): Նիու-Եռկլը գտնուում է Հուդզոնի գետաբերանում և շատ յարմար նաւահանգիստ է: Նիու-Եռկլի վրայով է կատարելում Մ.-Նահանգների ամբողջ արտաքին առևտորի կէսը: Այստեղ են ցամաք իջնում ամեն տարի Եւրոպայից եկող մի քանի հարիւր հազար գաղթական-ներ\*\*):

Նիու-Եռկլի շէնքերը աչքի են ընկնում իրենց հսկայական մեծութեամբ. այստեղ շատ կան 20 և 30 յարկանի տներ: Փողոցներում նըկատելի է ահազին հաղորդակցութիւն՝ էլեկտրաքարշերով, կառքերով և ոտքով: Փողոցների վերել սիւների վրայ շինած է երկաթուղի, որ օրական մօտ 1 միլիոն մարդ է փոխադրում: Հուդզոն գետի և նեղուցների վրայ գցած են հսկայական կամուրջներ և անց են կացրած ստորգրեայ տունելներ (ուղիներ):

Մ.-Նահանգների միւս նշանաւոր նաւահանգիստներն են. Ատլանտեան ովկիանոսի ափին (արևելքում)—Փիլադելֆիա, Բայտիմինը եւ Բուստոն: Մեքսիկայի ծոցի վրայ, Միսսիսիպիի գետաբերանում (հարաւ)՝ Նոր-Օրլէան, որ երկրագնդի ամենանշանաւոր նաւահանգիստն է՝ բամբակի արտահանութեամբ: Մեծ ովկիանոսի վրայ, արևմուտքում, նշանաւոր է Սան-Փրանցիսկօ նաւահանգիստը:

Երկրի ներսում եղած քաղաքներից ամենանշանաւորներն են.—Զիկազօ (Միչիգան լճի ափին), Մէն-Լուի (Միսիսիպիի և Միսսուրիի խառնարանից ոչ հեռու) և Պիտսբուրգ

\*) Այս շրջանը առանձնացրած է միւս շտատներից նրա համար, որպէս զի ոչ մի շտատ առիթ չունենայ գերազած համարելու իրեն, թէ իր սահմաններում է գտնուում պետութեան մայրաքաղաքը:

\*\*) 1903 թւականին Եւրոպայից Մ.-Ն. գաղթեցին 857,000 հոգի, որոնք համարեա բոլորը Նիու-Եռկլում ցամաք իջան: Գաղթականներին զէտի այդ երկիրը գրաւողը բարձր աշխատավարձն է ու ազատ կառավարութիւնը:

(արևելքում, Օհայօ գետի ափին, ամենահարուստ նաւթահանքերի մօտ): Զիկագօն գտնվում է 35 երկաթուղային դերի հանգոյցում: Նա երկրագնդի առաջին քաղաքն է՝ հացահատիկների և մսի առևտրով:



Նկ. 75. Բազմայակ առև Նիու-Յորկում:

100 տարի սրանից առաջ Զիկագօի տեղում գտնվում էր հսդիկների մի փոքրիկ գիւղ, իսկ այժմ՝ Զիկագօն ունի 2 միլիոն բնակիչ:

## ԿԵՆՏՐՈՆԸԿԱՆ ԾՄԵՐԻԿԱ

Ամերիկա մայր ցամաքի այն նեղ մասը, որ տարածւում է Միացյալ Նահանգներից հարաւ, և նրա արևելիան կողմը ընկած կղզիները միասին կոչւում են Կենտրոնական կամ Միջին Ամերիկա։ Սրա մեծ մասը գտնվում է արևադարձային գոտում։

Կենտրոնական Ամերիկան աւելի շուտ գտնվեց, քան Ամերիկայի միւս մասերը. գտնողներն էին իսպանացիները. սրանք չկարողացան ընթափներին՝ ամերիկական հնդիկներին բնաջինջ անել կամ երկրի խորքերը քշել Հնդիկների մեծ մասը այժմ նստակեաց է. նրանք կազմում են տեղական ազգաբնակութեան զլիաւոր տարրը, բայց նրանցից շատերը խառնել են սպիտակների հետ։ 19-րդ դարի սկզբում իսպանական գաղութների մեծ մասը բաժանեց մայր երկրից—Խոպանիայից և կազմեց անկախ հաստարակապետութիւններ։

### 12. ՄԵՔՍԻԿԱ. ԵՒ ՎԵՍՏ-ԻՆԴԻԱ.

Կենտրոնական Ամերիկայի մեծ մասը բռնում է Մեքսիկան։ Մեքսիկան հինգ անգամ փոքր է Միացյալ-Նահանգներից, բայց իր մեծութեամբ գերազանցում է բոլոր եւրոպական պետութիւններին, բայց Ռուսաստանից։

Մեքսիկայի բնութիւնը այնպէս յարմար չէ մարդկային ընակութեան համար, ինչպէս Միացյալ-Նահանգների բնութիւնը։ Մեքսիկայի մեծ մասը բարձրաւանդակ է. թէ արեելքից և թէ արևմուտքից նա շրջապատած է Կորդիլլրերների շենքազմաներով։ Կիման չոր է (ինչու), բուսականութիւնն էլ բաւական աղքատ։ Այդ բարձրաւանդակը ներկայացնում է անապատ հարթութիւններ—քարքարոտ կամ աւազոտ։ Կալիֆորնիա թերակղզին ևս բաւական չոր և անապատային է, որովհետեւ նրա մօտով ցուրտ հոսանք է անցնում։ Միայն Մեքսիկայի ծոցի ափերին և Խեկատան թերակղզու վրայ շատ անձրև է գալիս. այնտեղ աճում են արևադարձային անտառներ, որոնք սակայն առողջարար չեն և անյարմար են մարդկային կեանքի համար։

Կորդիլլրերները Մեքսիկայում հարուստ են ոսկով և մանաւանդ արծաթով։ Այս թանգարքին մետաղներն էին զլիաւորապէս եւրոպացիներին դէպի Մեքսիկա զրաւողները։ Ամենից

շատ Մեքսիկա գաղթեցին իսպանացիներ: Արանց յետնորդները, որ Ամերիկայում կը է օլ են կոչւում, կազմում են ներկայումը Մեքսիկայի ազգաբնակութեան  $\frac{1}{5}$  մասը: Նրանց է պատկանում հանքերի մեծ մասը և հողի ամենալաւ բաժինները: Սակայն Մեքսիկայի բնակիչները գլխաւորապէս հսկիկները և մետիաններն ենչ Նրանք զբաղւում են երկրագործութեամբ: Մեքսիկայի ծոցի ափերին մշակում են սուրճի և կակաօի ծառեր:

Մեքսիկայի մետիանները և հսկիկները իրենց կեցաղավարութեամբ քիչ են տարբերում կրէօններից: Նրանք համարեա բոլորն էլ քրիսնեայ են և խօսում են իսպաններէն: Բնակիչների ընդհանուր թիւն է  $13\frac{1}{2}$  միլիոն:

Կառավարութեան տեսակին նայելով՝ Մեքսիկան Միացեալ Նահանգների նման հասարակապետութիւն է: Մայրաքաղաքն է Մեքսիկո,

կենարոնական Ամերիկայի հարաւային մասում, մայր ցամաքի վրայ, գտնւում են ինքնուրոյն վեց հասարակապէտութիւններ. Նրանց մէջ ամենաշանաւորն է ՊՈ.Ն.Ա.Մ.Ա.Ն. համանուն պարանոցի վրայ: Այդ պարանոցի վրայ այժմ փորում են մի ջրանցք, որ պիտի միացնէ իրար հետ Առանտեան և Խաղաղ ովկիանոսները:

ՎԵՍՏ-ԽՆԴԻԱՆ (Արևմտեան Հնդկաստանը) բաղկացած է՝ Մեծ Անտիկան (Կուրա, Եամյակա, Հայիթի եւ Պորանորիկօ), Փոքր Անտիկան եւ Բահամեան կղզիներից:




Կոկ. 76. Արցախակ. արմառենիներ

Խաղաղ ովկիանոսներից այս ուղարկութեան մեջով հասարա

Մեծ-Անտիլեան կղզիները ցամաքային ծագում ունեն. Փոքր Անտիլեան կղզիները մեծ մասով հրաբխային են, Բահամեան կղզիները՝ կորալլական:

Վեստ-Ինդիայի բնութիւնը փարթամ է: Շնորհիւ մըշտական տաքութեան և խոնաւութեան՝ այստեղ աճում են արեաղարձային անտառներ: Բայց կլիման առողջարար չէ, ամեն տեղ տարածւած են մակարիա և գեղին տենդ հիւանդունները: Վեստ-Ինդիայի բնակիչներն են (մօտ 5 միլ.) ներքեր և մուլատներ, որոնք բոլորն ել կաթոլիկ քըրիստոնեաներ են. բնակիչների զիսաւոր զբաղմունքն է երկրագործութիւնը: Ցածր տեղերում մշակում են շաքարեղեգ, բանան, ծխախոտ, իսկ սարերի և բըլուրների լամնջերին՝ սուրճի և կակաօի ծառեր: Այս բոլորից ևս մեծ քանակութեամբ արտահանում է դեպի Միացեալ-Նահանգներ և Եւրոպա:



Նկ. 77. Հեղիկ կուլիները օաբարեղեզ և բաղում նամայկա կղզու վրա:

Առում է դեպի Միացեալ-Նահանգներ և Եւրոպա:

Ցիշած կղզիներից Կուրան և Պորտորիկօն պատկանում են Միացեալ-Նահանգներին, Եամայկան՝ Անդիլիային, իսկ Հայիթիի վրայ գտնուում են նեղրերի երկու անկախ հասարակապետութիւններ: Ամենաշատ բնակիչները ունի Կուրան (մօտ 2 միլ.): Նրա զիսաւոր քաղաքն է Հասաննա, մօտ 250 հազար բնակչով: Փոքր Անտիլեան կղզիները պատկանում են Եւրոպական զանազան պետութիւնների:

## ՀԵՐԱԿՈՅԻՆ ԸՄԵՐԻԿԱ

### 13. ՎԵՆԵՑՈՒԵԼԱ ԵՒ ԳՎԻԱՆԱ

ՎԵՆԵՑՈՒԵԼԱՆ և Գվիանան քնութեամբ հարուստ, բայց սակաւ բնակութիւն ունեցող երկիրներ են: Ծովափերը ծածկւած են արևագարձային խիտ անտառներով, իսկ հարթ վայրերը՝ սաւաններով, որոնք այստեղ լիանոս են կոչւում: Լիա-



Նկ. 78. Նիսախոտի անկարան Կուբայում:

նոսները շատ յարմար են անասնապահութեան համար:

Երողացիներ Վենեցուելայում և Գվիանայում աւելի քիչ կան, քան Վեստ-Ինդիայում: Բնակիչներն են զլիսաւորապէս՝ մուշատներ և մետիսներ: Լիանոսներում նրանք պահում են եղջիւրաւոր խոշոր կենդանիների մեծ հօտեր, ձի, խող և ուրիշ ընտանի կենդանիներ: Պարապում են նաև երկրագործութեամբ: Նրանց գիւղերը շրջապատւած են

լինում բանանի և եղիպտացորենի տնկարաններով։ Ծովափերում մուլատները և մետիսները մշակում են սուրճ, կակաօ և շաքարեղէգ։ Իսկ ծովից աւելի հեռու ընկնող տեղերը համարեա բոլորովին անբնակ են։ Գիշանայի սարերը հարուստ են ոսկով։ Պետական կազմին նայելով՝ Վենեչիան հասարակապետութիւն է և արագ ապետութիւն է. նրա մայրաքաղաքն է՝ Վարակաս։ ԳվիԱննեն բաժանուում է երեք գաղութների, որոնք պատկանում են եւրոպացիներին (անգլիացիներին, ֆրանսիացիներին և հոլանդացիներին):

#### 14. Բ Ռ Ա Զ Ի Լ Ի Ա.

Բրագիիան բնում է Հար. Ամերիկայի համարեա կեսը. իր մեծութեամբ նա մի քիչ փոքր է Միացեալ Նահանգներից, բայց ունի 20 միլիանից պակաս ազգաբնակութիւն։ Բրագիիայի մեծ մասը, Ամազոն գետի ամբողջ աւազանը, ծածկւած է արևադարձային վատառողջ անտառներով—ո ել վասն երավ։ Սելվաների մէջ ասլրում են ընդամենը հազիւ 600 հազար հոգի. նրանք բոլորն էլ վայրենի հնդիկներ են, որոնք զբաղւում են որսորդութեամբ և ձկնորսութեամբ։

Երկրագնդի վրայ ձեռք բերւող ոեզինի մեծ մասը ստացւում է Ամազոնի սելվաներից։

Մարդկային բնակութեան համար աւելի յարմար է Բրագիիայի հարաւարեելեան, լեռնոտ մասը։ Այստեղ այնչափ խոսնաւ և այնչափ շոգ չէ, որչոփ սելվաներում։ Այստեղ է կենտրոնացած Բրագիիայի ազգաբնակութեան մեծ մասը, ոչ միայն հնդիկները և մետիսները, այլ նաև եւրոպացի գաղութ ական երը, — զլիսաւորապէս պորտուգալացիներ և իտալացիներ։

Սկզբում սպիտակներին այդտեղ գրաւողը այն գոյնզգոյն ալմաստներն էին, որոնցով հարուստ են Բրագիիայի սարերը, ուր կայ նաև ոսկի։ Ներկայումս հարաւարեելեան Բրագիիայի թէ սպիտակ և թէ գունամորթ բնակիչների զլիսաւոր զբաղմունքն է՝ սուրճի, մասամբ նաև շաքարեղէգի, բրնձի, կարտոֆիլի արդիւնաբերութիւնը։

Երկրագնդի վրայ արդիւնաբերող սուրճի կէսից աւելին ստացւում է Բրազիլիայից:

Պետական կազմին նայելով՝ Բրազիլիան, ինչողէս նաև Ամերիկայի մեացած բոլոր երկիրները, հասարակապետութիւնն էւ



Նկ. 79. Սուրճ հաւաքելք:—Սուրճի ծառերը աճում են ուրիշ, աւելի բարձր, ծառերի հազարու տակ; Նկարի ձախ կողմում, վերև, սուրճի ծառի ճիւղ է՝ ծաղիններով և պտուղներով:

Նրա մայրաքաղաքն է Ռիօ-դե-Ժանայրօ, որ միննոյն ժամանակ նշանաւոր նաւահանգիստ է: Բրազիլիայի ամենանշանաւոր նաւահանգիստը, որտեղից շատ սուրճ է արտահանւում, կոչւում է Սանտոս:

### 15. Ա.Պ.Ա.Տ.Ա.Ն. ԵՐԿԻՐՆԵՐ / Ա.ՐԳԵՆՏԻՆԱ, ՈՒՐՈՒԳՎԱՅ. ԵՒ ՊԱՐԱԳՎԱՅ.

Լապլատեան երկիրները աւելի չափաւոր կլիմայ ունեն, քան Բրազիլիան: Արևագարձային անտառներին փոխարինում են սկզբում սաւաններ, իսկ հարաւային մասում սաւանները պատիճանաբար փոխում են բարեխառն գօտու տափատանների—պամպանների: Այդ տափատանները ծածկւած են

Հայոց  
Հայոց

ցածր խոտով նրանք շատ արգաւանդ են և յարմար՝ երկրագործութեան ու անասնապահութեան համար:

Աւելի հարաւում պամպասները փոխում են Պատագոնիայի չոր և անպտուղ դաշտերի, որոնք խոտաւէտ չեն, ծածկւած են թփերով: Այդ դաշտերերը յարմար չեն նոյն իսկ անասնապահութեան համար:

Լապլատեան երկիրների, յատկապէս պամպասների առողջարար կլիման և պաղաքեր հողը գրաւել են շատ գաղթա-



Նկ. 80. Պատագոնիայի հնդիկներ՝ որսի գնալիս:

Կանների Նւրոպայից (գլխաւորապէս խսպանացիներ և խտալացիներ): Ներկայումս այդ տեղի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են գաղթականները և մետիսները: Զուտարիւն, կիսավայրենի հնդիկները, որոնք որսորդութեամբ և անասնապահութեամբ են պարապում, ապրում են միայն հիւսիսում ընկնող սաւաններում, իսկ հարաւում՝ Պատագոնիայում:

Գաղթականների և մետիսների գլխաւոր զբաղմունքն է

ան ասն ապահութիւնը և երկրագործութիւնը, որ ամենից լաւ ծաղկած են պամլասներում: Այստեղ, ուր գեռոչ շատ առաջ թափառում էին վայրենի որսորդ-հնդիկներ, այժմ՝ արածացնում են ահապին հօտերով ոչխարներ, եղջնւրաւոր խոշոր կենդանիներ և ձիեր: Այստեղ կան մշակւած ընդարձակ տարածութիւններ, որոնք տալիս են ցորենի ու եգիպտացորենի առատ հունձ:

Ամեն տեղ երկաթուղային գծեր են անցկացրած և գիւղեր գցած, որոնք թաղւած են այգիների կանաչի մէջ:

Կորդիլլերների սարուաներում, սարերից վար հոսող գետերի հովիտներում, մշակում են խաղողի ընդարձակ այգիներ և շաքարեղեգի անկարաններ:

Պետական կազմին նայելով՝ Լապլատեան երկիրները բաժանւում են երեք հասարակապետութիւնների՝ ԱրգենտինԱ, ՈւրուիգՎԱՅ և ՊԱՐԱԳՎԱՅ:

Արգենտինայի մայրաքաղաքն է՝ Բուէնոս-Այրէս (մէկ միլիոնակիչ): Ուրուգվայի մայրաքաղաքն է Մոնտեվիդէ: Այս երկու քաղաքներն էլ գտնւում են Լապլատի գետաբերանում և մեծնաւահանգիստներ են: Այդ քաղաքներից Եւրոպա է արտահանւում շատ մեծ քանակութեամբ ցորեն, բուրդ, միս (սաոցրած և աղած), ճարպ, մորթի և այլն:

## 16. ԿՈՐԴԻԼԼԵՐԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

Կորդիլլերեան երկիրները տարածւում են Պանամայի պարանոցից մինչև Հորն հրւանդանը և բոնում են Հար. Ամերիկայի արևմտեան մասը, համարեա ամբողջ Կորդիլլերները կամ Անդերը: Մարդկային բնակութեան համար ամենայարմաք տեղերն են՝ բարձր հովիտները և բարձրաւանդակները: Այստեղ կիման առողջարար է, հողն էլ յարմար է երկրագործութեան համար. կան նաև բաւական լաւ արօտատեղիներ անտանապարհութեան համար:

Այդ հովիտներից և բարձրաւանդակներից վեր բարձրացող լեռնաշղթաների կատարները ծածկւած են ձիւնով, որոնց մէջ

կան համգած և գործող հրաբուխներ: Այդ լեռնագագաթները ինարկէ անյարմար են մարդկային բնակութեան համար:

Բնակութեան համար անյարմար են նմանապէս ծովափերը: Կորդիլլերները դէպի ովկիանոս են ձգւում այնպէս ուղղաձիգ կերպով, որ ծովափին թողնում են միայն նեղ շերտ, այն ևս ոչ ամեն տեղ: Ովկիանոսի ափում գտնուում է նոյնիսկ մի առաջ չի կարելի տեսնել ոչ խոտ և ոչ էլ թուփ:



Կ. 81. Փօտերեւ ծառերի անտառ Զիլիում:

Այս բոլորի զլսաւոր պատճառը օդի չափազանց չոր լինեն է. այդ էլ առաջ է գալիս նրանից, որ այդ կողմերում ծովափի մօտով անցնում է ցուրտ հոսանք:

Չնայած այս բոլոր անյարմարութիւններին՝ կորդիլլերեան երկիրներն են գաղթել բաւական թւով եւրոպացիներ (զլսաւորապէս իսպանացիներ): Նրանց այնտեղ զրաւողը եղել են թանգագին մետաղները, որոնցով շատ հարուստ են կորդիլլերները: Եւրոպացիները հպատակեցրին այնտեղ ապրող հըն-

գիւկներին, խառնւեցին սրանց հետ, և այժմ ազգաբնակութիւնը քաղկացած է զլխաւորապէս մետիսներից և մասամբ միշտյն սպիտակներից, հնդիկներից (հեռաւոր լեռնուտ մասերում և Հրոյերկրում), նեղրերից և մուլատներից (խոնաւ ծովափերում, հասարակածից հիւսիս):

Կորդիլլերեան երկիրներում ապրող մետիսների և սպիտակների զլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և հանքագործութիւնը: Ամենաբարձր վայրերում նրանք ցանում են գարի, ցածր տեղերում՝ կարտոֆիլ (որի հայրենիքն այնտեղ է) և ցորեն. աւելի ցածրերում՝ եղիպտացորեն: Ամենացածր և տաք տեղերում, լեռնային գետակների ափերում, մըշակում են շաքարեղէգ, բրինձ և բազմազան պտղատու ծառեր: Հասարակածից հիւսիս ընկնող ծովափերում, բացի դրանից, պատահում են յաճախ նաև կակաօի ընդարձակ տնկարաններ:

Կակաօի ծառը այնտեղի անտառներում աճում է նոյնիսկ վայրի դրութեան մէջ, այն էլ այնչափ առատութեամբ, որ եթէ անտառի մընացած բոլոր ծառերը կտրատեն, մի քանի տարւայ ընթացքում այնտեղ կդոյցանայ կակաօի տնկարան:

Առաջները այդ անտառներում պատահում էր մեծ քանակութեամբ նաև քինայի ծառ, բայց այժմ շատ փոքր քանակութեամբ է մշակում<sup>\*)</sup>:

Մեծ նշանակութիւն ունի կորդիլլերեան երկիրներում նաև հանքագործութիւնը—արծաթի, ոսկու և մանաւանդ սելիտրայի<sup>\*\*</sup>) արդիւնագործութիւնը, որի ամենահարուստ հանքերը գտնվում են Կորդիլլերների ամենաչոր տեղերում,—ամենից շատ՝ Ատակամայում: Մելիտրան այդտեղից արտահանուում է դէպի երկրագնդի բոլոր կողմերը:

Կառավարութեան նայելով՝ կորդիլլերեան երկիրները բաժանված են հինգ հասարակապետութիւնների—կոլումբիա, Էկվադոր, Պերու, Բոլիվիա և Չիլի: Կորդիլլերեան երկիրների ամենանշանաւոր կենտրոնն է Չիլիի մայրաքաղաք Սանտ-Եազօն:

<sup>\*)</sup> Երկրագնդի վրայ ստացւող քինան համարեա ամբողջապէս ձեռք է բերւում Եաւա կղզուց:

<sup>\*\*)</sup>  Մելիտրան մի անգոյն աղ է, որ գործ է ածւում դեղեր և պայթուցիկ նիւթեր (օրինակ՝ վառող) պատրաստելու համար:

Նա երկաթուղով միացած է իր նաւահանգիստ Վայառայսօն  
և Արգենտինայի մայրաքաղաք Բուէնոս-Այրեսի հետո

Մնացած քաղաքներից նշանաւոր են. — Բօզօտա՞ Կոլումբիայի մայրաքաղաքը, Կիլիո՞ Էկվատորի մայրաքաղաքը (Դվահակիլ նաւահանգստով), Լիմա՞ Պերուի մայրաքաղաքը (Կալիա նաւահանգստով): Այս բոլոր քաղաքները գտնուում են Կորդիլլերների բարձր տեղերում, որտեղ օդը աւելի առողջարար է, քան ծովափերում:

## ԱՒՍՏՐԱԼԻԱ

### ԱՒՍՏՐԱԼԻԱ ՄԵՅՐ ՑԱՄԱՔԸ

1. ԴԻՐՔԸ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ, ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՀԵՏԱԶՕՏՈՒՄԸ

Աւստրալիան հինգ աշխարհամասերի թւում ամենափոքրն է. նա 6 անգամ փոքր է Ասիայից: Բոլոր աշխարհամասերի մէջ միայն Աւստրալիան է, որ ամբողջապէս հարաւային կիսագընդում է գտնուում: Արևմուտքից արևելք Աւստրիալիան տարածւում է 4,000 վերստ, իսկ հիւսիսից հարաւ, ամենալայն մասում, 3,000 վերստից մի փոքր աւելի:

Աւստրալիան շրջապատւած է ովկիանոսներով. — արևելքից՝ Մեծ Խաղաղ, իսկ հարաւից և արևմուտքից՝ Հնդկական ովկիանոսով: Աւստրալիայի հիւսիս-արևեմտեան կողմում ընկած է Մալայեան արշիպելագը, որ կարծես մի կամուրջ լինի՝ ձգւած Աւստրալիայի և Ասիայի մէջ: Մնացած աշխարհամասերից Աւստրալիան շատ հեռու է գտնուում:

Աւստրալիայի ամենահեռաւոր ծայրերն են. հիւսիսում՝ Եղրկ հրւանդանը, հարաւում՝ Ռիխոն, արևմուտքում՝ Ստիլ, իսկ արևելքում՝ Բայրոն հրւանդանը:

Աւստրալիայի ափերը շատ քիչ են կտրտւած, ուստի և

շատ քիչ ծոցեր ու թերակղիներ կան այնտեղ, միակ նշանաւոր թերակղին է՝ Նորկ, որ գտնւում հիւսիսում: Հիւսիսում է գտնւում նաև Աւստրալիայի նշանաւոր երկու ծոցերից մէկը — Կարպենտարիա, միւս նշանաւոր՝ Աստրալիական կոչւող ծոցը գտնւում է հարաւում:

Աւստրալիայի շուրջը գտնւում են բազմաթիւ կղիներ, որոնք ցրւած են մեծ մասով Մեծ ովկիանոսի մէջ—մայր ցամաքից հեռու: Միայն երկու մեծ կղիներ գտնւում են մայր ցամաքին մօտ. հիւսիսային կողմում՝ Նոր-Գվինէան, որ մայր ցամաքից բաժանւում է Տորենսի նեղուցով, և Տասմանիա կըդղին, որ բաժանւում է մայր ցամաքից Բասսի նեղուցով:

Աւստրալիան գտնւել է հւրովացիների ձեռքով մնացած բոլոր աշխարհամասերից յետոյ: Առաջին անգամ Մազելլանը (1521թ.), աշխարհի շուրջը կատարած ճանապարհորդութեան միջոցին, հանդիպեց Աւստրալիային պատկանող Մարիան և ան կղիներին: Ապա հւրովացի ծովագնացները գտան Նոր-Գվինէան և ան: Բայց երկար ժամանակ նրանք չէին իմանում՝ արդեօք նա մայր ցամաք է թէ կղիի: Այս հարցը լուծեց 17-րդ դարի սկզբում իսպանացի Տորենսը, որ առաջին անգամ անցաւ այժմ իր անունով կոչւող նեղուցը:

Բուն Աւստրալիական մայր ցամաքն էլ գտնւեց 17-րդ դարի սկզբում (Տորենսից 1 տարի առաջ) հոլոնդացիների ձեռքով, որոնք և նոր մայր ցամաքը Շնոր Հոլանդիա» կոչեցին: Հոլանդացի Տասմանը անցաւ Աւստրալիայի շուրջը հարաւից և հանդիպեց ճանապարհին մի կղզու, որ նրա անունով Տասմանիա կոչւեց: Ընդունելով այդ կղին իրեն հարաւային ծայրը մայր ցամաքի, Տասմանը առելի առաջ անցաւ ծովով գէպի արեելը ու գտաւ Նոր-Զելանդիան և ուրիշ շատ կղիներ Մեծ ովկիանոսում:

Տակայն այս բոլոր գիւտերը երկար ժամանակ եւրովայում մըշնում էին անյայտ: 18-րդ դարի վերջում անգլիացի ծովագնաց Կուլը երկրորդ անգամ գտաւ մայր ցամաքի արեելեան ափը: Վերջում նա երկու անգամ ևս ճանապարհորդեց Մեծ ովկիանոսով ու գտաւ Նորկալենիա և ուրիշ շատ կղիներ: Այնուհետեւ անգլիացիները գաղթել սկսեցին դէպի Աւստրալիա և ուսումնասիրեցին բոլոր ափերը: Միայն ներքին, անապատ տեղերը երկար ժամանակ մնում էին անյայտ: Նըրանք ուսումնասիրեցին 19-րդ դարում:

2. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ, ԿԼԻՄԱՆ, ԳԵՏԵՐԸ  
ԵՒ ԼՃԵՐԸ

Մեծ ովկիանոսի ափերի երկայնութեամբ Աւստրալիայում  
ընկած են լեռնաշղթաներ։ Դրանք բարձր չեն, լեռնագազաթ-  
ներից և ոչ մէկը ծածկւած չէ մշտական ձիւնով։ Համեմատա-  
բար բարձր են մայր ցամաքի հարաւային կողմում ընկնող  
լեռները. դրանք են՝ Կապոյտ լեռները և Աստրալիական Ալպերը<sup>1)</sup>։  
Վերջններիս գագաթը՝ Տօնմաէնդ՝ ընդամենը մօտ 2 վերսա  
բարձրութիւն ունի.

Աւստրալիայի արևմտեան մասը ներկայացնում է բարձ-  
րաւանդակ. այդտեղ քիչ վայրերում միայն բարձրանում են  
ցածրիկ լեռներ։

Այդ բարձրաւանդակի և Աւստրալիական Ալպերի միջի  
տարածութիւնը կաթսայանման գոգաւորութիւն է, որի ամե-  
նացածր մասում գտնւում է էյր լիճը. սրա մակերեսոյթը 6  
սաժէն ցածր է ովկիանոսի մակերեսոյթից։

Աւստրալիայի կլիման տաք է։ Մայր ցամաքի համարեա  
կէսը դանւում է արևադարձային գոտում, իսկ մնացած մասը  
—բարեխառն զօտում։ Եւ որովհետեւ Աւստրալիան գտնւում է  
հարաւային կիսագնդում (իսկ մեր երկիրը՝ հիւսիսային կիսա-  
գնդում), ուստի տարւայ եղանակները այնտեղ մերինին հա-  
կառակ ժամանակ են ընկնում։ Ամենատաք ամիսներն են  
Աւստրալիայում՝ դեկտեմբեր, յունիւար և փետրւար. ամենա-  
ցուրտ ամիսները՝ յունիս, յուլիս և օգոստոս։ Ամառ ժամանակ  
Աւստրալիայում շատ շոգ է լինում. մանաւանդ շատ շոգ է լի-  
նում մայր ցամաքի միջին մասում, որտեղ համարեա այնպի-  
սի շոգեր են լինում, ինչպէս Սահարայում։ Զմեռը Աւստրա-  
լիայում մեղմ է լինում։ Սառնամանիքը այնտեղ շատ հազւա-  
դէպ բան է։ Զիւն գալիս է միայն Կապոյտ լեռների և Աւս-  
տրալիական Ալպերի գագաթների վրայ։

<sup>1)</sup> Աւստրալիական Ալպերի գագաթները ծածկւած են խոտով. բու-  
լոր գագաթներն էլ կարելի է բարձրանալ ձիով. դրանից հէնց երևում է,  
որ նրանք շատ էլ նման չեն իսկական, այսինքն Եւրոպական Ալպերին,  
որոնք ծածկւած են մշտական ձիւնով և սառցադաշտերով։

Տասմանիա կղզու կլիման մի փոքր աւելի ցուրտ է մայր ցամաքի կլիմայից. բայց այնտեղ էլ ամենացուրտ ամսին՝ (յուշ) եղանակի տաքութեան միջին աստիճանն է 8:

Մթնոլորտային տեղումներ Աւստրալիայում ընդհանրապէս քիչ են թափւում: Հաւ ոռոգւում են նրա ափերը միայն, այն էլ ոչ բոլորը, այլ միայն այն ափերը, որոնք ողողւում են տաք հոսանքներով: Անձրևներ բերում են այն քամիները, որոնք ամառ ժամանակ փչում են ծովից, երբ մայր ցամաքը աւելի է տաքացած լինում, քան նրան շրջապատող ծովը:

Ամենից շատ անձրև բերում են արևելեան քամիները: Այդ պատճառով էլ Աւստրալիայի արևելեան ծովափում ամառը այնպիսի առատ անձրևներ են գալիս, որ յաճախ հեղեղներ են գոյանում: Բայց սարերից այն կողմը կլիման չորային է, անձրևներ էլ քիչ են գալիս:



Նկ. 82. Մբնօլորտային ռեզումների բաժնումը Աւստրալիայում:—Աւարեները ցոյց են տալիս այն քամիները, որոնք ամենից շատ մթնուրուտ տեղումներ են բերում:

Քիչ կան. եղածներն էլ սակաւաջուր են: Պատճառը իհարկէ այն է, որ Աւստրալիայի կլիման չոր է: Ամենանշանաւոր գետն է՝ Մուլրէյ: Չոր ժամանակ նա ովկիանոս հաղիւ է հասնում, այն էլ իբրև փոքրիկ, նեղ գետակ: Մուլրէյը շատ վրատակներ ունի, որոնցից մէկը՝ Դարլինգ՝ համարեա երկու ան-

կենտրոնական և արևմտեան Աւստրալիայում ամբողջ տարին սարսափելի երաշտներ են լինում. թէպէտ երկնքի վրայ յաճախ ամպեր են բարձրանում, փոթորիկներ են լինում, բայց և այնպէս այնտեղ էլ անձրև շատ սակաւ է գալիս—ինչպէս Սահարայում կամ Արարիայի անսապատներում:

Աւստրալիայում գետեր են: Պատճառը իհարկէ այն է: Ամենանշանաւոր գետն է՝ Մուլրէյը հաղիւ է հասնում, այն էլ իբրև փոքրիկ, նեղ գետակ: Մուլրէյը շատ վրատակներ ունի, որոնցից մէկը՝ Դարլինգ՝ համարեա երկու ան-

գամ աւելի երկայնէ, քան ինքը Մուրբէյը, բայց չոր ժամանակ փոխուումէ բազմաթիւ չհոսող լճերի:

Աւելի սակաւաջուր են Աւստրալիայի կենտրոնի գետերը, որոնք «կրիկ» են կոչում: Նրանց տաշար տարւայ մեծ մասում մնում է չոր, միայն կարճ ժամանակով, անձրեների միջոցին, նրանցով ջուր է հոսում. այդ ջուրն էլ կորչում է կամ աւագութներում և կամ աղի լճերում: Ամենաերկայն կրիկն է Կուպեր, որ ժամանակում է Հյու լիճը:

Լճեր ևս քիչ կան Աւստրալիայում: Եղած լճերը համարեա բոլորն էլ աղի են, սրանց մէջ ջուր է լինում միայն այն ժամանակ, երբ կրիկներն են բերում: Սովորաբար այդ լճերի յատակը ծածկւած է լինում կամ տիզմով և կամ չոր աղի շերտով:

### 3. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱԲԾՔ

Աւստրալիայի այն մասերում, որտեղ շատ անձրեւ է գալիս, աճում են անտառներ, իսկ որտեղ սակաւ անձրեւ է գալիս՝ այնտեղ տարածւում են տափաստաններ և անապատներ:


Հիւսիսային, մասամբ նաև արևելեան ծովափում աճում են արևադարձային անտառներ: Այդ անտառները բաղկացած են գլխաւորապէս արմաւենիներից, որոնք խճճւած են լիանոսներով: Արևադարձից հարաւ, Մեծ ովկիանոսի ափերին, աճում են մերձարևադարձային մշտադարձ անտառներ: Այդ անտառները խիտ չեն, ոչ էլ խճճւած են լիանոսներով: բաղկացած են գլխաւորապէս էւկալիպտներից: Այս ծառերի տեսակներից մի քանիսը ահազին բարձրութեան են հասնում (մինչև 70 սաժ.): Բայց ընդհանրապէս՝ էւկալիպտների անտառները աւելի բարձր չեն, քան մայրի և կաղնի ծառերի անտառները մեզնում:

Այդ անտառներում քիչ ստւեր է լինում, որովհետեւ էւկալիպտները նօսր են և նրանց տերեները խիտ չեն. տերեները լինում են ծառի միայն վերին ճիւղերի վրայ, այն էլ յաճախ դէպի վերեւուած: Արեգակի ճառագայթները թափանցում են մինչև գետին, որ խոտով է ծածկւած լինում: Այդ անտառները նման են պարկերի կամ ծառոտ մարգագետինների, որոնցով կառք կարող է երթալ:

Դետակների ավերին,  
Էւկալիպտների անտառ-  
ների մէջ, պատահում են  
ծառանման ձարխոտերի  
թփուաներ։

Մեծ ովկիանոսից ա-  
ւելի ու աւելի հեռանա-  
լով՝ էւկալիպտների ան-  
տառները սակաւանում  
են և վերջապէս փոխ-  
ում են խոտով ծած-  
կւած տափաստան-  
ների։ Աւելի հեռու ա-  
րևմուտքում, կուպեր կր-  
րիկից այն կողմը, Աւս-  
տրալիայի ընդարձակ  
տարածութիւններ ծած-  
կւած են խոտով և  
թփերով։


Աւստրալիայի ամենա-  
չոր տեղերում գտնուում  
են քարքարոտ կամ ա-  
ւազոտ անապատներ։ Մշակովի բոյսեր Աւստրալիայում  
շատ քիչ կան, իսկ մինչեւ եւրոպացիների այստեղ գաղթելը  
ամենենին չկային։



Ֆ. 83. Էւկալիպտներ։



Ֆ. 84. Աւստրալիական օքանի կենդանիներ։



Նկ. 85. Աւստրալ. օրջանի կենդանիներ:

թռչունների նման՝ նրանք ձու են ածում, սակայն ձուից դուրս եկած ձագուկներին նրանք կաթով են կերակրում:

Աւստրալիայի անտառներում և տափաստաններում ապրում են շատ թռչուններ, մանաւանդ թռթակներ, որոնք մի քանի հազարից բաղկացած երամներով են թռչում: Արևա-

Մնացած կենդանիները նշանաւոր են եւ խիստ կաթակներ: Գիշակերներից կար սիայն գին գոշունը: Ընդհանրապէս՝ Աւստրալիայում չկային այն կենդանիներից շատերը, որոնք կան ամեն տեղ՝ միւս աշխարհամասերում: Բայց դրա փոխարէն Աւստրալիայում շատ են տարածւած պարկաւոր կենդանիները: Այսպէս կոչւում են նրանք այն պատճառով, որովհետեւ փորի տակ պարկ ունեն, որի մէջ իրենց ձագերին են պահում: Ամենատարածւած պարկաւոր կենդանին է՝ կեն գուրուն, որ մի քանի տասննեակտեսակների է բաժանում:

դարձային անտառներում յաճախ պատահում է գեղեցիկ քնարահաւը, տափաստաններում՝ էմու ջայլամբ։ Ընտանի կենդանիներ մինչև եւրոպացիների գաղթելը չկային Աւստրալիայում։ Եւրոպացիները այնտեղ բերին իրենց բոլոր ընտանի կենդանիներից, որոնցից ներկայումս Աւստրալիայում շատ կան, — մանաւանդ ոչխար, եղջիւրաւոր խոշոր կենդանիներ և ձի։

#### 4. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Աւստրալիան ունի ընդամենը 5 միլիոն բնակիչ։

Համեմատաբար խիտ բնակութիւն ունի միայն արևելքան մասը, որ յարմար է երկրագործութեան և անապահութեան համար։ Այստեղ է ապրում Աւստրալիայի ամբողջ ազգաբնակութեան  $\frac{4}{5}$  մասը. չոր տափաստանները անմարզաբնակ են համարեա այնպէս, ինչպէս անապատները։

Ազգաբնակութեան ամենամեծ մասը պատկանում է սպիտակ ցեղին և քաղկացած է եւրոպացի գաղթականներից, (գլխաւորապէս անդվացիներից)։ Դրանք տիրել են ամբողջ Աւստրալիային և ապրում են գլխաւորապէս նրա ամենաբերրի մասերում։

Իսկ Աւստրալիայի բնիկները կամ առատքալի ացիները — սկսած ցեղին պատկանող վայրենիներ — կամ ոչնչացւել են, և կամ քշւել են դէպի ամենաամայի վայրերը։ Ներկայումս սկսած աւստրալիացիների թիւը հաշւում են մոտ 60 հազար։ (200,000)




Կանգառ։

Կանգառ։



Նկ. 87. Քնարահանք:



Նկ. 88. Ան աւտորադիացի:

**5. ԱՀՍՏՐԱԼԻԱԿԱՆ  
ԳԱՂԱԽԹՆԵՐԸ**

Աստրալիա մայր ցամաքի վրայ գտնուում են անզլիական 5 գաղութներ. դրանք են՝ Վիկտորիա, Նոր Հարավային Ուէլս, Քվինսլենդ, Հարավային Աստրալիա (հիւսիսային երկրամասը հետը) և Արեամանեան Աստրալիա։ Տասմանիայի հետ միասին՝ այս գաղութները կազմում են «Աւստրալիակացութիւն»։ Թէպէտ երկրի կառավարութեան գլուխն է անզլիական բնդհանուր նահանգապալետը, բայց

իրօք դաշնակցութիւնը համարեա անկախ է և կառավարուում է իր երկրի ժողովրդական ներկայացուցիչների (ընդհանուր պարլամենտ) միջոցով հրատարակւող օրէնքներով։

Դրա հետ միաժամանակ՝ ամեն մի գաղութ ունի—ինչպէս Հիւս. Ամեր. Մ.-Նահանգներում—իր առանձին կառավարութիւնը, իր օրէնքները և նահանգապետը, որ նշանակվում է Անդլիայի թագաւորի կողմից։

Ամենից շատ բնակիչներ ունի ամենափոքր գաղութը — Վիկտորիան,


ապա՝ Նոր Հար. Ուէլսը և Քվինսլենդը: Այդ գաղութներում ամենից շատ զարգացած են՝ երկրագործութիւնը, անասնապահութիւնը և հանքագործութիւնը: Այստեղ շատ լաւ աճում են ցորեն և եղիածացուրեն, արածում են ահազին հօտերով՝ ոչխար, եղջիւրաւոր կենդանիներ և ձիեր:

Աւստրալիական շատ անասնապահներ (սկվատատերներ) ունեն տասնեակենոյն իսկ հարիւրաւոր հազարներով անասուններ: Այդպիսի անասնապահների ազարակները կարծէք ամբողջ զիւղեր լինեն: Բացի բնակութեան համար յատկացըրած աներից՝ այդտեղ կան նաև մեծ շէնքեր բուրդ, կաշի և նման բաներ պահելու համար: Ետո ազարակների մօտ փորւած են արտէզիան ջրեր ու որութեամբ առաջանաւ են ոռվորաբար կիսավայրենի աւտրալիացիները:

Աւստրալիայի սահերը հարուստ են ու սկսվ, որի արտադրութեամբ աւստրալիական գաղութները



Ալ. 89. Աւստ. և Անգ. համեմատ. մեծութ:



Ալ. 90. Արտկեմով ջրհոր:

մըցում են նոյն իսկ Միացեալ-Նահանգների հետ։ Բացի ոսկուց՝ այստեղ գտնվում են նաև շատ արծաթ և քարածուխ։

Գործարակութիւնների մեծ մասը Եւրոպայից ու Ամերիկայից է բերում այդտեղի Բայց զրա փոխարէն՝ Աւստրալիայի առևտուրը մեծ է։ Արտահանուում են՝ ոսկի, բուրդ, մորթիներ, ցորեն, միս, խող, նաև ձիեր և այլ անասուններ։



Կա. 91. Փողոց Մելբուրն Քաղաքում։

Աւստրալիայի գաղթականները ձեռնարկող ոգի ունեն, կը թւած ժողովուրդ են։ Նրանք անց են կացրել Աւստրալիայի արևելեան մասում բազմաթիւ երկաթու-

ղային գծեր,

չոր վայրերում շինել են ջրամբարներ, արտէզեան ջրհորներ և արւեստական ճանապարհով ոռոգել են երկիրը։ Իրենց կրթութեամբ նրանք մի փոքր միայն յետ են մնում ամերիկացիներից, — ունեն բազմաթիւ և բազմատեսակ գպրոցներ, հրատարակում են բազմաթիւ գրքեր, լրագիրներ և հանդէսներ։


Աւստրալիայի ամենամեծ քաղաքները և նշանաւոր նաւահանգիստներն են։ — Մելբուրն, Վիկտորիայում (500,000 բնակիչ), Սիդնէյ՝ Նոր Հար. Պլէյսում (500,000 բնակիչ) և Պորտ-Աղելայիղա՝ Հար. Աւստրալիայում (160,000 բնակիչ). Այդ երեք քաղաքներում, նաև Տասմանիայի Հոբարտ քաղաքում, կան համալսարաններ։

Աւստրալիայի բնիկները կամ ու եւ աւստրալիացիները ունեն սև, ալիքանման մազեր։ Խիտ մազով է ծածկւած ոչ միայն նրանց գլուխը, այլ և ամբողջ մարմինը։ Նրանց միրուքն էլ շատ խիտ է լինում։ Կաշու գոյնը մոյզ-շագանակագոյն է, համարեա սև։ Աւստրալիացիների ձեռները և ոտները թոյլ են, նրանց տեսողութիւնը և լսողութիւնը՝ շատ սուբր. Իրենց մտաւոր զարգացմամբ աւստրալիացիները

շատ ցածր են նեղքերից: Աւստրալիացիները երկրագնդի ամենավայրինի ժողովուրդներից են: Կրակ ձեռք բերելու համար նրանք վերցնում են երկու կտոր չոր փայտ և շփում իրար այնչափ, մինչև որ կրակ դուրս գայ:

Ու աւստրալիացիները  
մեծ մասով մինչեւ օրս էլ անց  
են կացնում թափառաշրջիկ որ-  
սորգների կեանք՝ արևադարձ-  
յին անտառներում կենցուրու և  
ուրիշ որս փնտրելով. Ցանախ որս  
չգտնելով՝ նրանք ուտում են սո-  
զուները, օձեր և այլն. Երբեմն ու-  
տում են նոյնիսկ մարդու դիակ: Ապրում են քարայրերում կամ  
ծառի ճիւղերից շինած վրան-  
ներում: Վայրենիների թիւը Աւս-  
տրալիայում հետզհետէ պակա-  
սում է,—մասամբ այն պատճառով, որ նրանց աւելի ու աւելի են ճըն-  
շում ապիտակները, մասամբ էլ նրա համար, որ նրանց մէջ գոյսութիւնն  
ունի մանկասպանութեան սովորութիւնը.—Թափառաշրջիկ կեանք վա-  
րելով՝ նրանց համար դժւար է երեխաներին հետները տանել տեղից-  
տեղ, ուստի և յաճախ սպանում են նրանց:

Համարեա բոլոր ու աւստրալիացիները կռապաշտ են:



Կա. 92. Թուս. աւրած. Աւստրալիայում:  
Արեգովանեա Թափառաշրջիկ Վազապատներ  
Բնապատներ Վազապատներ

## ԸՆՍՏՐԱԼԻԵՅԻ ԿՊ.ԶԻՆԵՐԸ

### 1. Բ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Աւստրալիային են պատկանում բազմաթիւ կղզիներ. Նրանք բոլորը միասին առած կոչում են Ովկիանիա:

Այդ կղզիներից քչերը միայն գտնում են մայր ցամաքին մօտ, մեծամասնութիւնը ցըւած է մայր ցամաքից շատ հեռու։ Մեծ ովկիանոսի մէջ. ուստի և այդ կղզիների բնութիւնը շատ է տարբերում մայր ցամաքի բնութիւնից: Կղզիները ընկած են խում-խում: Նրանց մեծ մասը ձգւած է հիւսիս-արևմուտքից հարաւարենելք: Նրանցից շատերի վրայ գտնուում են հանգած և գործող հրաբուխներ: Աւստրալիայի բոլոր կղզիները բաժանում են երեք խմբի. 1) Մելանեզիա, որ բաղկացած է

ցամաքային կղզիներից և ընկնում է Աւտորալիայի հիւսիս-արևելեան կողմում. այդ կղզիներն են—Նոր-Գվինէա, Բիսմար-կի արշխալելագ, Սողոմոնի կղզիներ, Նոր-Հերթիդեան, Նոր-Կալէգոնիա և Ֆիջի.—2) Նոր-Զելանդիա, որ բաղկացած է երկու մեծ կղզիներից, և 3) Պոլինեզիա. այսպէս են կոչւում մնացած բազմաթիւ կղզիները:

Ամենամեծ կղզիներն են այդ բոլորի թւում՝ Նոր-Գվինէան (իր մեծութեամբ երկրորդ կղզին երկրագնդի վրայ), Նոր Զելանդիան և Նոր-Կալէգոնիան։ Մնացած կղզիները շատ փոքր են և տասնեակներով կամ հարիւրներով միասին կղզիների մի խումբ են կազմում։

Աւտորալիայի կղզիների մեծամանութիւնը կորալլական ծագումում ունի. օրինակ՝ Կարոլինեան, Մարշալեան և այլ կղզիներ։

Հրաբխային ծագում ունեն օր. Պոլինեզիայի հետեւեալ կղզիները—Հաւայի (կամ Սանդվիչեան), Բնկերութեան, Սամօա, նաև Նոր-Զելանդիայի հիւս. մեծ կղզին։

Նոր-Զելանդիայի հարաւային կղզին, նաև Նոր-Կալէգոնիան, Նոր-Գվինէան և Մելանեզիայի շատ կղզիներ ցամաքային ծագում ունեն։ Հնում նրանք հաւանօրէն Աւտորալիայի հետ միացած են եղել։ Այդ կղզիների վրայ գտնուում են բարձր լեռնաշղթաներ։ Նոր-Զելանդիայում այդ սարերը ծածկւած են մշտական ձիւնով և սառցարաններով ու կոչւում են Հարաւային Ալպեր (նրանց գագաթը՝ Կոմլ սարը մօտ  $3\frac{1}{2}$  վերստ բարձրութիւն ունի)։

Ովկիանիայի կլիման համարեա ամեն տեղ արեւադարձային է, բայց ոչ շոգ, որովհետեւ հսկայական ովկիանոսը զովացնում է օդը։ Ովկիանիայի գլխաւոր քամիներն են՝ պասսատները, որոնք ամբողջ տարին անընդհատ փչում են։ Նրանք շատ մեծ քանակութեամբ մթնոլորտային տեղումներ չեն բերում, բայց բերածն էլ բաւականաչափ է։

Բուսական և կենդանական աշխարհները Ովկիանիայի արևմուտքում բաւական հարուստ են, բայց քանի արեւելք ենք գնում, այնքան էլ նրանք աղքատանում են։ Նոր Գվինէայի

վրայ աճում են արևադարձային անտառներ, և ապրում են շատ կենդանիներ, մանսաւանդ պարկաւորներ և բազմազան թռչուններ։ Նոր Զելանդիան ծածկւած է մերձարեւադարձային մըշտագալար անտառներով, բայց կենդանիներ քիչ կան այնտեղ Ովկիանոսի մէջ ցրիւ ընկած կղզիների վրայ վայրի աճող բոյսեր համարեա չկան, կենդանական աշխարհն էլ չափազանց աղքատ է։

Մշակովի բոյսերով բաւական հարուստ է Ովկիանիան, այդտեղ է կոկոսեան արմաւենու հայրենիքը, որ մինչև այժմ էլ տեղատեղ աճում է վայրի զրութեան մէջ։

Քնտանի կենդանիներից, մինչև եւրոպացիների գաղթելը, Ովկիանիայի բնակիչներին ծառայում էին միմիայն հաւր, շունը և խոզը, այն էլ ոչ բոլոր կղզիների վրայ։ Եւրոպացիները Ովկիանիա փոխադրեցին իրենց ընտանի բոլոր կենդանիներից, առանձնապէս շատ կան ընտանի կենդանիներ Նոր Զելանդիայի արօտատեղիներում։

### 7. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Ովկիանիայի ազգաբնակութիւնը բաղկացած է երեք՝ սկզբանին, և սպատկանում՝ աւստրալիացիներին ցեղին պատկանում է կամ մելանեզիացիները, նրանք ապրում են՝ Մելանեզիա ընդհանուր անւամբ կոչւած—Նոր Գվինէա, Բիսմարկի արշիպելագ, Սողոմոնի, Կալէդոնիայի և ուրիշ կղզիներում։ Դեղին ցեղին պատկանում են մալայցիներին ցեղակից պոլինեզիացիներին որոնք ապրում են Ընկերութեան և ովկիանոսում ցրւած ուրիշ մանր կղզիներում։ Սպիտակ ցեղին պատկանում են Եւրոպայից գաղթած-



նկ. 93. Պուպուան։

**Ները:** Սրանք իրենց ձեռքն են զցել ամբողջ Ովկիանիան, քայց ազգաբնակութեան խոշոր տարր կազմում են նրանք միայն նոր Զելանդիայում: Իրենց կենցաղավարութեամբ պապուանները և պոլինեզիացիները համարեա ոչնչով չեն տարբերում իրարից: Նրանց գլխաւոր զբաղմունքն է երկրագործութիւնը, մշակում են կոկոսի արմաւենի, հացի ծառ և զանազան արմատիք: Մեծ նշանակութիւն ունի նրանց համար գեռ ևս ձկնորսութիւնը: Մեծ Ովկիանոսը հարուստ է ձկնով, ծովային խեցգետիններով, կրիայով և այլն. այս բոլորից կղզիների բնակիչները շատ են որսում: Նրանք շնորհալի ծովագնացներ են և իրենց նաւակներով յաճախ հեռաւոր տեղեր են գնում:

Հաւայի կղզիների վրայ, ուր շատ շինացիներ և եապոնացիներ կան գաղթած, դաշտերը ծածկւած են բրնձի և շաքարեղէզի տնկարաններով:

Նոր Զելանդիայում եւրոպացի գաղթականների գլխաւոր զբաղմունքները նոյնն են, ինչ որ մայր ցամաքի վրայ.—անամսապահութիւն, երկրագործութիւն և հանքագործութիւն: Նոր Զելանդիայի արօտատեղիներում արածում են շատ միլիոններով ոչխար և եղջիւրաւոր խոշոր կենդանիներ: Դաշտերում շատ լաւ աճում են ցորեն և եղիպտացորեն: Սարերում զըտնւում են շատ ոսկի և քարածուխ:

Ովկիանիայի բոլոր գաղութների մէջ ամենանշանաւորը Նոր Զելանդիան է: 100 տարի առաջ այստեղ ապրում էին մարդակերներ, իսկ այժմ նրանց տեղում ապրում են կրթւած և աշխատասէր մարդիկ (թւով մօտ 800 հազար), որոնք շատ քանում ամերիկացիներին են նման (ծագումով նրանք ևս, զիսաւորապէս, անզիփացիներ են): Ամբողջ Նոր Զելանդիան ծածկւած է այժմ երկաթուղային ճանապարհների ցանցով. նրա ափերի երկայնութեամբ երթևեկում են քաղմաթիւ շոգենաւեր: Կղզու ափերին շինւել են քաղաքներ, որոնց մէջ նշանաւոր է Ռէյլինզտոն, որ գտնում է Նոր Զելանդիայի հիւս. կղու վրայ: Թէպէտ Նոր Զելանդիան անգլիացիներին է պատկանում, քայց նա համարեա անկախ է, կառավարում է իր սեփական պարլամենտով, որտեղ ժողովրդից ընտրւած ներկայացուցիչ-

Ները օրէնքներ են մշակում և հրատարակում իրենց երկրի համար:

Տեղացի բնակիչները, որ մասօրի են կոչւում, այժմ քիչ են թւով—մոտ 40 հազար: Նրանք մալայեան ցեղին են պատկանում և ընդունակ ժողովուրդ են: Նրանք բոլորն էլ բողոքական-քրիստոնեաներ են և ունեն նոյն իրաւոնքները, ինչ եւրոպացի գաղթականները: Նրանց կենցաղավարութիւնը համարեա նոյնն է, ինչ սպիտակներինը:

Նոր-Գվինէա ընդարձակ կղզին համարեա ոչ մի նշանակութիւն չունի եւրոպացիների համար: Գաղթականութիւններ հաստատելու համար նա անպէտք է, որովհետեւ վատառողջ կլիմայ ունի, առևտորի համար էլ այդ կղզին կարեոր նշանակութիւն չունի, որովհետեւ այդտեղ բնակւող պապուամները աղքատ են:

Չնայելով այս բանին՝ կղզին բաժանւած է եւրոպական երեք տէրութիւնների մէջ.—Նրա արևմտեան մասը պատկանում է Հոլանդիային, հարաւ-արևելեան մասը՝ Անգլիային, Վիլհելմ կայսեր երկիրը (հարևան Բիսմարկի-արշխափելագի հետ) Գերմանիային:

Նոր-Կալիդոնիան ունի աւելի զով և միանգամայն առողջարար կլիմայ. բացի գրանից՝ նրա հարուստ է մետաղներով, մանաւանդ նիկելով: Այս կղզին պատկանում է ֆրանսիացիներին և նրանց համար ծառայում է իրք աքսորավայրութիւնը, որոնք պատկանում են Հիւս.

Մնացած կղզիներից աւելի նշանաւոր են՝ Հայայի կղզիները, որոնք պատկանում են Հիւս. Ամ. Միացեալ նահանգներին: Այդ կղզիների վրայ արդիւնաբերւում է շատ շաքար: Հոնորութիւն գլխաւոր նաւահանգիստը ծառայում է իրք հանգստատեղի՝ Հիւս. Ամերիկայից Ասիա և Աւստրալիա կամ ընդհակառակը գնացող նաւերի համար:

---

Ատլանտեան և Հնդկական ովկիանոսների հարաւային մասերում ևս ցըւած են առանձնացած փոքրիկ կղզիներ: Այս կղզիները համարեա բոլորն էլ հրաբխային ծագում ունեն, ան-

բնակ են, միայն ձկնորսներ են գնում այդ կղզիները՝ կետ ձուլ բռնելու համար։ Աւելի ևս հեռու, հարաւային թեսային շրջանակից այն կողմը, տարածում է մի ընդարձակ ցամաք։ Դա չարասային թեմոռային մայր ցամաքն է։ Այս մայր ցամաքը ուսումնասիրելը շատ դժւար է, որովհետև նրա ափերը ուղղաձիգ են, յաճախ նման են բարձր, ուղղահայեաց սասցէ պատնէշների։ Այս սառցէ պատնէշները կազմում են վերջաւորութիւնը այն հակայական սառցակոյտերի, որոնցով ծածկւած է այդ ամբողջ երկիրը, այնպէս, ինչպէս Գրենլանդիան։

## ՈՒՂՂԵԼԻՔ

Երես	Մող	Մազած է	Ալիտի լինի
11	4 (ներքեկից)	Չիլիսկին	Չելիսկին
15	9 (ն.)	Եանցէզեան	Եանցէձեան
20	10 (վերևից)	Թանդադինսկը	Թանդադինսկը
23	8 (ն.)	Կիրդիզներ	Կիրդիզներ
24	14 (վ.)	ազգարնակութեան	ազգարնակութեան
34	9 (ն.)	անգլիական	անգլիական
37	9 (վ.)	բնակութիւն	բնակութիւն
43	2 (ն.)	կամ	և
47	2, 4 (վ.)	բաղդհայական	բուղդհայական
»	13 (ն.)	տրշաւանքներ	արշաւանքներ
48	10 (վ.)	ծին	անծրեւ
60	—	նկարը հակառակ դիրքով է տպւած	
82	10 (վ.)	ցուրտ	ցուրտ.
99	16 (վ.)	«նեղուս»	«նեղուս»:
102	20 (վ.)	չոր	չար
125	3 (ն.)	ժողովուրդ	ժողովուրդ
141	4 (վ.)	տնամնապահութեան	անամնապահութեան
74	18(1)		
156.	13(7)		





